ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Աղասի
Թադևոսյան

# Պատերազմը մասնակիցների պատմություններում. մարդաբանական հետազոտություն

ԵՀՀ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Շվեդիա
Sverige

ԵՎՐԱՍԻԱ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# Պատերազմը մասնակիցների պատմություններում.

# մարդաբանական հետազոտություն

Երևան
2022

Ծրագիրն իրականացվում է  Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կողմից «Աջակցություն քաղաքացիական հասարակությանը՝ հանուն բարեփոխումների վրա ներգործության» ծրագրի շրջանակում: Նյութի բովանդակության համար պատասխանատու է միայն ստեղծողը: Հետազոտությունում արտահայտված տեսակետները կարող են չհամընկել Շվեդիայի կառավարության տեսակետների հետ:
«Աջակցություն քաղաքացիական հասարակությանը՝ հանուն բարեփոխումների վրա ներգործության» ծրագիրն իրականացվում է Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կողմից Շվեդիայի կառավարության աջակցությամբ:

ՀՏԴ 572.028:94(479.25)
ԳՄԴ 60.5+63.3(5Հ)
Թ 141

Թադևոսյան Աղասի
Թ 141 Պատերազմը մասնակիցների պատմություններում. մարդաբանական հետազոտություն / Աղասի Թադևոսյան.- Եր.: Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2022.-142 էջ:

Խմբագրումը և սրբագրումը՝ Անժելա Ավագյանի
Շապիկի ձևավորումը և էջադրումը՝ Էդիկ Պողոսյանի

Աշխատանքը երաշխավորված է հրատարակության ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի կողմից:

Հետազոտությունը նվիրված է Արցախյան 44-օրյա պատերազմի նկարագրությանը՝ մշակութային մարդաբանության տեսանկյունից: Դրա հիմքում ընկած են պատերազմի մասնակիցների բանավոր պատմությունները, որոնց միջոցով ներկայացվում է պատերազմի նկարագրությունը մասնակիցների տեսանկյունից, պատերազմի ապրումը, վախերը, բարոյական ընկալումներն ու հետևանքներն այն ապրած մարդու վրա: Գիրքը նախատեսված է հասարակական և հումանիտար ոլորտների մասնագետների և, ընդհանրապես, խնդրով հետաքրքրված ընթերցողի համար:

ՀՏԴ 572.028:94(479.25)
ԳՄԴ 60.5+63.3(5Հ)

ԵՀՀ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Սույն մարդաբանական հետազոտությունը «ԵՀՀ համալսարան» խորագրի ներքո հրապարակվող ձեռնարկների շարքից է՝ Պատերազմ և խաղաղություն (ՊԽ) թեմայով: Հետազոտությունն ընդգրկում է պատերազմի մասնակիցների բանավոր պատմությունները:

**Քննադատական մտածողություն (ՔՄ)**

**Պատերազմ և խաղաղություն (ՊԽ)**

**Քաղաքացիական հասարակություն (ՔՀ)**

**Կրթություն, պատմության մեթոդաբանություն, մշակույթ և արժեքներ (ԿՊՄՄԱ)**

ISBN 978-9939-896-54-0
© Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2022

## Բովանդակություն

Խոսք երախտիքի ........................................ 5
Ներածություն ........................................ 7

**Գլուխ 1. Պատերազմի նկարագրությունը մասնակիցների պատմություններում** ........................................ 13
Պատերազմի անսպասելիությունն ու բանակի անպատրաստությունը ........................................ 13
Հայկական զորքերի անկազմակերպվածության դրսևորումները ........................................ 18
1.1. Տեխնոլոգիան և մարդը պատերազմում ........................................ 23
1.2. Պատերազմի ինտենսիվության գործոնը ........................................ 25
1.3. Պատերազմի տարբեր իրականությունները ........................................ 30

**Գլուխ 2. Մասնակիցների ինքնանկարագրությունը բանավոր պատմություններում** ........................................ 32
2.1. Զենքի և զինտեխնիկայի նկարագրությունը պատերազմի մասնակիցների պատմություններում ........................................ 34
2.2. Զորքի նկարագիրը բանավոր պատմությունների միջոցով ........................................ 38
2.3. Գործողությունների և վարքագծային պրակտիկաների նկարագրությունը ........................................ 51

**Գլուխ 3. Պատերազմի ապրումը և բարոյականությունը** ........................................ 66
3.1 Վախ. պատերազմի հիմնական ապրումը ........................................ 67
3.2. Հերոսություն. մահվան վախի հաղթահարման ճանապարհը ........................................ 79
3.3. Դավաճանության պատումները պատերազմում և դրա գործիքավորման փորձերը պատերազմին հաջորդած շրջանում ........................................ 88
3.4. Պատերազմի ազդեցությունը հայրենասիրության ընկալումների վրա և արժեքների վերանայման խնդիրը ........................................ 95
3.5. Արժեքների վերանայման խնդիրը ........................................ 102

Եզրակացություններ ........................................ 107
Օգտագործված գրականության ցանկ ........................................ 117
The 44-day war in the stories of participants ........................................ 125
Համառոտագիր ........................................ 133
Abstract ........................................ 134
«ԵՀՀ համալսարան» խորագրի ներքո հրապարակված այլ նյութեր ........................................ 135
Publications under the “EPF university” heading ........................................ 137

## Խոսք երախտիքի

Այս աշխատանքը հնարավոր չէր լինի իրականացնել, եթե չլիներ Եվրասիա համագործակցություն հիմնադրամի աջակցությունը: Առանձնակի շնորհակալություն եմ հայտնում հիմնադրամի տնօրեն, արձակագիր Գևորգ Տեր-Գաբրիելյանին, ում հետ նախնական քննարկումները չափազանց օգտակար եղան հետազոտության գաղափարն ամբողջացնելու համար: Հատուկ շնորհակալություն եմ հայտնում նաև ԵՀՀ աշխատակից, նախագծի ղեկավար Ջուլյա Սահակյանին՝ հետազոտության իրականացման ամբողջ ընթացքում ցուցաբերած աջակցության և հոգատար վերաբերմունքի համար: Վերլուծության տեքստի խմբագրման, սրբագրման և ամփոփիչ դիագրամների մշակման գործում կարևոր ներդրում է ունեցել ԵՀՀ ծրագրի օգնական Մելինե Ավագյանը: Աշխատանքը իրականացնելուն մեծ աջակցություն է ցուցաբերել ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտը՝ հանձինս տնօրեն Պավել Ավետիսյանի և ազգագրության բաժնի վարիչ Սուրեն Հոբոսյանի:
Խորին շնորհակալությունս եմ հայտնում նաև մշակութային մարդաբան, ազգագրագետ Գայանե Շագոյանին՝ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի մեթոդաբանական սեմինարներում հետազոտության արդյունքների շուրջ քննարկում կազմակերպելու և արժեքավոր նկատառումներ ներկայացնելու համար: Աշխատանքը իրականացնելու գործում մեծ ներդրում ունեն հետազոտողներ Աշխեն Հակոբյանը, Հրայր Ջոհրաբյանը, Դիանա Հովհաննիսյանը, Մարգարիտ Հարությունյանը, Էլեն Սահակյանը և Ժենյա Եղիկյանը, որոնք մեծ դեր են կատարել բանասացների ներգրավման և բանավոր պատմությունների գրանցման աշխատանքներում:

# Ներածություն

Սոցիալ-մշակութային մարդաբանությունը պատերազմին նվիրված ուսումնասիրությունների միջոցով փորձել է հասկանալ՝ արդյոք պատերազմը բնությունից մարդուն բնորոշ մի բա՞ն է, թե՞ ունի մշակութային բնույթ[1]: Այն, որ բնության մեջ կենսաբանական շատ տեսակներ դրսևորում են սեփական տարածք ունենալու և այն պաշտպանելու վարքագիծ՝ հայտնի է, բայց խիստ հազվադեպ են այդ խնդիրը կոլեկտիվ սպանության իրագործման եղանակով լուծելու դեպքերը: Ըստ որոշ հետազոտական դիտարկումների՝ հնագիտական նյութերը հիմք են տալիս ասելու, որ խմբային սպանությունները ի հայտ են եկել համեմատաբար ավելի ուշ ժամանակաշրջանում և, հավանաբար, կապվում են մշակութային ինքնությունների և դրա հիման վրա քաղաքական կազմակերպությունների ձևավորման հետ[2]: Անկախ պատերազմի պատմական ակունքների ուսումնասիրությունից՝ հայտնի է, որ պատերազմները բնորոշ են հատկապես մարդկային ներկա քաղաքակրթությանը, որի ծագումը կապվում է երկրագործության, վաղ պետական միավորումների և քաղաքային տիպի առաջին բնակավայրերի ձևավորման ժամանակաշրջանի հետ[3]: Այսինքն՝ ակնհայտ է, որ այն կապվում է իշխանության և քաղաքական համակարգերի ձևավորման այն տիպի հետ, որը վերարտադրվում է ուժի կիրառմամբ հարստության և այդ հարստությունը անընդհատ մեծացնելուն ուղղված ռեսուրսների ձեռքբերման հետ:

Պատերազմը մարդկային գործունեության ամենածայրահեղական դրսևորումներից մեկն է, և դրա ծայրահեղականությունն այն է, որ մարդը իմաստավորված ու հիմնավորված կերպով սպանում է մեկ

---

1 Ferguson, R. Brian. 2018. “Why We Fight”. Scientific American 319, 3: 76–81; Fry, P. Douglas. 2007. Beyond War: The Human Potential for Peace. Oxford University Press. Pp. 33–50.

2 Ferguson, R. Brian. 2006 “Tribal, ‘Ethnic,’ and Global Wars.” The Psychology of Resolving Global Conflicts: From War to Peace. Vol. 1: Nature vs. Nurture, ed. M. Fitzduff and C. Stout. Westport, CT: Praeger Security International. Pp. 41–69; Fry, P. Douglas. Beyond War: The Human Potential for Peace. Pp. 65–81.

3 Ferguson, R. Brian. Why We Fight. P. 81.

ուրիշին: Այդ ուրիշը պատերազմի ժամանակ սահմանվում է որպես թշնամի: Եվ այդ ուրիշը ոչ թե մեկ մարդ է, այլ՝ շատերը: Սպանությունը պատերազմի ժամանակ ոչ միայն չի դատապարտվում, այլև խրախուսվում ու հերոսականացվում է: Դրա պատճառներից մեկն այն է, որ անկախ պատերազմի հիմքում ընկած շահերից՝ այն մեկնաբանվում ու կառուցարկվում է ինքնության համատեքստում: Այսինքն՝ պատերազմն առաջին հերթին սեփական ինքնության պահպանման կամ զարգացման խնդիր է լուծում: Այդ պատճառով պատերազմն արդարացվում է մեծ գաղափարներով և թաքցնում մարդասպանությունը բարձր գաղափարների ներքո: Հետաքրքիր է, որ պատերազմը նաև դառնում է ինքնության ձևավորման առասպելներին բնորոշ մի բան, և որոշ ինքնություններ իրենց ծագումը կապում են հենց պատերազմի հետ: Այսինքն՝ պատերազմը մեկնաբանվում է որպես մշակութաստեղծ ու հայրենիքաստեղծ մի երևույթ: Այս տեսանկյունից այն բնորոշ է նաև հայկական ինքնությանը, որը կերտվում է ազատագրական պայքարի գաղափարի վրա, երբ հայերի նահապետ Հայկը ըմբոստանում է աշխարհակալ Բելի դեմ, իր ընտանիքով հեռանում է նրա տարածքից, հաստատվում հայկական լեռնաշխարհում և, զինված պայքարի միջոցով դիմակայելով Բելի սանձազերծած պատերազմին, հաղթում նրան ու ձևավորում իր ազգությունն ու հայրենիքը: Հետաքրքիր է, որ հայ ժողովրդի կյանքում պատերազմը, որպես ինքնության կերտման կարևոր ու առանցքային հատկանիշ, ուղեկցում է ազգային ինքնությունը կառուցող նարատիվներին: Ինքնապաշտպանական պատերազմը որպես ստեղծարար գործոն է դիտվում ոչ միայն ազգաստեղծման նարատիվում, այլև՝ կրոնական ինքնության: Ուշագրավ է, որ այստեղ, չնայած ֆիզիկապես պարտություն կրելուն ու պետականությունը վերահաստատելու հնարավորությունը տանուլ տալուն, կարևորվում է հենց կրոնական ինքնությունը պահպանելը և այդ արդյունքը որպես բարոյական հաղթանակ բնութագրելը: Այսինքն՝ եթե սա փորձենք մեկնաբանել պատերազմի մարդաբանության եզրաբանությամբ, ապա չնայած թշնամուն հաջողվեց հաղթել հայերին ֆիզիկապես, նույնիսկ խափանել պետականության հաստատման ձգտումն ու զրկել նրանց պետությունից, կարևոր է համարվում ազգի կրոնաբարոյական աշխարհի ամբողջականության պահպանումը, ինչում, որպես գործոն, կարևորվում է կրոնական ինքնության գաղափարի շուրջ միասնականությունն ու համախմբվածությունը: Պատահական չէ, որ հենց այդ կրոնաբարոյական

աշխարհի ամբողջականությանը չմիացած և, եկեղեցու գնահատմամբ, դրա դեմ ոտնձգություն իրականացրած անձը՝ Վասակ Սյունի իշխանը, բնութագրվում է որպես դավաճան: Հետագայում այս նարատիվը, որպես դավաճանության հիմնական բնութագրիչ, դառնում է հայկական ինքնության կարևոր տարրերից մեկը:

Պատերազմներն հաճախ առաջանում են, եթե խախտվել են սեփական կամ ուրիշի ամբողջականության մասին ունեցած պատկերացումները: Պատերազմն այն ծայրահեղ քայլերից է, որով փորձ է արվում վերականգնել սեփական ամբողջականությունը: Պատերազմի ցնցող առանձնահատկությունն այն է, որ դա կոլեկտիվ սպանության ուղղված լեգիտիմ գործողություն է[4]: Սա մարդկային վարքագծի յուրահատուկ մի ձև է, որը չափազանց շոշափելի է դարձնում կյանքի ու մահվան խնդիրը: Պատերազմը, հատկապես երբ հարձակվում են քեզ վրա, քանդում է ամեն ինչ: Կազմաքանդում է այն աշխարհը, որում մարդն ապրում է, և կազմաքանդում է նաև այն մարդուն, որն այս կամ այն կերպ անցել է պատերազմի միջով[5]: Պատերազմից հետո կենդանի մնացածները հաճախ են պնդում, որ իրենք այլևս նախկինը չեն: Պատերազմի հասցրած տրավման՝ վերքը, առաջանում է այն բանի հետևանքով, որ քանդվում է մարդու աշխարհը սկզբից՝ դրսում, իսկ հետո՝ մարդու ներսում: Պատերազմի տրավման հաղթահարվում է, եթե քանդված նախկին աշխարհի փոխարեն սկսվում է նոր աշխարհի կառուցումը[6]:

Պատերազմին տարբեր մարդիկ տարբեր դիրքերից են նայել: Այդ դիրքերի տարբերությունը առաջացրել է ընկալումների ու հետպատերազմյան դիրքավորումների տարբերություններ: Նրանց համար, ովքեր եղել են պատերազմի մեջ, պատերազմը անմիջականորեն կյանքի ու մահվան սահմանին է եղել: Նրանց համար, ովքեր կուսակցական դիրքից են նայել, պատերազմը եղել է կուսակցական շահերի բախման սահմանին: Նրանք, ովքեր երեխաներ կամ հարազատներ են ունեցել պատերազմում, բոլորովին այլ դիրքից են ապրել պատերազմի ընթացքը, իսկ նրանք, ովքեր չեն ունեցել հարազատներ, այլ դիրքից: Ինչպես նկատել են պատերազմի

---

4 Ferguson, R. Brian. Ten points of war. P. 38

5 Wool, H. Zoë. 2015. After War: The Weight of Life at Walter Reed. Durham, N.C.: Duke University. Press. Pp. 21–24.

6 Ibid.

մարդաբանության մի շարք ուսումնասիրողներ, պատերազմը ազդում է հասարակության վրա և վերափոխում այն՝ հարմարեցնելով իրեն[7]: Որոշ հասարակություններ հարմարեցվում են նրան, որ հեշտությամբ գնան պատերազմի, որոշները՝ հակառակը, հակված են դիմադրել դրան: Պատերազմի մարդաբանության մեջ խնդրի ուսումնասիրության շրջագիծը բավականին ընդգրկուն է՝ սկսած ֆիզիկական մարդաբանությունից, վերջացրած պատերազմական բանահյուսությունն ու առօրեականությունը, բարոյականության, վախի ու սոցիալ-հոգեբանական երևույթների ուսումնասիրությունը[8]:
Այս հետազոտությունը մեր իրականության մեջ պատերազմը մարդաբանորեն ուսումնասիրելու առաջին փորձն է: Հիմնական նպատակը պատերազմը մասնակիցների դիրքից ներկայացնելն է: Պատերազմի մասին պատկերացումներ կազմելու հիմնական դերը միշտ էլ եղել է քաղաքական ու մտավորական վերնախավերինը՝ մարդիկ, որոնք հիմնականում անձամբ չեն մասնակցել պատերազմին, սակայն ձևավորել են դրա վերաբերյալ դիսկուրսը: Սակայն խնդիրն այն է, որ սա չի ներկայացնում իրականության մասին այն մարդկանց հայացքը, ովքեր ներսից են տեսել պատերազմը, և ոչ միայն տեսել, այլև, բառի բուն իմաստով, *կրել դա իրենց մարմնի վրա*: Այս հետազոտությունը փորձ է՝ ուսումնասիրելու և ներկայացնելու պատերազմը մասնակիցների պատմությունների միջոցով:
Հետազոտությամբ ոչ միայն նկարագրվում է պատերազմի ընթացքը, այլև՝ դրան բնորոշ այնպիսի երևույթներ, ինչպիսիք են հերոսականության, հայրենասիրության, դավաճանության, կյանքի ու մահվան ընկալումները, թշնամու կերպարն ու սեփական կերպարի նկարագրությունը, ինքնության իմաստավորման ու վերաիմաստավորման գործում պարտության ու հաղթանակի դերակատարությունը, նոր տեխնոլոգիաների ու մարդկային անօգնականության, վախի ու սարսափի դրսևորումները, պատերազմի պատճառած փոխակերպումների ընթացքը և նման այլ հարցեր:
Ընդհանուր առմամբ, իմ նպատակն է ուսումնասիրել և հնարավորինս

---

7 Lutz, C. 2002. “Making War at Home in the United States: Militarization and the Current Crisis.” American Anthropologist, 104: pp. 723–725; Price, H. David. 2004. Threatening Anthropology: McCarthyism and the FBI’s Surveillance of Activist Anthropologists. Durham, NC: Duke University Press. Pp. 5–34.

8 Scheer M., Marchetti Ch., and R. Johler. 2010. A Time Like no Other: The Impact of the Great War on European Anthropology. Doing Anthropology in Wartime and warzones, ed. Johler Reinhard, Marchetti Christian, and Monique Scheer. Verlag, Bielfeld. P.20.

մոտենալ այն հարցի պատասխանին, թե ինչպես է անցել մարդը պատերազմի միջով, ինչ է նա տեսել պատերազմում, ինչպես է ազդել իր տեսածը նրա վրա, ինչ է փոխել պատերազմը մարդկանց մեջ, և ինչպես են մարդիկ փորձում վերագտնել ու վերաիմաստավորել իրենց կյանքը պատերազմից հետո:

Հետազոտությունն իրականացվել է բանավոր պատմությունների գրանցման մեթոդով: Իրականացվել են 60 խորացված հարցազրույցներ[9]: Դրանցից 45-ն իրականացվել է պատերազմին մասնակցած զինվորականության հետ, իսկ 15-ը՝ քաղաքացիական բնակչության: Զինվորականության հետ հարցազրույցներն ընդգրկել են ժամկետային զինծառայողների, պայմանագրային զինծառայողների, պահեստազորայինների և կամավորների խմբերը: Քաղաքացիական բնակչությունից ընտրվել են մարդիկ, որոնք այս կամ այն ձևով պատերազմը շատ մոտիկից են զգացել և նույնիսկ անցել այդ պատերազմի թոհուբոհով: Նրանց մեջ եղել են մարդիկ, որոնք տեղահանվել են, կամ եղել են սահմանակից տարածքների բնակիչներ, պատերազմի մասնակիցների ընտանիքի անդամներ: Հետազոտական նյութի տվյալներն ընդհանրացվել ու վերլուծվել են *թեմատիկ վերլուծության մեթոդով*[10]: Նախ՝ գրանցված յուրաքանչյուր հարցազրույցից դուրս են բերվել այն հիմնական թեմաները, որոնք ընկած են զինվորների ներկայացրած պատմությունների հիմքում, այնուհետև այդ թեմաների խմբավորման միջոցով դրանք ընդհանրացվել են, և ձևավորվել են հիմնական թեմաները, դրանց տարբերակներն ու ենթաթեմաները: Նշված ընդհանրացումները հնարավորություն են տվել իրականացնել ինչպես առանձին թեմաների, այնպես էլ դրանց միջև կապերի վերհանումն ու խորքային վերլուծությունը: Գրանցված նյութի թեմատիկ վերլուծության հիման վրա է ձևավորվել նաև աշխատանքի կառուցվածքը:

---

9 Թադևոսյան, Ա., 2021. Բանավոր պատմություններ պատերազմի մասին. Դաշտային ազգագրական նյութեր (ԴԱՆ):

10 Clarke V. and Braun V. 2013. Teaching Thematic analysis: Overcoming challenges and developing strategies for effective learning. The Psychologist, 26 (2), pp. 120–123; Nowell L. S., Norris J. M., White D. E., and Moules N. J. 2017. Thematic Analysis: Striving to Meet the Trustworthiness Criteria. International Journal of Qualitative Methods, 16 (1), pp. 1–13.

Գլուխ 1

# Պատերազմի նկարագրությունը մասնակիցների պատմություններում

## Պատերազմի անսպասելիությունն ու բանակի անպատրաստությունը

Պատերազմի մասնակիցների պատմությունների համաձայն՝ պատերազմն իրենց համար շատ անսպասելի էր: Այսպիսի կարծիք են հայտնում ոչ միայն կամավորականներն ու պահեստազորայինները, որոնք պատերազմը սկսելու պահին հեռու են եղել բանակից ու հատկապես առաջնագծից, այլ նաև հենց ժամկետային զինծառայողներն ու առաջնագծում ծառայող սպաները: Առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ, որ շատերը չեն սպասել, որ պատերազմ կարող է սկսվել: Ներկայացվող պատմությունների համաձայն՝ այս անսպասելիության երևույթը հասկանալի չէ, նախ, այն պատճառով, որ վերջին ամիսներին Ադրբեջանը ակնհայտորեն պատրաստվել է պատերազմի, և դա այնքան անթաքույց է իրականացվել, որ քիչ թե շատ հասկացող բարձրաստիճան զինվորականներն ու ռազմական փորձագետները պետք է ոչ միայն կանխատեսած, այլև պատերազմ սկսելու և դրան դիմակայելու սցենարներ մշակած լինեին ու դեռ ամիսներ առաջ բանակը նախապատրաստած լինեին հնարավոր հարձակման դեպքում պաշտպանության կազմակերպման ու հակահարվածի:

> *Մենք գոնե մի քիչ տեղեկացված չէինք, որ մի քիչ գոնե գաղափար ունենայինք, որ կարա սենց բան ըլնի: Համենայն դեպս, ավելի պատրաստ կլինեինք ինչ-ինչ բաներին: Թեկուզ առաջնագծում մենք իմացել ենք, որ նորմալ ա, ֆսյո, ինչ-որ խնդիր չի լինելու, կամ պատերազմի մասին, առավել ևս, ոչ մեկ ոչ մի բան չի մտածել: Ոչ մեկս չենք պատկերացրել, որ տենց բան կարա լինի... ուղղակի թռուցիկ մտածել ենք՝ բա որ մի օր սկսվի, ու ֆսյո, դրանով սահմանափակել ենք, էլի: Դրանից ավել ո՛չ խոսացել ենք, ոչ էլ մտածել ենք:*
>
> ***Պայմանագրային զինծառայող, տղամարդ, 25 տարեկան***

Նույնիսկ պատերազմը սկսելուց հետո շատերը մտածել են, որ մեծ պատերազմ չի լինի: Ավելի հավանական են համարվել կարճատև սահմանային բախումները, քան լայնածավալ պատերազմը: Այդ պատճառով էլ նրանք, ովքեր անմիջականորեն ճակատային գծում չեն եղել, մտածել են, որ ադրբեջանցիների հարձակումը վատագույն դեպքում կընթանա Ապրիլյան պատերազմի սցենարով:
Նույնիսկ այն դեպքում, երբ պատերազմն արդեն մի քանի ժամ սկսված է եղել, որոշ տեղերում, նախնական անտեղյակության հետևանքով, այն աստիճան չեն հասկացել, թե ինչ է իրականում կատարվում, որ շարունակել են սովորական առօրյան՝ մինչև իրենց վրա հակառակորդի ռմբահարությունը:

> *Մեր դիմաց ադրբեջանական քաղաք ա, էրևում ա պարզ: Ջրուցում էինք տղաներով ու հանկարծ տեսանք՝ ինչպես են գրադները կրակում, էս կարմիր գույնի սնարյադները: Մեր փոխգնդապետը ինքը հասկացավ, վռազ հրաման տվեց, ու մենք գնացինք էտ շենքի պադվալային մասը, ու արդեն ռմբակոծությունը սկսեց մեզ վրա:*
>
> ***Ժամկետային զինծառայող, շարքային, տղամարդ, 20 տարեկան***

Եղել են դեպքեր, երբ ճակատի այն հատվածում, որտեղ պատերազմի առաջին օրը ադրբեջանցիների կողմից հարձակում չի նախաձեռնվել, պատերազմի մասին իրական պատկերացում կազմվել է հաջորդ օրը:

> *Զորավարժությունների ժամանակ քնած էինք, առավոտը 7 անց 15, առաջի պայթունի ձայնը որ լսանք, տենց, զգացողություններ չկար, արդեն երկրորդ օրը, որ ավելի մոտ պայթեց, էդ ժամանակ արդեն հասկացանք, որ պատերազմ ա, ու արդեն մի անգամից սենց միանշանակ առավոտ հավաքվեցինք, դուրս եկանք շենքից, վերցրեցինք էդ մեր եղածը, մեր զենք-մենքը: Սկզբից մի տեսակ անսովոր էր էդ պայթյունների ձայնը-բանը, չէի կողմնորոշվում, էլի, որ կողմից էր գալի, ոնց, հետո արդեն մի կես ժամ, մի ժամ որ լսում ենք, արդեն սովորական էր դառել մեր համար:*
>
> ***Ժամկետային զինծառայող, հետախույզ, տղամարդ, 20 տարեկան***

Պատերազմի իրական բնույթի և ուժգնության մասին քիչ թե շատ համարժեք պատկերացում ձևավորվել է առաջնագծի այն հատվածներում, որտեղ ադրբեջանցիները ինտենսիվ ու լայնածավալ պատերազմական գործողություններ են իրականացրել: Արդեն առաջին օրը այստեղ հասկացել են, որ գործ ունեն լուրջ և մեծածավալ պատերազմի հետ: Թալիշի ուղղությամբ հակառակորդի հարձակումն իրենց վրա ընդունածների պատմություններով՝ իրենք առաջին իսկ րոպեներից հասկացել են, որ սա ոչ թե պարզապես հարձակում է, այլ՝ մեծ պատերազմի սկիզբ: Բայց խնդիրն այն է, որ նույնիսկ ամենից խոցելի հատվածներում, հենց նույն Թալիշում, որտեղից 2016 թվականին Ապրիլյան պատերազմի ժամանակ եղել է ներթափանցումը, և որտեղ զորքը, ենթադրաբար, պետք է ավելի զգոն ու պատրաստված վիճակում լիներ, հարձակումը եղել է շատ անսպասելի, զինվորները տեղեկացված չեն եղել ու ոչ մի կերպ պատրաստված չեն եղել հնարավոր հարձակմանը:

*Ես Թալիշում եմ եղել, դիրքերում եմ եղել: Սկզբից իմացա՝ պրոստը տենց հարձակվել են, հեսա էլի հետ են քաշվելու: Բայց, փաստորեն, չէ, լավ էլ հարձակվան... Ընդե երբ որ սկսեցին խփել, մի 10 րոպե հետո անցած արդեն զինվորներն էլ եկան, պիխոտն էլ եկավ, մեր կողքի պոստից էլ կապ տվեցին, ասեցին, որ զոհ ունեն: Էդ վախտ էլ իմացանք արդեն, որ կռիվ ա լրիվ…*

***Ժամկետային զինծառայող, տղամարդ, 20 տարեկան***

Անտեղյակությունն ու անպատրաստվածությունն այն աստիճան են եղել, որ զինվորները նույնիսկ զգուշացված չեն եղել, թե ինչ գործողությունների պետք է դիմեն ռմբահարության դեպքում, որոնք պետք է լինեն նրանց առաջին քայլերը, որպեսզի կարողանան ավելի պաշտպանված ու ապահով լինել:

*Առաջին վայրկյաններին, երբ որ պատերազմը սկսեց, ոչ մեկ չէր ջոկում՝ ինչ ա կատարվում, որովհետև, մենք դեռ չէինք տեսել, տենց ձեներ չէինք լսել, ու էդ ամեն ինչն անսովոր էր մեր համար: Մենք սկզբում պռոստը դուրս եկանք բատալյոնից, բատալյոնից դուրս եկանք, նայեցինք կողերս. ինչ-որ ծուխ ա վերևը, բան, ու անհասկանալի էր էլի ամեն ինչ: Դրանից հետո ուղղակի մեր*

*հրամանատարներից մեկը, որ էդ օրը պատասխանատու էր, գոռաց, որ սաղս մտնենք բունկեր, ու տենց խառնաշփոթով, առանց ինչ-որ տենց կարգ ու կանոն պահելու, տենց սաղս լցվել ենք բունկեռ, էնքան ա՝ ողջ մնանք, էլի, էդ առաջի մի քանի ժամվա մեջ, երևի:*

***Ժամկետային զինծառայող, տղամարդ, 20 տարեկան***

Պատերազմի նկարագրություններում անսպասելիության թեման ուղեկցվում է անպատրաստության մասին պատմություններով: Այսինքն՝ պատերազմի անսպասելիությունը ոչ միայն դրա սկսվելու ժամկետների վերաբերյալ հետախուզական տվյալների բացակայությանն է վերաբերում, այլ նաև դրան ընդհանրապես չպատրաստվելու խնդրին:

*Գիտե՞ս՝ ոնց ա. կա ուժեղի ու թույլի կռիվ, ու դրանից բացի՝ պատրաստվածի ու անպատրաստի կռիվ, կազմակերպվածի ու անկազմակերպի կռիվ. սենց ասեմ՝ ավելի ճիշտ կըլնի:*

***Պայմանագրային զինծառայող, տղամարդ, 23 տարեկան***

Պատերազմին անպատրաստվածության մեկ այլ դրսևորում կարելի է համարել դրա հնարավոր բնույթի ու ծավալների մասին պատկերացումների անբավարարությունը կամ իսպառ բացակայությունը: Այսինքն՝ խոսքը վերաբերում է այն բանին, որ զինվորները որևէ կերպ չեն տեղեկացվել ու նախապատրաստվել ադրբեջանցիների զինատեսակների, հարձակման հնարավոր մասշտաբների, այն ժամանակակից զենքերի բնութագրերի մասին, որոնք առկա են հակառակորդի բանակում և հնարավոր պատերազմի դեպքում կարող են գործադրվել:

*Մեր բանակը, ասենք, չգիտեր ո՛չ հակառակորդի թույլ կողմերը, ո՛չ ուժեղ կողմերը, ոչ մի բան չգիտեր: Ասենք՝ էդ անօդաչուի դեմ ոնց պայքարի՝ չէին սովորցրել մեր բանակին: Պարզվեց էն, որ մեր զենքերը 21-րդ դարի զենքեր չէին, մեր զենքերը 20-րդ դարի զենքեր էր սաղ, ու հիմա էտ զենքերի կռիվը չէր:*

***Կամավորական, միջին տարիքի տղամարդ***

Դատողությունների մակարդակը, որով հայկական բանակի սպաներն ու զինվորները ձևավորել են թշնամու կերպարը, հենված է եղել ոչ թե ռացիոնալ ու ճշգրտորեն մեկնաբանվող փաստերի նկարագրությունների ու բացատրությունների վրա, այլ իրականացվել է իրականության հետ կապ չունեցող գնահատականների, հակառակորդին ստորադասող ու ծաղրող պիտակավորումների միջոցով, ինչը թույլ չի տվել ունենալ ռազմական իրավիճակի և նախապատերազմական իրականության համարժեք նկարագրություններ: Այս առումով ուշագրավ է այն, որ հակառակորդի բանակը շատերի համար զարմանալի կերպով բացարձակապես չի համապատասխանել այն պատկերացումներին, որոնք նրանք ունեցել են մինչև պատերազմը: Շատ դեպքերում այդ պատկերացումները մնացել են դեռևս առաջին Արցախյան պատերազմի պատումների մակարդակում, որտեղ ավելի շատ նկարագրված է կամավորականներից կազմավորված հակառակորդի 1990-ական թվականների բանակը:

> *Ես ուզում եմ տարբերենք մենք էն պատերազմը էս պատերազմից. էնի էղել ա բլիժնի բոյ, նու, ասենք՝ մոտիկ մարտավարություն, կենդանի ուժի ոչնչացում, իսկ էսի էղել ա տեխնալոգիայի պատերազմ, արտիլերիայի պատերազմ, օդի պատերազմ: Պտի տարբերենք էդ ու ասենք, որ տենում ես էդ պատերազմը, դու արդեն պտի իմանաս՝ դրա դեմ ինչով պայքարես: Դրա դեմ պետք ա պայքարես ոչ թե ավտոմատով. ավտոմատը պրծել ա, ավտոմատի պատերազմը:*
>
> ***Կամավորական, տղամարդ, 46 տարեկան***

Բանակը չի տիրապետել նաև համարժեք տեղեկատվության հնարավոր պատերազմի մասշտաբների մասին: Սա խոսում է այն մասին, որ հայկական բանակում բավականաչափ չեն ուսումնասիրվել ժամանակակից պատերազմների մասին տեսությունները, բանակի ուսուցողական ծրագրերում չեն իրականացվել դրանց վերաբերյալ դասընթացներ, և զինվորները այդ ամենին ծանոթացել են սեփական փորձով՝ հայտնվելով հակառակորդի ծանր և ինտենսիվ հարձակումների տակ: Այն զինվորականները, որոնք նույնիսկ ինչ-որ կերպ ենթադրել են, որ պատերազմը հնարավոր է, ու մի օր այն տեղի է ունենալու, չեն պատկերացրել, թե այն ինչ մասշտաբի ու ինտենսիվության կարող է լինել:

*Պատերազմը զարմանալի էր նրանով, որ չնայած գիտեինք, որ մի օր սկսելու ա, բայց չգիտեինք, որ էս մասշտաբով ա լինելու, որտև, խոսքի, մի պոստի վրա մի 5-6 հատ անօդաչու կար, կամիկաձե:*

***Ժամկետային զինծառայող, տղամարդ, 20 տարեկան***

Սովորական զինվորականներից շատերը՝ կամավորականները, ժամկետային զինծառայողները, պահեստազորայինները, մեղադրում են բանակի բարձրագույն հրամանատարությանը ոչ բավարար պրոֆեսիոնալիզմի ու անպատասխանատվության համար: Շատերը հարցազրույցներում նշում են, որ սովորական զինվորը գուցե իրավունք ուներ չհասկանալու, որ Ադրբեջանը պատրաստվում է լայնամասշտաբ պատերազմի, բայց բանակի ղեկավարությունը, պաշտպանության նախարարությունը գոնե պետք է ունենային պարզ վերլուծություններ, հետախուզական տվյալներ պատերազմի սկսվելու հավանականության մասին և գոնե առաջնագծում զորքին նախապատրաստած լինեին հնարավոր հարձակման դեպքում համապատասխան պաշտպանական գործողությունների իրականացմանը:

*Ես գիտեի, որ իրանց մոտ արդիականացված ա ամեն ինչ, իրանցը 5-րդ սերնդի զենքեր ա, մի քիչ հետաքրքրասեր մարդ ըլներ՝ ցանկացած մարդ, կարար իմանար, որտև բացահայտ ցույց էին տալի զորավարժությունները՝ իրանք ինչ զենք են օգտագործում, նորություն չէր, էլի: Հենց էտ եմ զարմանում, որ էտ ամեն ինչը տենալով, իմանալով՝ դրան հակադարձող ոչ մի քայլ չեն արել:*

***Պահեստազորային, տղամարդ, 36 տարեկան***

## Հայկական զորքերի անկազմակերպվածության դրսևորումները

Պատերազմը մասնակիցների պատմություններում նկարագրվում է որպես խիստ անկազմակերպ: Առանձնացվում են անկազմակերպվածության մի

շարք դրսևորումներ: Նախ՝ խոսքը վերաբերում է զորքերի մոբիլիզացիային: Այստեղ շատ վատ են գործել զինկոմիսարիատները, որոնք թույլ են տվել բազմաթիվ շփոթություններ: Գրանցված պատմություններում կան նկարագրություններ, երբ պահեստազորայինին զորակոչել են, հասցրել Արցախ, ապա հետ ուղարկել, իսկ հետո նույն մարդուն զորակոչել են երկրորդ անգամ: Շատ են եղել դեպքեր, երբ պահեստազորայիններին չեն կարողացել տեղաբաշխել ըստ իր զինվորական մասնագիտացման: Մեծ խառնաշփոթ է տեղի ունեցել պահեստազորայիններին զորքի հետ կցելու գործընթացներում: Եղել են դեպքեր, երբ պահեստազորայինների կամ կամավորականների ավտոբուսը ուղեկցել է պահեստից զորակոչված սպա, որը տեղանքը չիմանալու պատճառով քիչ է մնացել՝ մեքենան ուղեկցի դեպի ադրբեջանական դիրքեր:

*Օրինակ՝ մեզանից հետո որ ՄՈԲ էին բերել՝ մի քանի հոգի իրենք ավտոբուսով եկել, հասել էին Մատաղիսի էն դիքը, որ պիտի իջնեն, հետո տեսել էին՝ ինչ կալիբրի սնարյադներ են, արդեն էնտեղ մտածել էին՝ էս ուր ենք գնում, կարող ա՝ մի բան էն չի, հետո իմացել էինք, որ եթե մի քիչ էլ բարձրանային, արդեն կարող ա գերի ընկնեին, որովհետև ո՛չ վարորդը, ո՛չ տանող սպան տեղյակ չէին, որ Մատաղիսը մերը չի:*

***Պահեստազորային, տղամարդ, 29 տարեկան***

Որոշ դեպքերում, ընդամենը երջանիկ պատահականության շնորհիվ, ավտոբուսում մարդիկ են եղել, ովքեր քիչ թե շատ ծանոթ են եղել տեղանքին ու հասկանալով, որ ուղեկցող սպան սխալ ուղղությամբ է առաջնորդում, միջամտել և կանխել են ավտոբուսով լի պահեստազորայինների հայտնվելը ադրբեջանցիների վերահսկողության ներքո գտնվող տարածքում:

*էդ գնալու պատմությունը պատմեմ՝ ոնց ենք պատահական էլի սաղ մնացել, թե ինչ աստիճան բարդակ էր ընդեղ տիրում: Հիմա մենք գնում, հասնում ենք իբր Մադաղիս: Էդ ուղեկցող մեր աֆիցերը չգիտի տեղը, կյանքում չի եղել ինքը Մադաղիսում: Վարորդն էլ, դե, ի՞նչ, ուր ասում են, քշում ա էդ մարդը: Գնում, գնում, գնում, գնում ենք, ինչ-որ անդադար գնում ենք: Ճանապարհի մեջտեղը էն սմերչի բաներից ա*

*ցցված: Իսկականից, ճանապարհի մեջտեղը դրանից ցցված, կողքերը սաղ պաժառ, մենք էլ 15-16 հոգի ավտոբուսի մեջ, ֆառերը միացրած գնում ենք: Արդեն կապը կորել ա, մի հատ անասուն վիճակ ա տիրում: Գնում ենք, մի քիչ էլ ենք գնում, մեկ էլ մեկը հետևից զարիժատ ա անում ավտոմատը՝ բա մի 100 մետր էլ քշես՝ կկրակեմ. վարորդին ա ասում: Սաղ խառնվում են իրար. բա՝ ինչ ա եղել, բան, մի հատ հանգստացի: Ասում ա՝ էս դիքը իջնում ես՝ Մադաղիսի չաստն ա, ես ստեղ եմ ծառայել, Մադաղիսը իրանց մոտ ա: Վերջը ռազվարոդ ենք անում ըտեղից, ուղիղ կես ժամ հետ ենք գնում, նոր հասնում ենք ընդեղ, որտեղ մեզ պիտի դիմավորեին: Այսինքն՝ մենք արդեն մտնում էինք իրանց չաստ: Էդ տղեն չլիներ՝ իջնելու էինք Մադաղիս՝ թուրքերի մոտ, չաստն էինք մտնելու:*

***Կամավորական, տղամարդ, 23 տարեկան***

Անկազմակերպվածության մեկ այլ տարածված դրսևորումներից է եղել պահեստից զորակոչված պահեստազորայինների նախապատրաստական աշխատանքների իրականացումը: Մեծ խառնաշփոթ և անկազմակերպվածություն է եղել հատկապես պահեստի սպայակազմի նախապատրաստության ու զորքերին նրանց կցելու գործընթացում: Շատ պահեստազորայիններ կամ կամավորականներ, ռազմական գործից երկար ժամանակով կտրված լինելու պատճառով, չեն տիրապետել անհրաժեշտ ռազմական հմտությունների, ինչի պատճառով վճռորոշ պահերին զինվորները երբեմն մնացել են անորոշության մեջ:

*Այսինքն՝ սկզբում գնացինք Ստեփանակերտ՝ գենշտաբի մոտ, որը գոյություն չուներ: Սկզբում Ստեփանակերտում ավտոբուսում սպասում էինք, որ պիտի ինչ-որ սպա գա, որը մեզ պիտի ասի՝ ուր պիտի գնանք: Սպան երևի մի կես ժամ չկար, հետո հայտնվեց, հետո սկսվեց Ստեփանակերտի հրետանակոծությունը: Սպան և վարորդը ավտոբուսի դռները փակեցին, մեզ թողեցին ավտոբուսում, իրենք թաքնվեցին: Սպասել ենք, մինչև հետ են էկել, բացել են դռները, բայց էտ ամենը մեծ աղմուկ բարձրացնելուց հետո, էլի:*

***Պահեստազորային հրետանավոր, տղամարդ***

Հաճախ են եղել դեպքեր, երբ կամավորականների կամ պահեստազորայինների ջոկատը, հասնելով պատերազմական գործողությունների տարածք, մնացել է անորոշության մեջ, քանի որ չի եղել մեկը, որը կհամակարգեր ու կկազմակերպեր նոր ժամանած զինվորականների գործողությունները:

*Գնացինք ըտեղ, տեսանք՝ սաղ ըտենց բրիգադում լռված են, տենց չաստի մեջ, էլի: Տեսանք, որ մի երկու օր պտի մնանք ըտեղ, մինչև որոշեն մեզի հանեն: Տենց կռիվ արինք, ես՝ իմ խմբի հետ, էլի: Ես էի պատասխանատուն: Ասում եմ՝ մեզ տարեք առաջի գիծ: Հենց էտ օրը: Կամանդիրի հետն էլ կռվանք: Մի քիչ կամանդիրը, չկար էլի իրանից: Ըտենց մեզ նստըցրին ավտոն, էտ գռանատ-մռանատ տվեցին, առանց կասկի, առանց ժիլետի: Դե, ինչպես միշտ, տենց փիս վիճակ, բարդակ վիճակ: Հանին, որ պտի տանեն առաջին գիծ... Տարան, էտ շոֆեռն էլ խառնված իրար, մեզի իջացրեց ըտե ու փախավ: Ո՛չ աֆիցեր, ո՛չ բժիշկ, ո՛չ կասկա, ո՛չ ժիլետ, ո՛չ տեղանքը գիտեինք:*

***Կամավորական, միջին տարիքի տղամարդ, 31 տարեկան***

Ըստ մասնակիցների պատմությունների՝ նույնիսկ պատերազմի ամենից թեժ հատվածներում, որտեղ կարևոր են եղել համակարգվածությունը, կարգապահությունը, որպեսզի զորքը ավելորդ կորուստներ չտա, արդյունավետ կազմակերպի մարտական գործողությունները, պահեստազորայինների ջոկատի հետ երբեմն ուղարկվել են այնպիսի սպաներ, որոնք բացարձակապես գաղափար չեն ունեցել, թե որտեղ են գտնվում իրենք ու ինչպես պետք է կազմակերպեն ու առաջնորդեն զորքը: Նույնիսկ կարևոր մարտական գործողությունները, ինչպիսին է եղել, օրինակ, Շուշին գրավելուց հետո այն հետ գրավելու փորձը, մասնակից զինվորների նկարագրություններով, ընթացել են կատարյալ անկազմակերպվածության պայմաններում:

*Ես միշտ մի կոպիտ օրինակ եմ բերում, որ Շուշիում մեր զորքը ոնց որ առանց հովիվ նախիր լիներ: Շատ կոպիտ օրինակ եմ բերում, բայց էտ տենց ա իրոք, որովհետև եթե հրամանատարական կազմ գոյություն չունի, դու կողքինիդ հարցնում ես՝ բա լավ, մենք խի՞ ենք գնում ստեղ,*

*ասում ա՝ դե ես չգիտեմ, ասում եմ՝ բա ո՞վ գիտի, ասում ա՝ ինքն էլ չգիտի, ոչ մեկ չգիտի: Շատ ցավալի ա, երբ որ բարձրանում ես մի տեղ, դու գիտես՝ մարտ ա գնում ըտեղ, ու պետք ա գնաս, դու էլ մարտ վարես, դու ինչ-որ խնդիր կատարելու ես գնում, բայց դու քո խնդիրը չգիտես: Դա ապսուրդի ժանրից ա, երբ որ զինվորականը, ծառայության մեջ գտնվող անձը, չգիտեմ՝ պատերազմի մասնակիցը, գնում ա խնդիր կատարելու էն դեպքում, երբ որ ինքը չգիտի՝ ինչ խնդիր ա կատարում. դե, օրինակ՝ կապի միջոց չկար:*

***Կամավորական, տղամարդ, 21 տարեկան***

Խնդրահարույց են եղել նաև պահեստազորի սպաների հետ կապված հարցերը: Եղել են պահեստազորի սպաներ, որոնք չեն տիրապետել քարտեզ կարդալու և տեղանքում կողմնորոշվելու տարրական գիտելիքներին, եղել են նաև այնպիսիները, որոնք չեն ունեցել որոշումներ կայացնելու և զորքը առաջնորդելու կարողություններ:

*Առաջին օրը գնացել ենք ընդեղ, մեզ տարել են Ջաբրաիլ: Գիշերով հասել ենք տեղ, գումարտակի հրամանատարը մեր հետ, գումարտակի հրամանատարին ասում ես՝ դե, մի հատ գոնե ցույց տուր՝ գոնե հակառակորդը որ կողմից ա: Ասում ա՝ չգիտեմ, սպասեք լույսը բացվի, տեսնանք՝ ինչ ա կատարվում, ես էլ տեղյակ չեմ: Ու լույսն էլ ա բացվում, իրանից չենք իմանում, թե հակառակորդը որ կողմից ա: Տեղի մարդկանցից ենք իմանում, ովքեր որ մի քանի հոգի մնացել էին ընդե, էլի, մնացածը թողե-գնացել էին, մի քանի հոգի մնացել էին, իրանք են ասում, որ ուշադիր էղեք՝ հակառակորդը էս կողմից ա:*

***Պահեստազորային, տղամարդ, 28 տարեկան***

Շատ հետաքրքիր է հատկապես հարցազրույցներին մասնակիցներից մեկի այն դիտարկումը, որ մեր սպայակազմին չեն բավարարում առաջնորդության (լիդերության) հատկանիշները, և մեր սպաների ամենամեծ բացերից մեկը հենց դա է եղել: Խոսքը վերաբերում է ոչ թե պարզ կազմակերպչական ունակություններին, այլ զորքն առաջնորդելու կարողությանը:

Չափազանց անկազմակերպ է եղել նաև կապի ապահովումը զորքի տարբեր հատվածների միջև: Անկազմակերպվածության պատճառով եղել են դեպքեր, երբ մի գումարտակը գրոհել է, իսկ մյուսը, որը պետք է ապահովի նրան կողքից, նահանջել է անժամանակ՝ ստեղծելով շրջափակման և այլ տիպի մահացու վտանգներ:

## 1.1. Տեխնոլոգիան և մարդը պատերազմում

Պատերազմի մասին հայ զինվորների պատմություններում ուշագրավ են նաև Ադրբեջանի կողմից կիրառված ժամանակակից տեխնիկական միջոցների ու պատերազմ վարելու տեխնոլոգիաների նկարագրությունները: Այս պատերազմը առանձնահատուկ էր հենց նրանով, որ պատերազմող կողմերը անհամարժեք էին ոչ միայն զենքի ու զինամթերքի տեսանկյունից, այլև՝ որ նոր սերնդի զենք-զինամթերքը փոխել էր պատերազմ վարելու տեխնոլոգիան, ինչի հետևանքով պատերազմող կողմերից մեկի բանակի զինվորները հայտնվել էին մյուսի ոչ թե զինվորների դեմ, այլ՝ տեխնիկայի: Գրանցված պատմություններում հաճախ են հանդիպում նկարագրություններ այն մասին, որ հայկական բանակի զինվորները օրերով ադրբեջանական զինվոր չեն տեսել, սակայն գտնվել են խիստ ինտենսիվ ռազմական գործողությունների թոհուբոհում, ունեցել զոհեր, տեխնիկայի կորուստներ և այլն:

> *Անարյաղները տեսնում էինք, հա, բայց մենք էդ ամբողջ ընթացքում թշնամուն առերես չենք տեսել: Տեսել ենք վերջին օրը, որ իջանք, հետո փորձեցինք հետ գրոհել: Էդ ժամանակ տեսել ենք, բայց շատ հեռու:*
>
> ***Պայմանագրային զինծառայող, սպա, 43 տարեկան***

Պատերազմում հսկայական դերակատարություն են ունեցել ադրբեջանական անօդաչու թռչող սարքերն ու հրետանին: Դրանք գործել են որոշակի տրամաբանական սխեմայով: Սկզբից անօդաչու թռչող սարքերն իրականացրել են հետախուզական թռիչքներ, բացահայտել հայկական տեխնիկայի ու զորքերի տեղակայման վայրերը, ապա կոորդինատները փոխանցել են հրետանուն, որը

հեռահար ռմբակոծությամբ թիրախավորել ու ոչնչացրել է հայկական զորքերի մարդուժն ու զինտեխնիկան: Կիրառվել են նաև հարվածային անօդաչուներ, որոնք իրենք հայտնաբերել ու իրենք էլ խոցել են հայկական զորքերի դիրքերն ու զինտեխնիկան: Ամեն ինչ եղել է բավականին լավ մտածված ու պլանավորված: Ամեն մի դիրքի վրա գրոհել է միանգամից մի քանի անօդաչու: Միանգամից դրանց մեծ քանակի դեպքում, եթե նույնիսկ հայկական կողմին հաջողվել է ոչնչացնել գրոհող անօդաչուներից մի քանիսին, մյուսները ռմբահարել են հայկական զինտեխնիկան, այդ թվում՝ նաև հակաօդային համակարգը, ու ոչնչացրել դիմադրող օբյեկտը:

*Իրանց քանակը, խոսքի, շատ ա էղել, բեսպիլոտնիկները, ասենք, էկել ա մի 10 հատ, 3 հատը հակաօդայինը ոչնչացրել ա, էն մնացած 7-ից 1-ը էկել ա, ընկել ա, ասենք, հակաօդայինը մեր տրաքցրել ա:*

***Կամավորական, միջին տարիքի տղամարդ***

*Ծանր հրետանի ունեինք, բայց հիմնականում սաղ շարքից դուրս էին բերե արդեն: Սենց էր. մեր ծանր հրետանին կրակում էր, իրանց բեզպիլոտնիկը օդից միանգամից ոչնչացնում էր, մինչև էն գալիս էին Երևանից, բան, մինչև հասնում էին տարբեր տեղերից, մինչև ուզում էին դիրքավորվեին, որ մի էրկու հատ կրակեին, էլի բեզպիլոտնիկները շարքից հանում էին: Շատ-շատ էին, էլի, էդ բեզպիլոտնիկները խանգարում մարտը: Իրանց օգնում էին շատ ահավոր ձևի. օդից նկարում էին, սաղ կոորդինատները տալիս էին, իրանց հրետանին աշխատում էր:*

***Ժամկետային զինծառայող, տղամարդ, 20 տարեկան***

Հատկանշական է, որ հայ զինվորների պատմություններում հաճախ է հանդիպում այն արտահայտությունը, որ սա «մարդու կռիվ» կամ սա «պեխոտի կռիվ» չէր, այլ տեխնիկայի կռիվ էր, և որ այդ կռվին հայկական զորքը պատրաստ չէր:

*Շատ երկար չի տևել էդ պատերազմը, նենց չի՝ շատ երկար ա էղել: 44-օրը, որ համեմատում ես համաշխարհային պատմության մեջ, 44-օրը ի՞նչ պատերազմ ա էղել, որ տենց նայում ես: Բայց սենց պատերազմ դեռ երևի աշխարհի երեսին չի էղել, որտեղ մենակ տեխնիկան ա կռվել: Էս էլ նոր պատերազմ էր, էսի իսկական 21-րդ դարի պատերազմ էր՝ կռվում էր զենքը, ոչ թե մարդը:*

***Ժամկետային զինծառայող, տղամարդ, 22 տարեկան***

## 1.2. Պատերազմի ինտենսիվության գործոնը

Այս պատերազմի մյուս առանձնահատկությունն այն է, որ եղել է չափազանց ինտենսիվ: Պատերազմի ինտենսիվությունը արտահայտվել է մի քանի ձևով: Նախ՝ այն շատ խիտ է եղել ժամանակային առումով: Ռմբակոծություններն ու մարտերն ընթացել են ամբողջ օրվա ընթացքում, ժամեր շարունակ: Ըստ զինվորների նկարագրության՝ որոշ հատվածներում պատերազմն այնպիսի ինտենսիվությամբ է ընթացել, որ զինվորները չեն հասցրել սնվել, հանգստանալ և նույնիսկ ծխել:
Պատերազմի ինտենսիվությունը դրսևորվել է նաև ադրբեջանցիների կողմից կիրառվող զենքի ու զինատեսակների քանակով: Կազմակերպված գրոհի ընթացքում օգտագործվել են չափազանց մեծ քանակի ռումբեր, անօդաչու թռչող սարքեր և այլ զինտեխնիկա:

*Դե, մեր խնդիրն էր անօդաչուները վերացնելը, ինքնաթիռները հակառակորդի, բայց դե չէր ստացվում: Անհնար էր, որտև էնքան սնարյադ էին թափում երկնքից, չէիր կարում, էլի: Մինչև ուզում էիր նշան բռնեիր, անօդաչու խփեիր, արդեն ուշ էր ըլնում... Տանկերի շատ ըլնելը, էտ անօդաչուների շատ ըլնելը, սնարյադների շատ ըլնելը: Ոչ մեկ չէր պատկերացնում, որ տենց մեծ մասշտաբով պետք ա լինի:*

***Ժամկետային զինծառայող, տղամարդ, 21 տարեկան***

Ինտենսիվության դրսևորումներից է եղել նաև գրոհի ժամանակ մեծ թվով մարդկային ուժ կիրառելը: Կռիվներին մասնակիցների վկայությամբ՝ պատերազմի առանձին դրվագներում, երբ ադրբեջանցիներն իրականացրել են հետևակային գրոհներ, այնպիսի տպավորություն է եղել, որ զինվորները չեն վերջանում: Գրոհի ժամանակ սպանվող զինվորների մեծ քանակը չի կանգնեցրել գրոհը, սպանվածների փոխարեն հայտնվել են նորերը, դրանց սպանվելու դեպքում նրանց էլ փոխարինել են նորերը: Այս անբնական ինտենսիվությունը և գնդակոծության տակ առանց մահվանից վախենալու, արձակվող կրակահերթերի տակ առաջ գալու այս իրողությունը հայ զինվորների կողմից բացատրվում է որպես ոչ մարդկային մի բան: Շատերը կասկածում են, որ ադրբեջանական կողմում կռվողները եղել են թմրանյութերի ազդեցության տակ, հակառակ դեպքում նորմալ մարդը չէր կարող նման ուժգնության կրակահերթերի տակ քայլել առաջ՝ առանց մահվան մասին մտածելու:

*Թշնամու զորքը շատ ախմախ զորք էր, ասեմ (ծիծաղում է): Ոնց որ զոմբի ըլնեին, էլի: Սենց, մի 60 հոգով գալիս էին, խփում էիր մեջտեղները, տրաքում-ընգնում էին ամեն մեք մի յան, հետո սենց անասունի նման ոնց որ սենց սաղանային, գային նորից, հավաքվեին իրար վրա, էլի: Տենց երևի դեղի տակ էին, սրսկված էին, տենց մի բան կա, էլի: Դե, չնայած սպրիչներ էլ են քթել ջեբերից, բայց նայում էիր, ուժըս, էլի, ոնց որ ըլներ դրանք:*

***Կամավորական, միջին տարիքի տղամարդ***

Պատերազմի ինտենսիվության մեկ այլ դրսևորում քաղաքների և քաղաքացիական բնակչության պարբերական ռմբակոծություններն են եղել: Ռմբակոծվել են հատկապես քաղաքները՝ Ստեփանակերտը, Շուշին, Մարտակերտը, Հադրութը և այլ քաղաքային ու գյուղական բնակավայրեր: Ռմբակոծությունների հետևանքով բնակավայրերում մեծ ավերածություններ են եղել, ինչը պատերազմի հենց առաջին օրը առաջացրել է քաղաքացիական բնակչությանը ամբողջ Ղարաբաղի տարածքից տեղահանելու մեծ հոսքեր:

## Պատերազմը որպես դժոխք և պատերազմի անմարդկային բնույթը

Մի կողմից՝ պատերազմին հայկական բանակի անպատրաստությունը, մյուս կողմից՝ դրա անսպասելիությունը, ադրբեջանցիների հարձակման մասշտաբները, տեխնոլոգիական տեսանկյունից նոր զինատեսակների ինտենսիվ կիրառումը, դրանց դիմաց մարդու անպաշտպանության ու անզորության վիճակը, ոչ միայն հայկական մարտական դիրքերի, այլ նաև քաղաքացիական բնակավայրերի մեծ ծավալի ռմբակոծությունները մարդկանց մեջ ձևավորել են պատերազմի՝ որպես սարսափի ու դժոխային իրավիճակի պատկերներ:

> *Ճիշտն ասած՝ երեք անգամ պատերազմ ենք տեսել, էս մի պատերազմը անհավատալի պատերազմ ա եղել: Ես դրան պատերազմ չեմ ասում. սա մարդասպանություն ա, ուրիշ ոչ մի բան, մարդասպանություն: Մնաղացը դրած՝ աղաց-գնաց, պրծավ, էդքան մարդիկ մսաղացով աղացին, գնացին:*
>
> ***Զորամասի խոհարար, կին, 61 տարեկան***

Հետաքրքիր է այս կնոջ մեկնաբանությունը: Պատերազմն ինքնին մարդասպանությանն ուղղված գործողություն է: Ավելին՝ այն փաստացիորեն մարդկության կողմից միակ թույլատրելի համարվող կոլեկտիվ մարդասպանությանն ուղղված գործողություն է: Սակայն այն չի ընկալվում որպես այդպիսին, քանի դեռ չեն խախտվել պատերազմը մարդկայնորեն ընկալելու սահմանները: Պարզվում է՝ պատերազմում էլ մարդասպանությունը պետք է սահմաններ ունենա: Երբ այդ սահմանները խախտվում են, մարդիկ  դադարում են պատերազմը ընկալել որպես զուտ պատերազմ, որն ըստ պատերազմի մասին ընդունված ընկալումների՝ ուղղված է ոչ թե պարզապես մարդ սպանելուն, այլ՝ պատերազմող կողմերի ժողովուրդների նպատակների, իդեալների իրականացմանը կամ վիճելի հարցերի լուծմանը և որպես այդպիսին՝ մարդկանց ընկալումներում թույլատրելի է ու լեգիտիմացված:
Պատերազմի սարսափներից են եղել մարդկային մարմնի ոչնչացման անմարդկային տեսարանները: Մասնակիցներից շատերն են պատմում,

որ իրենց ունեցած ամենից սարսափելի տպավորությունները կապված են ռումբերից ցրիվ եկող մարմնի մասերի կամ այրվող ու մոխրացող մարմնի տեսարանների հետ: Այս պատերազմի առանձնահատկություններից մեկն էլ հենց այն է եղել, որ նոր տեխնոլոգիաների կիրառման հետևանքով չափից դուրս շատ են ոչ թե պարզապես սպանության, այլ, բառի բուն իմաստով, մարդու մարմնի ոչնչացման դեպքերը: Այն աստիճան ոչնչացման, որ թույլ չի տալիս մարտի դաշտում զոհվածին նույնականացնել, քանի որ պարզապես մարմինը ոչնչացել է կա՛մ ցիրուցան լինելու, կա՛մ այրվելով մոխրանալու հետևանքով: Գրանցված պատմություններում կան մարդու ցիրուցան եղած մարմինների հավաքման, մոխրացման նկարագրություններ, որոնք սարսափ ֆիլմերի տեսարաններ են հիշեցնում: ***Այս առումով, 44-օրյա պատերազմը բացահայտեց նաև նոր սերնդի պատերազմի և մարդկային ուժի ոչնչացման, մարդկային մարմնի նկատմամբ վերաբերմունքի արմատական փոփոխության ու բարոյական սահմանների լուրջ խախտումներ: Սրա գլխավոր պատճառներից մեկը պատերազմի մասնակիցների տարբեր իրականություններում գործելն է, երբ տեխնոլոգիական իրականությունում գործողը բացարձակապես ազատ է զգում իրեն մարդասպանության բարոյական ու հոգեբանական ապրումից:*** *Նկատենք, որ այս երևույթը պատերազմի ու տեխնոլոգիաների* ազդեցության մասին հետազոտություններում քննարկվում է դեռևս 1990-ականների վերջերից[11]:

Այս պատերազմը թե՛ քաղաքացիական բնակչության և թե՛ զինվորականության կողմից հաճախ բնութագրվում է որպես անմարդկային քաոս, իսկ երբեմն նաև համեմատվում դժոխքի հետ: Նման բնութագրումները նույնպես հիմնականում պայմանավորված են.

- պատերազմի տեխնիկական բնույթով, տեխնիկայի կիրառման ինտենսիվության աստիճանով ու տեխնիկայի հանդեպ մարդու անզորությամբ.
- կիրառվող զենք-զինատեսակների մեծ քանակով.

---

11 James, F. Dunnigan. 1996. Digital Soldiers: The Evolution of High-Tech Weaponry and Tomorrow's Brave New Battlefield. New York: St. Martin's Press; Ferguson, Ch. 2007. "The Good, the Bad, and the Ugly: A Meta-analytic Review of Positive and Negative Effects of Video Games." Psychiatric Quarterly. 78 (4), pp. 309–316; Konijn E., Bijvank M., and Bushman B. 2007. "I Wish I Were a Warrior: The Role of Wishful Identification in the Effects of Violent Video Games on Aggression in Adolescent Boys." Developmental Psychology 43 (4), pp. 1038–1044.

- զոհերի մեծ քանակով.
- մարդու կյանքը որպես արժեք ծայրահեղորեն անտեսելու հանգամանքով.
- մարդու մարմնի ոչնչացման՝ մինչ այդ աննկարագրելի սարսափազդու տեսարաններով:

Ադրբեջանական բանակի կողմից գյուղերում ռմբակոծվել են մարդկանց տները, քաղաքներում՝ բազմաբնակարան շենքերը, դպրոցները, հիվանդանոցները և քաղաքացիական այլ օբյեկտներ: Այն, որ քաղաքացիական բնակչությունից զոհերի թիվը շուրջ 70 մարդ է և չի հասել հազարների, միայն նրա շնորհիվ է եղել, որ ռմբակոծվող բնակավայրերի բնակիչները կա՛մ տեղահանվել են, կա՛մ պատսպարվել նկուղներում ու ապաստարաններում: Չնայած դրան՝ քաղաքացիական բնակչությունը չի խուսափել զոհերից:

*Անընդհատ ռմբակոծում էին՝ գիշեր-ցերեկ, գիշեր-ցերեկ: Ճիշտն ասած՝ դպրոցի 4 կողմը ընկել ա, բայց մեզի ոչ մի բան չի եղել, բայց մոտիկ տեղեր եղել ա՝ ցրիվ ա եկել: … Զոմբիացած, լրիվ անջատված, մեզանից էնքան մահեր են բերել մեր գյուղ մեր գյուղի տղերքը, հոկտեմբերի 2-ին: Սաղի ծնողները… Արյունը ընգած ընդեղ, սաղ իրար կորցրած… Մինչև հիմա էլ չեմ իմանում, չեմ հավատում, որ Լեռնիկը չկա, Արմենը չկա, Խորիկը չկա, Վրեժը չկա: Սաղ իմ հարևաններս են, սաղ իմ պահած երեխեքս են:*

***Կարմիր շուկա գյուղ, կին, 61 տարեկան***

Պատերազմի դժոխայնության զգացում առաջացնող գործոններից են եղել նաև պատերազմի ընթացքում կիրառվող զինատեսակների պայթյուններից առաջացող ձայներն ու դղրդյունները: Նույնիսկ այն բնակավայրերում, որոնք անմիջականորեն չեն հայտնվել ադրբեջանական զորքերի հրետակոծության տակ, մարդիկ պատերազմի սարսափն ապրել են լսվող պայթյունների ու ոտքերի տակ դղրդացող գետնի ցնցումներից:

## 1.3. Պատերազմի տարբեր իրականությունները

Այս պատերազմը ցույց տվեց, թե տեխնոլոգիաների գործածումը որքան ածանցյալ է դարձնում մարդու գործոնը ռազմի դաշտում: Կարելի է ասել, որ հիմնական եզրակացություններից մեկն այն է, որ բանակի արդյունավետությունը այլևս կախված չի լինելու ռազմի դաշտում կռվող մարդկանց քանակից: Այսուհետ բանակներում ու ճակատամարտերում ավելի կարևոր դեր են ունենալու պատերազմի դաշտից բավականին հեռու ինչ-որ մի սենյակում նստած երիտասարդ տղաները, որոնց համար պատերազմը համակարգչի էկրանից թիրախը խոցելուն ուղղված գործողություն է, իսկ մարդկանց սպանելը նույնքան վիրտուալ ու անիրական, չնայած դրա հետևանքով այս դեպքում իրական մարդիկ են զոհվում, այլ ոչ թե՝ խաղի միջի զինվորիկներ: Դրա հետևանքով ձևավորվում են մի քանի զուգահեռ իրականություններ: Մեկի համար պատերազմը իր գլխավերևում պտտվող անօդաչու թռչող սարքերն են կամ երկնքից թափվող արկերի տարափը, մյուսի համար՝ այդ ամենի արտացոլումն էկրանին, որտեղ իրական մարդիկ նման են դես ու դեն շարժվող թիրախների, որոնց պետք է խոցել համակարգչի կոճակի հպումով: Մեկի համար պատերազմը մահ է, կտոր-կտոր լինող ու ցրիվ եկող մարմիններ, մյուսի համար՝ ընդամենը ճշգրտվող կոորդինատներ: Այս առումով փոխվում է նաև մահվան զգացողությունը տարբեր իրականություններում գտնվողների համար: Մեկի համար թիրախի ոչնչացումը ակնառու մահեր են, մյուսի համար թիրախի ոչնչացումը առանձնապես կապ չունի մարդ սպանելու ապրումի ու մահվան հետ: Պատերազմը էկրաններից այն կառավարողների համար այլևս դիպուկ կրակոցով դիմացդ հայտնված մարդուն սպանելու գործողությունը չէ, այլ՝ թշնամական թիրախները ոչնչացնելուն ուղղված տեխնիկական գործողություն: Այսինքն՝ այս զուգահեռ իրականություններում ընթացող պատերազմները տարբեր դիրքերում գտնվող մասնակիցների համար շատ տարբեր բնույթի գործողություններ են, որոնցից մեկն ընթանում է սպանված, անդամահատված, որոշ դեպքերում արդեն նեխող մարմինների կույտերի միջավայրում, իսկ մյուսը՝ սուրճի բաժակի ուղեկցությամբ, մահ ու սարսափի հետ որևէ նույնականացում չունեցող միջավայրում, համակարգչային սեղանի մոտ, որը չի տեսնում իր գործողության հետևանքով սպանվող մարդկային մարմինները, հոսող արյան առվակները և ամենակարևորը՝ չի ունենում մարդասպանության բարոյական

պատասխանատվությունն ու հոգեբանական ապրումը, ազատ է մարդ սպանելու մեղքի զգացումից, և մյուս կողմից՝ զինվորի նման ստիպված չէ այդ մեղքի զգացումից ազատագրվելու համար այսպիսի արդարացումներ փնտրել. «Հոպա՛ր, մարդ ենք սպանում, բայց մենք մարդասպան չենք»[12]:

12 Մարտիրոսյան, Ս., 2022. Այս նկարներն այլևս իմը չեն. Հակոբ Պողոսյան, մաքուր հոգիներ նկարողը. Կինոաշխարհ: 27.01.2022, https://kinoashkharh.am/2022/01/hakob-poxosyan-maqur-hoginer-nkarox/. Վերջին դիտում՝ 15.02.2022:

Գլուխ 2

## Մասնակիցների ինքնանկարագրությունը բանավոր պատմություններում

Պատերազմն ազդում է հասարակական կառուցվածքի փոփոխության վրա[13]: Այդ ազդեցության ու փոփոխությունների ձևավորման հարցում կարևոր դեր է կատարում նաև ինքնանկարագրությունը: Հետաքրքիր է, որ այդ փոփոխությունը կարող է վերաբերել ինքնանկարագրի ոչ միայն բովանդակային, այլև ձևական-մեթոդաբանական խնդիրներին: Այսինքն՝ կարող է ինքնանկարագրման իռացիոնալ ձևը, որը հենված է սրբազնացված բաղադրիչների վրա, փոխլրացվել ռացիոնալ-դատողականով կամ հակառակը՝ ավելի խորացնել սեփական կերպարի սակրալացումը: Պատերազմում թե՛ հաղթանակը, թե՛ պարտությունը ինքնանկարագրի փոփոխման վրա ազդում են յուրովի: Օրինակ՝ առաջին պատերազմից հետո հայերը նկարագրում էին իրենց որպես հաղթող և ուժեղ, իսկ ադրբեջանցիներին՝ վախկոտ, կռվել չիմացող և այլն: Հետաքրքիր է, որ հարցազրույցներից շատերում, հատկապես կամավորականներն ու պահեստազորայիններից շատերը, պատերազմի մասին լուրը իմանալու սկզբնական շրջանում, հենց այդ պատկերացումներով պայմանավորված, վստահ են եղել, որ հայկական բանակը միանշանակ հաղթելու է ադրբեջանցիներին: Սակայն այս ակնկալիքը աստիճանաբար փոխվել է պատերազմի առաջին օրերին, երբ այդպես մտածողները բախվել են իրականությանը և հասկացել, թե ռազմատեխնիկական ինչպիսի առավելություններ ունի ադրբեջանական բանակը: Շատերը պարզապես մինչև պատերազմը լավ չեն պատկերացրել, թե ինչ էական փոխակերպում է ունեցել ադրբեջանական բանակը, և ինչպիսի ինտենսիվության ու ծավալի հարձակում է իրականացրել: Հետաքրքիր է, թե ինչպես է փոխվում սեփական բանակի նկարագիրը ադրբեջանական ռազմատեխնիկական առավելության կողքին ու համեմատ: Եթե նույն մարդիկ տարիներ առաջ ծառայելով բանակում՝ չեն

[13] Ferguson, R. Brian. Ten points of war. P. 40.

մտածել, որ այն հետամնաց է, վատ կազմակերպված, թույլ մարտունակ, ապա որպես պահեստազորայիններ հայտնվելով բանակում՝ հայտնաբերել են, որ այն մնացել է այնպիսին, ինչպիսին եղել է տարիներ առաջ՝ իրենց ծառայության օրոք: Պահեստազորայիններից նրանք, ովքեր ծառայել են տասը և ավելի տարիներ առաջ, իրենց պատմություններում խիստ քննադատաբար նկատում են, որ համեմատած իրենց ծառայության ժամանակների՝ բանակում շատ մեծ փոփոխություններ չեն նկատել: Ըստ նրանց՝ դա նշանակում է, որ տարիներ շարունակ բանակում շատ քիչ բան է արվել դրա արդիականացման, զինվորների մարտական պատրաստվածության բարձրացման, կարգապահության, ուսումնամարզական ծրագրերի կատարելագործման և շատ այլ տեսանկյուններից:

> *Ես երկու տարի ծառայել եմ, ու անցել էր 10 տարի, ես էլի հետ եմ գնացել, ի դեպ՝ ծառայել եմ Կուբաթլու, Կուբաթլու էլ կռվել եմ: Այսինքն՝ հետ եմ գնացել, համարյա թե բան չէր փոխվել: 10 տարում ո՞նց կարա ինչ-որ միջավայր չփոխվի, էն էլ՝ էս արագ աճող աշխարհում: Դա անհասկանալի ա, էլի: Մարդկանց կրթությունը, իրանց գիտակցությունը, կառավարելու ունակությունը… ոչինչ չէր փոխվել սիստեմում՝ էսպես ասեմ:*
>
> ***Կամավորական, տղամարդ, 29 տարեկան***

Ընդհանրապես, մեր բանակին նվիրված ինքնանկարագրական դրվագներում այն հիմնականում նկարագրվում է որպես վատ զինված, հին զենքերով, վատ հագուկապով, պատերազմին անպատրաստ, լայն առումով հետամնաց, աղքատ ու վատ կազմակերպված բանակ: Կարելի է առանձնացնել ինքնանկարագրության մի քանի հիմնական մակարդակ.

- բանակի զինտեխնիկայի ու զենքի նկարագրություն.
- բանակի առանձին զորախմբերի (ժամկետային զինծառայողներ, պայմանագրայիններ, կամավորականներ) ինքնանկարագրություն.
- մարտական պատրաստվածության աստիճանի նկարագրություն.
- գործողությունների նկարագրություն (անկազմակերպ, մեկը մյուսի հետ չկապակցված, վատ կումունիկացվող):

## 2.1. Զենքի և զինտեխնիկայի նկարագրությունը պատերազմի մասնակիցների պատմություններում

Պատերազմի ընդհանուր նկարագրությանը նվիրված բաժնում որոշ առումով արդեն անդրադարձ եղավ զենքի ու զինտեխնիկայի նկարագրությանը։ Հիմնականում, համարյա բոլոր պատմություններում, մեր բանակը ներկայացվում է որպես հին սերնդի զենք ու զինամթերքով զինված բանակ։
Շատ է խոսվում զենքի տարբեր տեսակների անբավարարության մասին։ Ճիշտ է՝ դա չի վերաբերում զենքի ու զինամթերքի պարզ տեսակներին, ինչպես, ասենք, ավտոմատներն ու փամփուշտները։ Խոսքը վերաբերում է հատկապես օդային և ցամաքային զինտեխնիկային։ Նկարագրություններում հաճախ է խոսվում այն մասին, որ հայկական բանակը չի ունեցել անհրաժեշտ քանակի հակաօդային պաշտպանության միջոցներ։ Պատերազմի սկզբում ադրբեջանական բանակը բավականին հեշտությամբ կարողացել է հայտնաբերել ու ոչնչացնել հայկական հակաօդային պաշտպանության միջոցները։ Բանակն այնքան վատ է զինված եղել, որ խփված հակաօդային պաշտպանության միջոցները չեն կարողացել փոխարինել նորերով, և օդն ամբողջովին մնացել է բաց ու անպաշտպան։

> *Առաջին երկու օրը իրանք խփել են, մեր օդը բացել են, էլ օդ չենք ունեցե, օդ փակող չենք ունեցե, ՀՕՊ չենք ունեցե, ու էլ ո՛չ բերել են, ո՛չ էլ։ Մենք չենք ունեցել ՀՕՊ, զենքի պակասություն եղել ա, օրինակ, իրանց բեզպիլոտնիկները, որ գալիս էին, մերը որ ասում էր՝ հեսա մեր բեզպիլոտնիկն ա գնում, դռոն ա գնում, գնում էր հարսանիքի դռոններից, սրանցից էր գնում։*
>
> ***Ժամկետային զինծառայող, հետախույզ, 20 տարեկան***

Պատերազմի առաջին օրերին արդեն ադրբեջանական բանակի հանդեպ հայկական բանակի համեմատությունը զորքում ստեղծել է հակառակորդի առավելության հանդեպ սեփական անզորության մասին պատկերացում։ Գրանցված պատմություններում հաճախ կարելի է հանդիպել նկարագրությունների, որ առաջին մի քանի օրվա մարտերից

հետո արդեն հասկանալի է դարձել, որ ադրբեջանական բանակի համար մեծ առավելություն ստեղծող ժամանակակից զինտեխնիկայի, հատկապես անօդաչու թռչող սարքերի ու հրետանու միջոցների դեմ «ավտոմատով կռիվը» որևէ խոստումնալից հեռանկար չի կարող ապահովել:

*Ասենք, հենց սեպտեմբերի 30-ին էդ Լելե-Թափեի մոտ էլի, էդ Լելե-Թափե բարձունքը որ ասում են՝ Լալալայկեն… տեից արդեն պարզ էր՝ էդ կռիվը հունց կինի, որ ըտեղ ցանկացած ձևի, ինչ ունեին իրանք, սկսեցին օգտագործեն, հենց էտ օրը ու մեր զոհերի շատ մեծ մասը էտ օրը տվեցինք՝ Ջաբրայիլի շրջանում: …Զուտ էտ օրը օգտագործած զենքերից, մարդկանց քանակից ու տենց…*

***Կամավորական, տղամարդ, 42 տարեկան***

Հետևանքը եղել է այն, որ ադրբեջանական բանակը, առանց լուրջ խոչընդոտների, օդից կարողացել է անօդաչու թռչող սարքերով ու ռազմական ինքնաթիռներով ցանկացած ժամանակ ռմբակոծել ու ոչնչացնել հայկական բանակի հետևակային զորքերը: Ըստ գրանցված պատմությունների՝ հայկական կողմը հիմնականում պատերազմել է հետևակի միջոցով և ոչ լավ զինված հրետանու: Զենքի հնության ու անբավարարության պատճառով հրետանին բավական մեծ կորուստներ է տվել: Այդ կորուստները ոչ միշտ է հնարավոր եղել լրացնել, ինչը պատերազմի ամբողջ ծանրությունը գցել է հիմնականում ժամկետային զինծառայողներից կազմված բանակի վրա: Փաստացիորեն ստացվել է այնպես, որ հայկական բանակի դեպքում պատերազմի հիմնական ծանրությունն ընկել է հետևակի վրա, իսկ ադրբեջանական բանակը գործել է օդուժի, հրետանու և հետևակի փոխհամաձայնեցված ու լավ կառավարվող գործողությունների միջոցով:

Հայկական բանակը ունեցել է նաև զինվորական հանդերձանքի հետ կապված խնդիրներ: Ըստ զինվորների նկարագրությունների՝ բանակում զրահաբաճկոնները և սաղավարտները ադրբեջանական բանակի համեմատ եղել են բավականին հին, ինչը *առաջացրել է ադրբեջանական բանակի առավելությունների և սեփական հետամնացության ու խեղճության մասին պատկերացումներ*:

*Էտ տիպի հագնված չէինք, ոնց որ իրանք: Իրանց բրոնիկները հիմնականում մինչև վզները, այ, սենց վզներով փակ: Կասկաները իրանց սենց իջնում էր, ականջները փակ, մերը ականջները բաց էր մնում հիմնականում: Ականջները փակ, մինչև այ էս ունքերը սենց փակ կասկեք էին լինում, Ամերիկայի սենց ձևով, էլի, երևի. չգիտեմ տենց ա: Իսկ մերը հիմնականում էղել ա, նու, չէ, չեմ ասում՝ չի էղե, շատ քիչ ա էղե, բայց հիմնականում, որ էն չեղածի հաշիվները շատ են, սովորական էրկաթից կասկեք էին, բաց, բրոնիկները հիմնականում իրանց շատ լավ էր: Ես նայել եմ, էլի, իրանց բրոնիկները էդ մեռածների վրա, գիտեմ. սենց վիզը փակ, հետևն ու դեմը ռեզինները դրած:*

***Ժամկետային զինծառայող, տղամարդ, 20 տարեկան***

Զենքերի անհամարժեքությունը հայկական բանակում առաջացրել է անզորության զգացում: Դա սուր է արտահայտվում հատկապես այն պատմություններում, երբ հարձակվող ադրբեջանական բանակի զինատեսակները ի զորու են եղել խոցել հայկական կողմին այնպիսի հեռավորությունից, որը հայկական կողմի զինատեսակների համար անհասանելի է եղել: Այս իրավիճակը հայկական կողմի զինվորների շրջանում առաջացրել է անհուսության վիճակ, քանի որ առկա զինատեսակները հնարավորություն չեն տվել խոցել հակառակորդին:

*Դրոնները որ մեր վրով թռնում էին, մենք անհույս կրակում էինք դրանց վրա: AK-ն 3 կմ ա կրակում, բայց դրանք 5-6 կմ-ի վրա էին թռնում, պիտի շատ բախտդ բերեր, որ կպներ: Հեռավորությունը շատ մեծ էր: Իսկ էդ բայրաքթարները կոնկրետ 12 կմ են թռնում, իսկ միակ բանով, որ կարաս իրան խփես, կոնկրետ զինվորը, տենց բան չկա: Գնդացիրը 3.5 կմ ա կրակում, զինվորի մոտ գնդացիր ա, զինվորները ոչ մի բան չէին կարա անեին: Ինքը պետք ա շատ ցածր թռներ, որ կարանայիր խփեիր: Ահավոր շատ էդ կամիկաձեներից կային, որ թռնում էր օդ ու միանգամից ընկնում էր կոնկրետ նշված տեղերի վրա:*

***Պահեստազորային, տղամարդ, 26 տարեկան***

Եթե ամփոփենք զենքի ու զինտեխնիկայի տեսանկյունից հայկական բանակի նկարագրությունը, ապա կարելի է ասել, որ պատերազմի մասնակիցների պատմություններում հիմնականում առանձնացվում են հետևյալ առանձնահատկությունները.

- Հայկական բանակը չի տիրապետել զենքի մի շարք տեսակների, որոնց տիրապետել է ադրբեջանական բանակը: Դրանք հիմնականում անօդաչու թռչող սարքերն են եղել, հրետանու ժամանակակից միջոցները, զրահատեխնիկայի միջոցները, արդիական տանկերը, ֆոսֆորային զենքը:
- Հայկական բանակն ունեցել է կարևոր զինատեսակների անբավարարություն: Մասնավորապես, խոսքը վերաբերում է հակաօդային պաշտպանության միջոցներին, որոնք, պատերազմի առաջին օրերին ադրբեջանական բանակի կողմից թիրախավորվելով շարքից դուրս բերվելուց հետո, այլևս չեն փոխարինվել նորերով՝ պարզապես պահեստային տարբերակներ չունենալու պատճառով: Հակաօդային պայքար վարելու համար այլ զինատեսակներ նույնպես չեն բավարարել:
- Զենքի այն տեսակները, որոնց տիրապետել է հայկական բանակը, հաճախ հին են եղել ոչ միայն բարոյապես մաշվածության տեսանկյունից, այլ նաև՝ ֆիզիկապես:
- Զենքի տեսակներ են եղել, օրինակ՝ հրանոթներ, որոնք ոչ միայն հին են եղել, այլ նաև՝ անորակ, որոնք պիտանի չեն եղել ինտենսիվ պատերազմ վարելու համար, երբեմն խափանվել են ու շուտ շարքից դուրս եկել:
- Բանակն ունեցել է նաև ժամանակակից հանդերձանքի պակաս: Սաղավարտները եղել են բավականին հին, արդիական մարտ վարելու համար անպետք, անվտանգության ապահովման տեսանկյունից՝ ոչ արդյունավետ: Հատկապես պահեստազորայինների ու կամավորականների հանդերձանքում չեն բավարարել զրահաբաճկոնները: Եղել է նույնիսկ տաք հագուստի պահանջ:

## 2.2. Զորքի նկարագիրը բանավոր պատմությունների միջոցով

Գրանցված պատմություններից շատերում հայկական բանակի նկարագրության մեջ հստակ առանձնացվում են վարքագծային զգալի տարբերություններ ժամկետային զինծառայողների, պայմանագրային զինծառայողների, կամավորականների և զորակոչված պահեստազորայինների բանակային վարքագծում: Բոլոր պատմություններում կարմիր թելի պես առկա են այն նկարագրություններն ու պնդումները, որ ժամկետային զինծառայողները, այսինքն՝ 18–20 տարեկան զինվորները, մարտի դաշտում եղել են ամենից կազմակերպված և արդյունավետ գործողները: Հատկանշական է, որ *զորք* ասելով՝ շատերը հենց նրանց նկատի ունեն: Այսինքն՝ շատերի խոսքում *զորք* բառի գործածումը չի նույնականացվում պահեստազորայինների ու կամավորականների հետ: Ժամկետային զինծառայողների վարքագծի նկարագրություններում նրանք ներկայացվում են որպես նվիրված, պատասխանատու, պայքարող, կազմակերպված, սեփական զենքին տիրապետող, խիզախ զինվորներ:

> *Ես, ասենք, չէի պատկերացնում, որ մեր 18 տարեկան զինվորը կարա մեր ՄՈԲ-ին կամ կամավորին, ասենք՝ 30 տարեկան, 40 տարեկան, կարա տենց ավելի հասուն մարդկանց, կարա տենց գերազանցի, ու որ կարա էտքան պետությունների դեմ ու էտքան վարձկանների դեմ 44 օր կռիվ տա: Ես չէի կարա պատկերացնեի, որ էտքան բանը կարար լիներ, ու էտ հին զենքերով դաժը, որ մեր թշնամին դաժը չէր էլ օգտագործում տենց զենքեր, չկար էլ դաժը իրա մոտ տենց հին զենքեր:*
>
> ***Կամավորական, միջին տարիքի տղամարդ***

Որոշ նկարագրություններում ժամկետային զինծառայողների վարքագիծն ավելի բարձր է դասվում, քան նույնիսկ պահեստազորային սպայակազմինը:

> *18 տարեկան էրեխեն, 18, 19, 20 տարեկան էրեխեն իրանց ավելի լավ, տղամարդավարի, դոշ տված կռիվ են անում, քան թե 30, 40 տարեկան*

*գնդապետ, փոխգնդապետ կամ նման ինչ-որ երևույթներ: 18 տարեկան էրեխեքը ավելի լավ էին իրանց դրսևորում, իրանք իրանց նպատակը դրած, իրանք առաջ էին գնում:*

***Կամավորական, տղամարդ, 42 տարեկան***

*Սպայակազմի հետ կապված հիմնախնդիրը:* Սպայակազմի մասին պատմությունները և գնահատականները շատ տարբեր են: Եթե փորձենք խմբավորել ըստ գնահատականների, ապա կարելի է առանձնացնել չորս հիմնական խումբ՝

- պաշտոնապես ծառայության մեջ գտնվող, սեփական գործին հմուտ տիրապետող, գրագետ, պատասխանատու սպաներ.
- պաշտոնապես ծառայության մեջ գտնվող, սակայն իրենց գործին ոչ շատ լավ տիրապետող սպաներ.
- հատկապես հատուկ նշանակության ջոկատային կարգավիճակով պայմանագրային ծառայության մեջ գտնվող սպաներ, ռազմական գործի մեջ հմուտ, կազմակերպված, տեղանքում լավ կողմնորոշվող, որոշումներ կայացնելու ունակությամբ օժտված, բարոյահոգեբանական բարձր պատրաստվածությամբ.
- պահեստազորում գտնվող սպաներ, որոնք չունեն որոշում կայացնելու, արագ կողմնորոշվելու, կազմակերպելու և առաջնորդության ունակություններ, անձնապես խիզախ չեն, չունեն բավարար գիտելիքներ տեղանքի մասին, չունեն մարտ վարելու բավարար ունակություններ և այլն:

Շատերն են նշում. որտեղ որ եղել են իրենց գործում հմուտ սպաներ, այդ ջոկատները շատ ավելի կազմակերպված են կռվել, խուճապի չեն մատնվել, նույնիսկ շրջափակման մեջ ընկնելու դեպքում կարողացել են ինքնակազմակերպվել և սպաների ղեկավարությամբ, հաջող մարտ վարելով ու դիրքավորվելով, դիմադրել են և նվազագույն վիրավորներ կամ զոհեր ունենալով՝ դուրս են եկել ծանր իրավիճակներից:

*Հրամանատարությունից շատ-շատ բաներ են գալիս: Մեր հրամանատարությունը շատ լավ էր, ու մենք դրա շնորհիվ շատ լավ մարտեր ենք տվել, դուրս ենք բերել շրջափակման մեջից 200 հոգանոց*

*վաշտը: Տեղանքը իմանալով՝ կոնկրետ մեր վաշտի հրամանատարը, տեղանքը իմանալով, շատ սենց հաշվարկված քայլեր էր անում:*

***Կամավորական, տղամարդ, 27 տարեկան***

Գրանցված բոլոր պատմություններում շատ բարձր գնահատականներ են տրվում նվիրված, պարտքի ու զինվորական պատվի բարձր զգացում ունեցող սպաներին: Առանձնապես կարևորվում է ցածր ու միջին սպայակազմի դերը, որոնք ոչ միայն կարողացել են կազմակերպել զինվորներին, այլև նրանց հավասար իրականացրել են այլ բնույթի աշխատանքներ, ընդհուպ՝ զենք-զինամթերք բարձելն ու բեռնաթափելը: Զինվորների համար չափազանց կարևոր է եղել սպաների անձնական օրինակը: Խիզախ, նվիրված սպաների վարքագիծը վարակիչ է եղել նրա ծառայակիցների ու ենթակաների համար:

*Նու, մեր դասակի հրամանատարը շատ ուժեղ տղա էր, էլի, դուխով: Իրան մի երկու հատ ասկոլկա էր կպնում՝ թևին, բան, ինքը ասում էր՝ հեսա շուտ ըստե կապեմ, ես էլի հելնեմ: Բայց հետո որ հետաքրքրվել եմ, մի երկու օր մնացել ա, նոր են հանե, չեն հանե, էլի, առաջի օրը: Բայց ուզում էր էթար էլի, դաժը ընդե կռիվ էր անում, ասում էր՝ ֆսյո, ինձ ավտո տվեք, էթամ, իմ տղերքը ընդե պոստերում մենակ են:*

***Ժամկետային զինծառայող, շարքային, 20 տարեկան***

Եթե փորձենք ընդհանրացնել դրական նկարագրվող սպայի կամ հրամանատարի հատկանիշները, ապա հիմնականում կարելի է առանձնացնել հետևյալները.

- զինվորներին կազմակերպելու և առաջնորդելու հմտություններ.
- զինվորական գործին տիրապետելու պրոֆեսիոնալիզմ.
- բարոյահոգեբանական հատկանիշներ, հատկապես՝ անձնական խիզախություն և ենթակա զինվորների հանդեպ պարտքի զգացում.
- զինվորների հանդեպ հոգատարություն և զորքի ոգին բարձր պահելու հմտություններ.
- որոշումներ կայացնելու և պատասխանատվություն ստանձնելու հատկանիշներ:

Սպայական կազմի գործոնը պատերազմում շատ մեծ դերակատարում է ունեցել: Բոլորի պատմություններում հնարավոր  է հանդիպել սպաների ու հրամանատարների մասին դիտարկումներ: Դրանք կա՛մ խիստ բացասական են, կա՛մ շատ դրական: Դրականի կամ բացասականի այս հստակ սահմանազատումը սպաների ու հրամանատարական կազմի վերաբերյալ վկայում է պատերազմի ընթացքում սպայակազմի որոշիչ նշանակության գիտակցման մասին:
Այս պատերազմը բնութագրվում է նաև նրանով, որ շատ դրական գնահատականների կողքին կան բազմաթիվ պատմություններ, որոնցում նկարագրվում են հրամանատարական ու սպայական կազմի թերի ու դատապարտելի կողմերը: Պատահական չէ, որ պատերազմում ծանր կորուստները պայմանավորված են եղել նաև հրամանատարական կազմի հետ ծագած խնդիրներով: Կան նաև բազմաթիվ պատմություններ՝ կապված ոչ կոմպետենտ հրամանատարների հետ, որոնք շատ լուրջ խնդիրներ են ստեղծել, հայտնվել անորոշ, խառը, անկազմակերպ և խուճապային իրավիճակներում:

> *Ես որոշել էի գնայի նախարարություն, ասեի՝ գիտե՞ք ինչ կա, ձեր էս զորամասում բաներ ա կատարվում, որ ոչ մեկ չի կարում ղեկավարի: 200 հոգի գտնվում ա մի հատ ապուշի ղեկավարության տակ: Էդ ո՞նց ա տենց լինում, որ ինքը կարա բարձր խոսքեր ասի, բայց ճանապարհի կեսից հետ գնա: Հասկանու՞մ եք՝ այ, էս մասը էս մեր ազգի թերությունն ա:*
>
> ***Կամավորական, տղամարդ, 29 տարեկան***

Ուշագրավ է, որ որոշ տեղերում զինվորները շատ ավելի կազմակերպված, նպատակային ու գրագետ են կռվել և իրենց մարտական հատկանիշներով գերազանցել են սպաներին: Ըստ առանձին նկարագրությունների էլ՝ որոշ տեղերում նկատելի է եղել սպաների անբավարարությունը: Եղել են դեպքեր, երբ սպաների պակասի պատճառով սպայի գործառույթը դրվել է աչքի ընկած զինվորի վրա:
Սպաների պակասության բացատրությունները տարբեր են: Հիմնական բացատրությունները հետևյալներն են: Նախ՝ բավականին տարածված են այն դիտարկումները, որ բանակը պարզապես ունեցել է ոչ բավարար քանակի սպաներ: Նրանց մի մասն էլ բավականաչափ մարտական

փորձառություն չի ունեցել, որպեսզի պատերազմական իրավիճակում հմուտ կերպով կարողանա իրականացնել իր գործառույթը:

*Բանակը թերություններ ունեցել է, ու ամենամեծ թերություններից մեկն էլ էս դարում, էս տարիներին առավել ևս սպա չկա, սպայի քչություն ա, շատ մեծ խնդիր ա: Սովորական դասակի հրամանատար չկա:*

***Ժամկետային զինծառայող, շարքային, 20 տարեկան***

*Դե, սպայակազմի թերությունը շատ ա իլալ: Ասենք՝ մինը նա՝ մի դիրքում պիտի մի 10 զինվորի կողքին 1 հատ աֆիցեր գոնե ինի, բայց հիմնականում տա ես չեմ էլ տեսալ, քիչ տոկոս ա իլալ, կարող ա փախալ են:*

***Կամավորական, միջին տարիքի տղամարդ***

Երկրորդ՝ այն սպաները, որոնք պատերազմի ժամանակ զորակոչվել են պահեստազորից, շատ դեպքերում չեն ունեցել բավարար մարտական ու բարոյահոգեբանական պատրաստվածություն, չեն կարողացել պատշաճ կերպով իրականացնել իրենց հրամանատարական պարտականությունները, ինչի հետևանքով հաճախ խուճապի են մատնվել, կորցրել են զորքի վստահությունն ու հարգանքը և, օգտվելով խառը, անկազմակերպ ու խուճապային իրավիճակներից, խուսափել են ակտիվ մարտական գործողություններին մասնակցելուց կամ երբեմն նույնիսկ դիմել են փախուստի:

*Ես որ ծառայում էի, նույն բանակն ա էլի. բարդակ: Նույն բանակը, ոնց ես տեսել էի, նույնը կռվի ժամանակ էր: Որ ծառայած չլինեի, իհարկե, ապշելու էի՝ ո՞նց կարա սենց լինի, ո՞նց կարա չիմանա աֆիցերը՝ ուր ա տանում 20 հոգու: Բայց դե, ես որ ծառայել եմ, գիտեմ, էլի, ոնց ա. այ տենց:*

***Կամավորական, տղամարդ, 24 տարեկան***

*Պայմանագրային զինծառայողների* վարքագիծը բավականին տարբեր է նկարագրվում: Առանձնացվում են հատկապես պրոֆեսիոնալ պատրաստվածություն ունեցող հատուկջոկատայինները, հետախույզները և ռազմական փորձառությամբ աչքի ընկնող զինվորականները: Պայմանագրայինների այս խումբը տարբերակվում է սահմանամերձ մարզային բնակավայրերում ապրող կամ զորամասերի հարևանությամբ գտնվող բնակավայրերի քաղաքացիական բնակչությունից պայմանագրով զորամասերում աշխատողներից և նկարագրվում է դրական շեշտադրումներով: Մասնավորապես, կարևորվում են նրանց մարտական ու բարոյահոգեբանական պատրաստվածությունը, տեղանքում կողմնորոշվելու և որոշումներ կայացնելու, մյուսներին՝ հատկապես ժամկետային զինծառայողներին աջակցելու պատրաստակամությունն ու զինվորական հմտությունները:

*Հիմնականում առաջինը, որ աչքի ա ընկե, էտի եղել ա զորքը, ժամկետային զինծառայողները, որովհետև իրանք ընդամենը 18–19, 20 տարեկան տղաներ են, որ մինչև վերջին վայրկյանը, արյան վերջին կաթիլը իրանք կռիվ էին տալի պոստում ու ոչ մի քայլ հետ չեն նահանջում, բացարձակ: Երկրորդը արդեն գալիս էր սպայական կազմը: Սպայական կազմն էր, էլի, հիմնականում տեղանքը լավ իմանալով, լավ հրամանատարությունների սկզբունքով, շնորհքով սկսել ա մեր լավ բոյի մարտնչելը, էլի: Հրամանատարությունից բացի՝ արդեն պայմանագրայիններն էին, որոնք հիմնականում ծառայում են, իրանց մեջ էլ չի եղել նենց մարդ, որ փախնի, ու հիմնականում բոլորն էլ զորքի նման կռիվ են տալիս ու միշտ զորքին ասում էին՝ մենք ձեր հետ ենք, ոչ թե ձեզնից բարձր կամ ինչ ենք, այլ մենք ձեզ հավասար մարդիկ ենք, ձեր ախպերներն ենք: Ամեն ինչը, դաժը վախտ ա էղել ասել են, դաժը ձեր մտքերն էլ կարանք մենք լսենք, հասկանանք, կոնկրետ, խոսքի, տենանք ինչ անենք, ոնց անենք, որ ավելի ձեր համար հեշտ լինի ու ավելի հարմար լինի:*

***Ժամկետային զինծառայող, հետախույզ, 20 տարեկան***

Պայմանագրայինների շարքում առանձնացվող մյուս խումբը նրանք են, ովքեր բնակվել են Հայաստանի սահմանամերձ կամ զորամասերին հարևան բնակավայրերում, չեն ունեցել հատուկ մարտական պատրաստվածություն, այլ պարզապես աշխատավարձով անցել են աշխատանքի զորամասում և հիմնականում իրականացրել են հերթապահություն սահմանային դիրքերում: Այս խմբի հանդեպ դրականին զուգահեռ կան նաև քննադատական դիտարկումներ: Չնայած որ մարտական գործողությունների ժամանակ խուճապի չեն մատնվել, չեն դիմել փախուստի, սակայն առանձնապես աչքի չեն ընկել նաև իրենց մարտական պատրաստվածությամբ և գործողությունների արդյունավետությամբ: Գրանցված պատմություններում զորքի այս տեսակի մասին հաճախ են հնչում կարծիքներ, որ ապագայի տեսանկյունից պայմանագրային զինծառայողների պայմանները պետք է էականորեն վերանայվեն: Առաջարկվող կարծիքների համաձայն՝ գերադասելի է համարվում, որ պայմանագրային զինծառայողները կազմված լինեն բացառապես պրոֆեսիոնալ ու լավ մարզված զինվորականներից, այլ ոչ թե մարզային բնակավայրերում բնակվող, միջին տարիքի աշխատազուրկ տղամարդկանցից:

> *Ես պայմանագրային տեսել եմ ծառայության ընթացքում, էդ էլ լրիվ մի հատ ուրիշ բան ա: Ի՞նչ պայմանագրային, որ իրանք կրթություն չունեն ու Ա-ն Բ-ից չեն տարբերում ու պրոստը 200 հազար աշխատավարձ են ստանում, նաև սննդային պաշար ամսական: Դա իրանց ասածներն եմ ասում: Տենց պայմանագրայինը ինչներիՙս ա պետք: Թույլ, ո՛չ կրթական բանով տարբերվող, ո՛չ աչքի կայծով տարբերվող պայմանագրային ու՞մ ա պետք:*
>
> ***Կամավորական, տղամարդ, 26 տարեկան***

Հաջորդ խումբը, որը գրանցված պատմություններում հստակ տարբերակվում է զորքի մնացած տեսակներից, *կամավորականներն ու պահեստազորայիններն* են: Կամավորականների նկարագրություններն ավելի դրական են, քան պահեստազորայիններինը: Կամավորականները հիմնականում բնութագրվում են որպես բարոյահոգեբանական առումով կայուն, ժամկետային զինծառայողներին աջակցելու և մարտական

գործողություններին պատրաստակամ զինվորականներ: Հատկապես արցախցի կամավորականների վերաբերյալ շատ դրական կարծիք կա, և նրանց մասին ինչած գնահատականներում հատուկ առանձնացվում են տեղանքի փայլուն իմացությունը, մարտական գործողությունների ընթացքում հստակ ու սթափ կողմնորոշվելու ընդունակությունը, սառնասիրտ գործելու կարողությունը, նվիրվածությունը և խիզախությունը: Հայաստանից գնացած կամավորականների բնութագիրը բարոյահոգեբանական տեսանկյունից հիմնականում դրական է: Նրանց մեջ, սակայն, ըստ տարիքային հատկանիշի, առանձնացվում են արդյունավետներն ու քիչ արդյունավետները: Առավել արդյունավետ է համարվում 35–40 տարեկանների տարիքային խումբը: 45-ից բարձր, 50-ն անց տարիքային խմբերի կամավորականների գործողությունները բարոյահոգեբանական տեսանկյունից հիմնականում բարձր են գնահատվում, սակայն մարտական տեսանկյունից՝ ոչ այնքան արդյունավետ: Կամավորականների գնահատման համար առանձնացվող մեկ այլ հատկանիշ էլ համարվում է գիտակցականության ու կարգապահության խնդիրը: Կամավորականների մեջ քիչ չեն եղել այնպիսիները, որոնք չեն ունեցել մարտական գործողությունների մասնակցության փորձառություն, որոնք լավ չեն պատկերացրել, թե ուր են գնում, ինչ տիպի պատերազմ է իրենց սպասում: Կամ պատկերացրել են, որ թեթև պատերազմ է, և պատերազմի մասնակցությունը դիտել են որպես հերոսանալու և հետագայում իրենց միջավայրում ինքնահաստատվելու ու պարծենալու հնարավորություն:

> *Նախ՝ իրանք չէին գիտակցում, թե ուր են գնում, չնայած որ պետք ա գիտակցեին՝ լինելով ծառայած մարդիկ: Իրանք գնում էին նենց, որ տունը պարապ եմ, հիմա գնում եմ, ավելի շատ ոնց որ տենց վիճակ լիներ, կամ հարևանները խոսալու էին դրա մասին, դրա համար էլ էկել եմ:*
>
> ***Կամավորական, տղամարդ, 27 տարեկան***

Նրանք, սովորաբար, պատերազմի դաշտում բախվելով դաժան իրողություններին ու մահվան սպառնալիքին, շատ արագ սթափվել են և կա՛մ կարգի են հրավիրել իրենց, կա՛մ, մատնվելով խուճապի, դիմել են փախուստի ու ինչ-որ կերպ, տարբեր պատճառաբանություններով, դարձել հետ՝ Հայաստան:

Պատերազմի մասնակիցների մեջ ամենից քննադատական գնահատականները հնչում են *պահեստազորայինների* մասին: Իհարկե, պահեստազորայինների մեջ շատ են եղել այնպիսիները, որոնք հիշատակվում են որպես ժամկետայինների հանդեպ հոգատար, պատերազմին պատասխանատվությամբ մասնակցած ու կազմակերպված անձինք, սակայն շատ են հիշատակվում նաև նրանցից կազմված ջոկատներում անկազմակերպվածությունն ու խուճապի երևույթները:

*Իսկ ՄՈԲ-ը, ՄՈԲ-ից հիմնականում, նու, սենց ասած, երևի ես շատ քիչ մարդ եմ տեսել, որ կռվող են էղե իրանք: Հիմնականում բոլորն էլ, որ գալիս էին, բոլորն էլ տուն էին ուզում գնային: Կեսը, չգիտեմ, հիվանդություն ձեռք բերելով, կեսը եսիմ ինչեր անելով... Դաժը դեպք ա եղե, որ նստել են սկոռու հետ, մահացած զինվորների հետ, գնացել են տուն՝ քցելով իրանց մեջը հազիվ, մի կերպ, էլի:*

***Ժամկետային զինծառայող, 20 տարեկան***

Պահեստազորայինների միջավայրում նման վարքագծի ձևավորման հիմնական պատճառներից մեկն այն է եղել, որ մարդիկ, նախ, լավ պատկերացում չեն ունեցել, թե ինչ կարգի պատերազմ է իրենց սպասվում, և իրենց դերակատարությունը ինչ պետք է լինի: Պատերազմի սկզբին՝ հատկապես առաջին օրերին զորակոչվածների շրջանում շատ ավելի ռոմանտիկ, ռազմահայրենասիրական պատկերացումներ են եղել պատերազմի մասին, քան մարտի դաշտում տիրող իրական վիճակին համարժեք տեղեկատվություն: Շատերի համար այս պատերազմին վերաբերող նախնական տրամադրությունները եղել են Արցախյան առաջին պատերազմի ֆիդայական պատմությունների համատեքստում:

*Աշխարհազորը՝ էն, ինչ որ տեսել եմ, մի երեք տեղ տեսել եմ՝ մտածում եմ՝ կարամ նկարագրեմ: Էկել են: Էդ էն մարդիկ են, ովքեր տարված էին առաջին պատերազմի մոտիվներով: Չի ստացվում: Իրանք վերցրեցին իրանց զենքը, բարձրացան սարը, հասկացան, որ էնտեղ ԱԹՍ-ներ կան, հետ իջան: Վերջ, վերջացավ աշխարհազորը: Ըտեղ էլ չկա ինչ-որ կառավարում, որ փոխի իրանց մտածելակերպը: Տարիներ են անցնում, պիտի փոխվեր, բայց չէ... Էդ՝ աշխարհազորի մասին:*

*Ժամկետայինները՝ հրաշք, հրաշք. էդ իմ կարծիքով, էլի: Կոնկրետ որտեղ ես տեսել եմ՝ կանոնակարգված, ճիշտ աշխատել են:*

***Կամավորական, տղամարդ, 24 տարեկան***

Ըստ տարածված նկարագրությունների՝ աշխարհազորայինների հետ կապված նշված հիմնախնդիրները ձևավորվել են մի քանի հիմնական պատճառներով: Նախ՝ նրանք բավականաչափ լավ նախապատրաստված չեն եղել: Սրա պատճառները գլխավորապես երկուսն են: Առաջին՝ աշխարհազորայինները չեն անցել պարբերական, ամենամյա մարտական վերապատրաստումներ, չեն ունեցել մարտական գործողությունների մասնակցության համար անհրաժեշտ հմտություններ և լայն առումով պատրաստված չեն եղել այս կամ այն զորատեսակում ծառայություն անցնելու: Երկրորդ՝ լուրջ խնդիր է եղել զորքին նրանց ինտեգրումը: Երրորդ՝ որոշիչ թերություններից է եղել պահեստազորայիններին առաջնորդող կոմպետենտ հրամանատարության անբավարարությունը, ինչի հետևանքով մարդիկ չեն կարողացել հասկանալ, թե ինչ է պետք անել, և ինչպես պետք է իրենք գործեն: Չորրորդ՝ զորակոչից առաջ նրանց հետ իրականացված նախապատրաստական աշխատանքների պրոֆեսիոնալ մակարդակը բավական ցածր է եղել:

*Էտ վերապատրաստում անվանել չէր կարելի, որովհետև համատարած անտարբերություն էր: Ասենք՝ 200 մարդ կար էնտեղ, դասերի ժամանակ էտ հրանոթների մոտ մնում էր ընդամենը 20 կամ 30 մարդ, մնացածը կարծես շատ անտարբեր էին, ու հոկտեմբեր 8-ի երեկոյան մեզ տարել են Արցախ արդեն:*

***Պահեստազորային, հրետանավոր, 29 տարեկան***

Նաև՝ ոչ բոլորն են, որ մինչև ճակատ մեկնելը անցել են նախապատրաստական փուլ: Հատկապես պատերազմի առաջին օրերին զորակոչվածներից շատերը, ըստ իրենց պատմությունների, միանգամից մեկնել են ճակատ:

*Հա, մեր պահեստազորը վերջին անգամ ե՞րբ են, վերջին տասնամյակում երբ են կանչել, ինչ-որ մի բան սովորացրել (տոնը բարձրացնում է): Սովորացրել են ընդամենը վերջին մի, կանչել են, մի քանի օր դաժե, անգամ ստորաբաժանումներ են էղել, որ դաժե մի հատ ինստրուկտաժ էլ չեն արել, ավտոմատը տվել են, ուղարկել են: Ֆսյո:*

***Պահեստազորային, սպա, 43 տարեկան***

Ամենակարևոր բաներից մեկը, որը պակասել է ամբողջ զորքին, բայց հատկապես՝ պահեստազորայիններին, բարոյահոգեբանական պատրաստվածությունն է եղել:

*Օրինակ՝ ՄՈԲ-ը եթե ինչ-որ ձևով պատրաստ լիներ, զորավարժություններ լինեին, տանեին, մարդկանց ցույց տային, հոգեբանորեն պատրաստեին, կարար ինչ-որ արդյունք տար, բայց մարդը մի քանի ժամ առաջ տնից, կոպիտ ասած, հելել, էկել ա պատերազմ, ի՞նչ կարա անի:*

***Պահեստազորային, տղամարդ, 24 տարեկան***

Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ թե՛ երկարաժամկետ և թե՛ կարճաժամկետ կտրվածքով պահեստազորայինների վերապատրաստման ու նախապատրաստման աշխատանքները պատշաճ կերպով չեն իրականացվել, ինչի հետևանքով նրանք ո՛չ մարտական պատրաստվածության տեսանկյունից և ոչ էլ հոգեբանական առումով պատրաստ չեն զգացել ինտեգրվելու զորքին և մտնելու մարտական գործողությունների մեջ:
Արդեն նշվեց, որ հիմնախնդիրների մի զգալի մասն էլ առնչվել է պահեստազորայիններին համակարգող և պատշաճ հմտությունների տիրապետող սպայակազմի անբավարարությանը: Նրանց ղեկավար նշանակված սպաները հաճախ իրենք էլ, տարիներ շարունակ լինելով պահեստազորում, որպես հրամանատարներ իրենց պարտականությունները կատարելու համար չեն ունեցել բավականաչափ պատրաստվածություն և, կորցնելով ինքնավստահությունը, չեն կարողացել կազմակերպել ու կառավարել իրենց ենթակայության

տակ գտնվող զինվորներին: Այսինքն՝ անհրաժեշտ է եղել պահեստազորայինների հրամանատարությունը հանձնել ավելի հմուտ ու փորձառու սպայակազմի, ինչի պակասը զգացվել է ամենուր և հատկապես պահեստազորայինների ջոկատներում:
Պահեստազորայինների հետ կապված վերոնշյալ խնդիրների առաջացման մեջ բացասական ազդեցություն է ունեցել նաև բանակի բոլոր օղակներում տիրող կազմակերպչական խառնաշփոթը: Սկսած զինկոմիսարիատներում ըստ մարտական պատրաստվածության բնագավառի զորակոչի կազմակերպման բացթողումներից, վերջացրած գործող բանակին պահեստազորային ջոկատների ինտեգրման գործի կազմակերպումով, առկա են եղել կազմակերպչական լրջագույն թերություններ: Գրանցված պատմություններում կարելի է հանդիպել բազմաթիվ դեպքերի նկարագրության, երբ տանկիստին զորակոչել են հետևակ, գնդացրորդին՝ հրետանի և այլն:
Մեկ այլ լրջագույն խնդիր էլ եղել է հակառակորդի կողմից պատերազմ վարելու մեթոդաբանությունը: Խոսքը անօդաչու թռչող սարքերի, հրետանու և օդային ուժի կիրառմամբ ինտենսիվ հարձակումների իրականացման մասին է, որի պայմաններում ընդամենը ավտոմատով զինված և անընդհատ թշնամու հրետակոծության թիրախում հայտնված պահեստազորայինների մեջ առաջացել է սեփական անօգտակարության, պատերազմի դաշտում իր ներկայությամբ որևէ բան փոխելու անհեռանկարայնության զգացողություն:
Լրջագույն խնդիր է եղել նաև, ռազմական մարդաբանության եզրաբանությամբ ասած, «էքզիստենցիալ վախի» հաղթահարման հոգեբանական խնդրի լուծումը: Շատերն են պատմում, որ պահեստազորայինները տարիքի բերումով ավելի սթափ են դատել ու գնահատել մարտադաշտում տիրող իրավիճակը, ինչի հետևանքով շատերը եկել են այն եզրակացության, որ շանսեր չկան զինտեխնիկայի նման հետամնացության ու անբավարարության պայմաններում հակառակորդին լուրջ դիմակայություն ցուցաբերելու: Ավելին՝ նման իրավիճակում մահվան սպառնալիքը չափազանց մեծ է եղել, որի դեմ զինվածության առկա մակարդակի պայմաններում հայ զինվորը լիակատար անպաշտպան վիճակում է հայտնվել, և եզրակացությունն այն է եղել, որ անիմաստ է հավանական մահվանն ընդառաջ գնալը:

*էդ մարդիկ տեղյակ չեն էղել, չեն էլ ուզեցել առաջ գնան, որովհետև բացատրությունը սենց ա՝ գնանք մեռնե՞նք: Այսինքն՝ իրանց կյանքը իրանց համար թանկ ա, բայց էն 18 տարեկան, 19, 20 տարեկան էրեխեքը, մեզ էլի մեջից հանում եմ, մենք տեսել ենք ամեն ինչ, 18, 19, 20 տարեկան էրեխեքը, որ դոշ տված գնալուց են էղել, ու իրանց կյանքը իրանց համար զրոյ ա, էդի ճիշտ չի:*

***Կամավորական, տղամարդ, 49 տարեկան***

Նկատենք, որ բերված կարծիքների ու նկարագրությունների միջև հստակ տարբերություններ կան՝ կախված այն բանից, թե մարդը ռազմաճակատի ինչ հատվածում է եղել, կազմակերպվածության ինչպիսի մակարդակ է եղել ջոկատում, որտեղ նա կռվել է, ինչպիսին են եղել տվյալ ջոկատի հրամանատարն ու սպայակազմն ընդհանրապես: Պատերազմի այն հատվածներում, որտեղ ընթացել են ինտենսիվ, ամենօրյա կռիվներ, խոսքը վերաբերում է հատկապես Ջաբրայիլի, Հադրութի և նմանատիպ թեժ կետերին, հիմնականում հանդիպում են ինքնանկարագրի այնպիսի օրինակներ, որոնցում հայկական զորքը նկարագրվում է որպես վատ կազմակերպված, հին զինատեսակներով զինված, նահանջող, գործողությունների ծրագիր չունեցող, երբեմն նաև խուճապահար ու անհույս պատերազմող: Սակայն անկախ տեղամասից, զորքի տեսակից, պատերազմական գործողությունների ինտենսիվության ու խտության աստիճանից՝ բոլոր պատմություններում կա մի բան, որն անփոփոխ է և բնութագրական բանակի ինքնանկարագրում. 18–20 տարեկան ժամկետային զինվորներն ամենից կազմակերպվածն են եղել, պատասխանատուն ու մարտունակը:
*Զինվորի մասին պատկերացումների փոփոխությունը*: Ընդհանրապես, այս պատերազմն առանձնահատուկ էր նրանով, որ փոխվեցին զինվորի մասին պատկերացումները: Եթե նախկինում հայրենիքի պաշտպանի դերում հանդես եկողը և հերոսը կամավորական ֆիդային էր, ապա այս պատերազմում հերոսը 18–20 տարեկան տղաներն էին, որոնք բոլորից պատրաստվածն ու պատասխանատուն եղան: Մնացած տարիքի տղամարդիկ, որոնք եղել են ճակատում, նշում են, որ իրենց վերաբերմունքը այդ տարիքի տղաների հանդեպ ամբողջովին փոխվել է, և մեծ հարգանք է ձևավորվել նրանց կազմակերպվածության,

պատասխանատվության, խիզախության ու սառնասրտության հանդեպ: Կարելի է ասել, որ սա նշանային և բավականին նշանակալի երևույթ է, քանի որ առաջին անգամ, առնվազն վերջին մի երկու հարյուր տարվա պատմության մեջ, սրտի ու ոգու կանչով առաջնորդվող ռազմիկի փոխարեն, առաջին պլան է մղվում ինստիտուցիոնալ կառույց ներկայացնող մարտիկը: Սա նաև հետաքրքիր շրջադարձ կարող է դառնալ ներհասարակական ու ներքաղաքական առումներով: *Նախորդ պատերազմի հերոսը կարգ ու կանոն չսիրող, բայց երկրի տիրոջ իրավունքին հավակնող, հայրենասիրության խորհրդանիշը համարվող երկրապահն էր, որն ի վերջո վճռորոշ պահին դեմ գնաց պետական բարձրագույն իշխանությունը ներկայացնող ինստիտուտին ու դարձավ Արցախի հարցի շուրջ հետագա ամբողջ քաղաքական ծախողումների գլխավոր պատասխանատուն: Այս պատերազմի հերոսը սովորական զինվորն էր, որը պատերազմի ավարտից հետո հրաժարվեց դեմ գնալ պետական որևէ ինստիտուտի,* և այսօր այդ սերնդի կարծիքից բխող քաղաքացիական դիրքորոշումը, վերջին հաշվով, կարող է վճռորոշ լինել հետագա գործընթացներում:

## 2.3. Գործողությունների և վարքագծային պրակտիկաների նկարագրությունը

Պատերազմի մասնակիցների պատմություններում ինքնանկարագրության կարևոր բաղադրիչներից է սեփական գործողությունների կամ վարքագծային պրակտիկաների նկարագրությունը: Շատ կարևոր է ուշադրություն դարձնել նաև այն խնդրին, թե ներկայացված պատմություններում հատկապես ինչն է համարվում նկարագրության արժանի:
Սեփական գործողությունները որպես ***անկազմակերպ ու հախուռն*** նկարագրելը ամենից հաճախ հանդիպող և համարյա բոլոր պատմություններին բնորոշ երևույթ է: Դրա մասին պատմություններ կարելի է լսել շատ տարբեր դրվագների հետ կապված՝ սկսած զինկոմիսարիատներում զորակոչի իրականացումից, վերջացրած պահեստազորայիններին ու կամավորականներին զորքին կցելով, նրանց ռազմաճակատի տարբեր տեղամասերում բաշխելով,

մարտական գործողությունների ժամանակ հրամանատարական մասի և զորքի գործունեությամբ, զորքի տարբեր հատվածների միջև կապի ապահովումով:

*Ամսի 9-ին էկան մեր հետևից, որ տանեին մեզի մյուս գումարտակի կեսը լրացնեին: Մեզ կես-կես էին բաժանել: Էկան էրկու ավտո տարան: Պետք ա տանեին իրանց, հետո գային մեր հետևից, բայց չէկան մեր հետևից, տենց էլ մնացինք: Ո՛չ կապ, ո՛չ ռացիաների մեջ զարյադկա կար, որ կարանայինք կապի դուրս գայինք մեկի հետ: Մի խոսքով՝ նորից մնացինք ըտեղ: Մնացինք ըտեղ, հաջորդ օրը յանիմ ասին՝ պետք ա գան մեր հետևից... հենց էտ ժամանակ էլ էտ դեպքը էղավ, էլի, որ վիրավորվեցի:*

***Պահեստազորային, տղամարդ, 28 տարեկան***

*Մեր էտ ամենամեծ խնդիրը, որ մենք իրար հետ կապ չունեինք: Կողք կողքի դիրքեր էր, ու մենք իրար կապ չունեինք: Իրանք ու՞ր են, ի՞նչ են անում, զոհ ունե՞ն, վիրավոր ունե՞ն, խնդիրը գնում էր դիրքը պահելուն:*

***Կամավորական, տղամարդ, 21 տարեկան***

Էական խնդիրներ են եղել՝ կապված հատկապես պատասխանատու անձանց կողմից որոշումների կայացման, հրամանների արձակման, ընդհուպ՝ մարտական առաջադրանքների ու գործողությունների իրականացման համակարգվածության հետ: Այդ գործողություններն այն աստիճան անկազմակերպ ու թափթփված են եղել, որ որոշ դեպքերում լուրջ վտանգներ են առաջացրել զորքի համար՝ դառնալով մարդկային զոհերի ու վիրավորումների, խուճապային տրամադրությունների ու պատերազմին մասնակցության մոտիվացիայի անկման պատճառ: Նման իրավիճակների առաջացումն հիմնականում կապված է եղել սպայակազմի թույլ պրոֆեսիոնալիզմի, անպատասխանատվության, անելիքների ոչ անհրաժեշտ մակարդակի իստակության, շատ դեպքերում որոշ սպաների կողմից ինքնագլուխ որոշումների կայացման, կարգ ու կանոնը չիմանալու կամ անտեսելու հանգամանքների հետ:

*Նայի, ես, խոսքի, հասարակ բնակիչ եմ, ինձ, խոսքի, պերալ են, ձևավորել են պահեստազորից 420 հոգանոց գումարտակ: 420 հոգանոց գումարտակը ուղեկցում են Ջաբրայիլ, մեզ տվել են պռավադնիկ: Ես տեղանքին լյավ ծանոթ էի, սաղ տարածաշրջանում դաշտավարությունով զբաղվել ենք, ցորեն ենք ըրալ, կյարի ենք ըրալ: Էդ պռավադնիկը, որը պետության կողմից նշանակվել ա, որ պտի մեզ ուղեկցի մարտական էդ կետը, ինքը լրիվ ուրիշ շեղումներով, արենծիռ չունի, բան չունի, ես իրան ասում եմ՝ դու ճիշտ չես մեզի ուղեկցում: Ու սենց ա. ուրեմն կալոնեն որ գնում ա 10 ավտոմեքենա, ամեն մեկը 500 մետր ռաստայանի պտի պահի, որ, ասենք, եթե մեկին խփեն, հետևինը չվնասվի: Ոնց որ շարժվում ենք 10 ավտոմեքենա՝ 2 հատը հասնում ա նշանակված կետ, հետևինը չկա, կալոնեն չկա, նայում ես 4–5 կմ, չկա կալոնա, ասում ես՝ ուր ա կալոնեն, ուր ա աֆիցեր կազմը, ուր ա մեր խումբը, ու նորից գալիս ենք, տենում ենք՝ իրանք մեզանից 10 կմ ներքև: Իրանց հրաման ա էղել, որ էկեք, ստեղ լռվեք, բայց մենք իրանց սաստավից ենք, մեզ թողել են, ասենք, բեսպիլոտնիկների տակ, մենք ուժե տեղ հասել ենք ընտեղ, ուրդե զոհվել ա մեր էդ հրամանատարը, իրա մոտ ենք էղել: Այ, տենց անկազմակերպվածություն ենք տեսել, հիասթափվել ամենաշատը, որ, խոսքի, քեզի թողում են բախտի-բուրախտի, իրանք իրանց կյանքը փրկում:*

***Կամավորական, միջին տարիքի տղամարդ***

Ինչպես կարելի է դատել գրանցված պատմություններից, եղել են դեպքեր նաև, երբ հրամանատարական կազմի քանակական անբավարարության կամ պարզապես բարձրագույն հրամանատարության անբավարար պրոֆեսիոնալիզմի ու անփութության հետևանքով թույլ են տրվել պահեստազորայինների ջոկատների հրամանատարների սխալ նշանակումներ: Ասենք, օրինակ, տանկային զորքերում ծառայությունն անցած սպային նշանակել են հետևակի հրամանատար, ինչը, զինվորների գնահատմամբ, խիստ բացասաբար է ազդել վաշտի կողմից առաջադրանքի կատարման վրա:

*Օրինակ՝ ընդեղ կար հաստիքների խառնաշփոթ: Օրինակ՝ երբ որ ամբողջ կյանքը տանկվի գնդում ծառայած մարդը գալիս ա պեխոտի*

*հրամանատար, այսինքն՝ պետք ա առաջնագիծ պահի, չգիտեմ՝ ուրիշ գործողություններ անի, էտ արդեն կատաստրոֆա ա, ու դրա հետևանքով... Ես զինվոր եմ էղել դրանից մի տարի-տարիուկես առաջ, ու ես լավ պատկերացնում էի, ես տեսնում էի, որ ինքը չի կարողանում, ինքը լավ չի հասկանում, ինքը չի կարողանում վերլուծի իրավիճակը, որովհետև ինքը ուրիշ ստորաբաժանման հրամանատար ա էղել նախկինում, հետո արդեն ծառայությունից դուրս գալուց հետո պատերազմի ժամանակ հետ էր էկել, ու իրան տվել էին էտ հաստիքը՝ պեխոտի վաշտի հրամանատար. մի քիչ անգամ խնդալու ա էտ:*

***Կամավորական, տղամարդ, 21 տարեկան***

Շատ պատմություններում կարելի է հանդիպել հախուռն, անկազմակերպ իրավիճակների նկարագրության՝ կապված զորքի ոչ միայն նահանջի, այլև մարտադաշտում վիրավորներին օգնություն ցուցաբերելու և նրանց դիրքերից բուժկետեր կամ հիվանդանոցներ տեղափոխելու հետ: Բազմաթիվ են պատմությունները՝ կապված այնպիսի իրավիճակների հետ, երբ հակառակորդի որևէ դիրքի գրավման առաջադրանքն իրականացնելու դեպքում առկա են եղել մարտական առաջադրանքի կատարումն ուշացնելու կամ անտեսելու հետևանքով առաջացած ծայրահեղ իրավիճակներ: Քիչ չեն պատմությունները, երբ նման անկազմակերպվածության, ինքնակամ գործողությունների հետևանքով ջոկատի մի մասը հազիվ է խուսափել շրջափակման մեջ ընկնելուց կամ ընկնելով շրջափակման մեջ՝ մի կերպ է կարողացել դուրս գալ այդ վիճակից:

*ՄՈԲ-երից տասնըքանի մարդ ուղարկում են զորքեր՝ ժամկետային զինծառայողների հետ, ասում են, որ պտի պահվի էս պոստը: Ժամկետայինները 18, 19, 20 տարեկան, ՄՈԲ-երի մեջ մի 30, 35, 40 տարեկաններ, գնում են, նստում են էն տեղը, որ պտի պահեն, որ էս խրամաբջիջը պտի պահեն 4 ՄՈԲ՝ իրար փոխելով: Էս կոնկրետ չորս հոգին թողնում-փախնում են, ըստե բաց ա մնում, ու պրիտոմ՝ չեն իմանում մեր զինվորները՝ ժամկետայինները, որ ըստեղ բաց ա, էդ ժամանակ հակառակորդը կոնկրետ նշած տեղից կարում ա շրջափակման մեջ քցի իրանց՝ էտ մնացած քանիսին, էս չորս հոգուն,*

*ով որ թողել-փախել էր, հետո իջել, կոնկրետ ըտե լավ ծեծի են ենթարկում, էլի:*

***Ժամկետային զինծառայող, 20 տարեկան***

Անկազմակերպվածության նկարագրություններում հաճախ կարելի է հանդիպել նաև դրա պատճառները ընդհանուր առմամբ զորակոչիկների՝ հիմնականում պահեստազորայինների ***անկարգապահությամբ***, անլրջությամբ, գիտակցականության ոչ բավարար մակարդակով, իրավիճակի գնահատման անհամարժեքությամբ և ընդհանուր առմամբ թափթփվածությամբ բացատրելու: Ըստ գրանցված պատմությունների՝ այդ անկարգապահությունն ու վարքագծային անլրջությունը սկսվել են արդեն զորակոչի առաջին պահից:

*Նախ՝ իրանք չէին գիտակցում, թե ուր են գնում, չնայած որ պետք ա գիտակցեին՝ լինելով ծառայած մարդիկ: Իրանք գնում էին նենց, որ տունը պարապ եմ, հիմա գնում եմ... Ավելի շատ ոնց որ տենց վիճակ լիներ, կամ հարևանները խոսալու էին դրա մասին, դրա համար էլ էկել եմ: Ըը, շնորհք ա, էլի, ինձ թվում ա՝ էթիկա ա ցանկացած բանի նկատմամբ: Իմ կարծիքով՝ պատերազմը հասարակությունը մաքրող բան ա, իսկ մարդիկ պատերազմ մտնում են կեղտոտ: Իսկ հակառակը պիտի լիներ՝ մտնում են էնտեղ կեղտոտ ու անկարգապահ՝ հողաթափերով, օղիով, վատ արժեքներով, որ ընդհանրապես կարգապահության ու առօրյա ոճի մասին չի խոսում զինվորի: Տնից դուրս ես էկել, գնում ես պատերազմ (թեթև ծիծաղում է), ասենք… Մարդը ո՞նց ա գնում պատերազմ:*

***Կամավորական, տղամարդ, 27 տարեկան***

Իրավիճակը բնորոշող կամավորագրված զինվորականի մեկ այլ նկարագրությունում նույնպես խնդրականացվում է այն իրողությունը, որ պահեստազորայինների ու կամավորականների միջավայրում համարժեք պատկերացում չի եղել պատերազմի լրջության ու իրենց սպասվող իրականության մասին: Շատ դեպքերում մի իրականությունից մեկ այլ իրականության մեջ կտրուկ անցումը, ավտոբուսային

անհոգ «հերոսականության» միջավայրից ռմբակոծությունների ու պատերազմական թոհուբոհի մեջ հայտնվելը շատերի մեջ շոկային վիճակների առաջացման ու խուճապային տրամադրությունների ձևավորման հիմնական պատճառներից են եղել: Բերված նկարագրությունները թույլ են տալիս եզրակացնել նաև, որ ռազմաճակատ ուղարկվող մարդկանց հետ բավականաչափ նախապատրաստական աշխատանքներ չեն իրականացվել, և որ նրանք թե՛ հոգեբանորեն, թե՛ վարքագծային առումով պատրաստ չեն եղել մտնելու մարտի դաշտ:

> *Առավոտ շուտ ավտոբուսը որ շարժվեց, շատ խառը մարդիկ, շատ խառը զրույցներ, ու ես հենց ավտոբուսի մեջ սկսեցի լարվել, որ, արա, էս ինչ անգրագետ են տղերքը, էս ինչ, նու, էտ բառից չխուսափենք, տուպոյ են... Որովհետև հինգ րոպեն մեկ՝ հեռախոսի զանգ. ախպերս, ըստեղ ենք հասե, ախպերս, ավտոյի մեջ ըսքան մարդ ա, դե, մի քառսուն հոգի են... Այ սենց խոսակցություններ: Ընդե, մի հատ ղարաբաղցի տղա կար, ընտանիքին բերել էր ըստեղ, թողել էր ու պարտաճանաչ նստել էր, մեր հետ էթում էր դիրքեր, ու աչքերի մեջ որ նայում էիր, մենակ իրա դեմքի արտահայտությունն էր, որ ասում էր՝ ընդե պատերազմ ա, տղերք, դուք սենց հա-հա, հի-հի գնում եք, ոչ մի բանից տեղյակ չեք:*
>
> ***Կամավորական, տղամարդ, 25 տարեկան***

Պատերազմի մասնակիցների պատմություններից այս մեջբերումներից հնարավոր է  եզրակացնել, որ զորակոչված պահեստազորայինների կամ կամավորականների մեջ եղել են այնպիսիները, ովքեր չեն ունեցել ինքնադիտարկման, սեփական վարքագիծը համարժեքորեն գնահատելու բավականաչափ ունակություններ: Ինչպես քննադատորեն նկատել է կամավորականներից մեկը, այս ունակության ոչ բավարար մակարդակը դարձել է նման մարդկանց խուճապի պատճառ, ռազմաճակատային իրականությունը սթափ գնահատելու, սեփական գործողությունները սառնասրտորեն կազմակերպելու, ինքնակառավարման անընդունակություն: Պատահական չէ, որ հատկապես այն մասնակիցների պատմություններում, որոնցում հանդիպում են ինքնադիտարկման և ինքնանկարագրման քննադատական դրվագներ, հաճախ են այնպիսի

դատողությունները, ըստ որոնց՝ պատերազմում մեր պարտության պատճառներից է համարվում նաև հասարակության ցածր կրթական մակարդակը՝ լայն առումով: Նման դատողություններում Հայաստանի ապագա անվտանգության ամրապնդման հետ կապված անելիքների մեջ առաջնային կարևորություն է տրվում հասարակության կրթական մակարդակի բարձրացմանը:

> *Հիմա կրթականն ամենաուժեղ դերը պիտի խաղա, այսինքն՝ կրթությունը դպրոցում պետք ա ուժեղացվի, ամենաուժեղ բաները պետք ա գործիքակազմերն անել, ներդնել, որ մեր հասարակությունն առողջ մեծանա, ուղեղով: Շատ կարևոր ա՝ ամեն ինչի նկատմամբ առողջ մտածի, զարգացած երեխեք ունենանք, որովհետև մեր հասարակությունը հիմա էդքան զարգացած չի: Հիմա հիվանդ ա մեր հասարակությունը: Վիրավորելու իմաստով չեմ ասում՝ հիվանդ: Ամենակարևորը՝ մեզ կրթել ա պետք, խելացի հասարակություն ա պետք, խելացի, որ էն մարդիկ, որ ինչ-որ գիտակցական մակարդակ ունեն, չտուժեն էն մարդկանցից... Էդ պատերազմին էլ ա շատ խանգարել՝ էդ մարդկանց չկրթված լինելը: Զինվորն էլ կարա լինի կրթություն ստացած, կրթություն չստացած, չկրթված զինվորը կարա էդ պատերազմը այլ ձևով ընկալի, կրթված զինվորը՝ լրիվ այլ ձևով:*
>
> ***Կամավորական, բժիշկ, կին, 26 տարեկան***

Կրթական մակարդակի հետ է կապվում նաև իրողությունները համարժեքորեն գնահատելու և դրանից բխող որոշումներ կայացնելու ունակությունը, որը պատերազմական իրավիճակում առաջնային դերակատարություն է ստանում վախի ու խուճապային տրամադրությունների հաղթահարման, զորքում կարգապահության պահպանման և մարտական գործողությունների իրականացման արդյունավետության մեջ: Հետաքրքիր է, որ կարգապահության խնդիրն այս բանասացների խոսքում անմիջականորեն կապվում է կրթության հետ, քանի որ կարգապահությունը համարվում է ավելի ռացիոնալ, այսինքն՝ մտքի միջոցով կառավարվող վարքագծային պրակտիկա, քան զգացմունքների հետևանքով առաջացող հախուռն ու քաոտիկ գործողություններ, ինչը ռազմի դաշտում, վերջին հաշվով, հանգեցնում է անկազմակերպ

փախուստի: Հատկանշական է, որ որոշ նկարագրություններում հստակ տարբերություններ են դրվում փախուստի և նահանջի միջև: «Նահանջ» ասելով հասկացվում է իրավիճակի գնահատման արդյունքում կազմակերպված ու հրամանատարական կազմի կողմից համակարգված գործողությունների միջոցով դիրքերի զիջում՝ մարդկային ներուժը պահպանելու և տարածքային կորուստները նվազագույնի հասցնելու նպատակով: Իսկ «փախուստ» ասելով հասկացվում է մարտական դիրքերի զիջում անկանոն, խուճապահար, անկազմակերպ գործողությունների միջոցով, որի ընթացքում զորքն անընդունակ է դառնում համակարգված մարտական գործողության միջոցով հակառակորդին որևէ դիմադրություն ցույց տալուն: Հետաքրքիր է նաև այն, որ անկարգապահության գլխավոր պատճառներից մեկը գրանցված պատմություններում համարվում է անպատասխանատվությունը, իսկ որոշների դեպքում՝ նաև պատասխանատվության զգացումը ձևավորող գիտակցականության ցածր մակարդակը:

*«Մենք սիստեմ չունեինք»:* Ուշագրավ են նաև այն դիտարկումները, որոնց համաձայն՝ անընդունելի է համարվում բանակը «թույլ» բնութագրելը: Շատ դեպքերում թուլության պատճառը համարվում է անկազմակերպվածությունը, այլ ոչ՝ զինվորների մարտունակության հետ կապված որակները:

> *Մարդիկ խոսում են՝ իբր թե մենք թույլ ենք: Ախր, էդ մարդիկ ո՛չ ծառայել են, ո՛չ գիտեն ինչ ա… Էդ մարդիկ որ ասում են՝ մեր բանակը թույլ ա, սուտ ա: Հա, հիմա մենք պարտվել ենք, թույլ ենք, էն ժամանակ մենք էլի թույլ էինք, թույլ էն առումով, որ կրթություն չկար, պրոցեսներ, սիստեմ չկար նորմալ, բայց անհատների տեսանկյունից մենք թույլ չենք: Մենք ընդամենը պետք ա սիստեմ ստեղծենք, որ էդ անհատներին միավորենք: Ընդամենը:*
>
> ***Կամավորական, տղամարդ, 26 տարեկան***

Այսինքն՝ կարելի է ասել, որ անկազմակերպ ու խուճապահար գործողությունների հիմնական պատճառը ինքնադիտարկման քննադատական հատկանիշներ ունեցող զինվորները համարում են ***համակարգվածության անբավարարությունը***: *Բանակը չի գործել որպես այնպիսի մի համակարգ,*

*որտեղ կարգավիճակները շատ հստակ սահմանված են, և որտեղ մարդու հայտնվելը պարզ էր դարձնում նրա համար, թե ինչ համակարգում է նա հայտնվել, այդ համակարգում ինչ կարգավիճակում, և որոնք են այդ կարգավիճակին բնորոշ իրավունքները, պարտականությունները և իր պատասխանատվության չափը համակարգի հանդեպ:* Հատկանշական է, որ այս թերությունները հստակ նկատել ու գիտակցել են սովորական զինվորականները, որոնք քիչ թե շատ քննադատական հայացք են ունեցել իրավիճակների գնահատման ու նկարագրման հանդեպ:

> *Որովհետև մենք ծույլ ենք, խելացի չենք, կարծում եմ: Ոչ թե ես ասում եմ՝ խելացի չենք, չէ, խելացի ենք, նորարար ենք ազգով, բայց բաներ կան, որ չենք մտածում: Չգիտեմ, օրինակ, ինձ որ տարել էին պատերազմ, իմ ներուժը ո՞նց էին գնահատել, ու ո՞նց ու որտե՞ղ ես պետք է օգուտ տայի: Մեր մեջ, ընդհանրապես, երևույթները ճիշտ չեն արժևորվում, արժեքները ճիշտ չեն գնահատվում:*
>
> ***Կամավորական, տղամարդ, 24 տարեկան***

Զորքի այն հատվածներում, որտեղ համակարգի առկայությունը քիչ թե շատ շոշափելի է եղել, զինվորները գործել են հստակ, պատասխանատու կերպով, աշխատել են փոխօգնության ու կապի մեխանիզմները: Դա հիմնականում բնորոշ է եղել կանոնավոր բանակին, ինչի շնորհիվ էլ ժամկետային զինծառայողների գործողությունները տարբերվել են պահեստազորայինների կամ կամավորականների գործողություններից: Հատկապես այն զորամասերը, որտեղ հրամանատարության մեջ եղել են համակարգապահպան ազդեցիկ անհատներ, էականորեն տարբերվել են բանակի ընդհանուր ֆոնից: Դրանցում չեն եղել անզորության, անհուսության, հակառակորդի զորեղության մասին չափազանցված գնահատականներ: Բացի կանոնավոր բանակից՝ քիչ թե շատ հաջող են գործել կամավորականներից և պահեստազորայիններից կազմավորված այն միավորումները, որոնք եղել են ոչ թե պարզապես կազմակերպված, այլ նաև՝ որոշակիորեն համակարգված: Համակարգվածությունը հատկապես կարևոր ազդեցություն է ունեցել մարտական գործողությունների ժամանակ զինվորների կողմից սեփական գործառույթի նույնականացման և դրա կարևորման վրա: Կարևոր է նկատել նաև, որ սեփական գործառույթի

գիտակցումը շատ կարևոր դեր է ունեցել նաև զինվորների համար վախի հաղթահարման գործում: Այս առումով, կարելի է ասել, գործ ունենք զինվորների միջավայրում վախի հաղթահարման այնպիսի փաստի հետ, որը ռազմական մարդաբանության մեջ բնութագրվում է որպես վախի հաղթահարման «պրոֆեսիոնալ» մեխանիզմ[14]:

Ուշագրավ է նաև այն, որ թե՛ ժամկետայինների և թե՛ կամավորականների նկարագրություններում հաճախ են հանդիպում համեմատություններ ժամկետային զինծառայողների կամ կանոնավոր բանակի ու զորքի մնացած տեսակների միջև: Այս նկարագրություններից կարելի է եզրակացնել, որ համարյա բոլոր պատմություններում արտահայտված այն կարծիքը, թե ժամկետայինները ամենաքիչն են խուճապի մատնվել, եղել են առավել պատասխանատու ու կազմակերպված, արդյունքն է այն բանի, որ հայկական բանակում միայն զորքի այդ տեսակն է գործել որպես համակարգ: Պատերազմի կառավարման ընթացքում հայկական բանակի հրամանատարությանը այդպես էլ չի հաջողվել զորքի մնացած տեսակներին ինտեգրել համակարգին, և դրա հետևանքով պահեստազորայիններն ու կամավորականները այդպես էլ չեն դարձել համակարգի մաս: Դուրս մնալով համակարգից՝ չի հաջողվել դրանք կազմակերպել նաև որպես ինքնուրույն համակարգ, որտեղ զինվորները կարողանային գործել իրենց հատկացված կարգավիճակներին բնորոշ գործառույթների համաձայն և իրականացնեին մարտական գործառույթներն այնպես, որ յուրաքանչյուր զինվորի գործունեության հանրագումարը վերածվեր ջոկատի գործունեության: Հետևանքը եղել է այն, որ անհամակարգ իրավիճակում այդ ջոկատները վերածվել են պարզապես միմյանց կողքի հավաքված անհատների ժողովածուի: Այս առումով խիստ բնութագրական է հետևյալ պատմությունը: Քանի որ պատմողը ընդամենը մեկ տարի առաջ է զորացրվել ժամկետային ծառայությունից ու պատերազմի ժամանակ կամավորագրվելով հայտնվել է պահեստազորայիններից կազմված ջոկատում, ունեցել է զորքի այդ երկու տեսակները համեմատելու հնարավորություն: Ըստ նրա՝ զորամասի նկատմամբ, որտեղ նա ծառայել է որպես ժամկետային զինծառայող, պահեստազորայինների գումարտակը պարզապես անհամեմատելի է եղել:

[14] Николаи Ф., Кобылин И. 2020. Сгущенка как лекарство от стресса»: военная психология и армейские практики преодоления страха. Новое литературное обозрение, 162, 2. https://www.nlobooks.ru/magazines/novoe_literaturnoe_obozrenie/162_nlo_2_2020/article/22083/. Վերջին դիտումը՝ 24.02.2022:

Նրա պատմության մեջ աչքի է զարնում հատկապես այն, որ իր ծառայած զորամասի նկարագրությունը պահեստազորայինների գումարտակի հետ շատ նման է համակարգի ու դրանից դուրս գտնվող անհամակարգ կազմավորման համեմատության:

*Գիտեք ոնց ա. երբ որ մանավանդ թարմ ա ընում ծառայության հետ կապված հիշողությունները, այսինքն՝ դու նոր ես եկած լինում, ու նենց ա, որ ամեն ինչն ա թարմ, այսինքն՝ թե՛ զենք բռնելն ա թարմ, թե՛ հրաման ստանալն ա թարմ, էտ ամեն ինչը շատ թարմ ա, հիշողության մեջ մնացած ա էլի, ու երբ որ գնում ես ընդեղ, տեսնում ես՝ էտ կազմակերպվածությունը չկա, էն ամեն ինչը, ինչը որ դու տեսել ես ծառայության ժամանակ, չկա արդեն, մի տեսակ, մեղմ ասած, դիսկամֆորտ ա լինում կռվողի համար:*

***Կամավորական, տղամարդ, 21 տարեկան***

Հատկանշական է նաև այն կարծիքը, երբ բանակում համակարգի բացակայությունը դիտվում է որպես պետության մեջ համակարգի թուլության արտահայտություն: Համաձայն այս դիտարկման՝ բանակը համարվում է պետության դեմքերից մեկը, և եթե այնտեղ չկա համակարգ, այն բացակայում է նաև այլ պետական կառույցներում, և պատերազմում պարտությունը դիտվում է որպես համակարգի բացակայություն ոչ միայն բանակում, այլև, լայն առումով, նաև պետության մեջ:

*Պետության մասին պատկերացումը ինձ մոտ եկել էր բանակից սկսած, որ ես առաջին անգամ առնչվել եմ պետություն կոչվածի հետ ու տեսել եմ՝ ինչ վիճակ ա: Նույնն էլ՝ հիմա: Հիմա էլ էդ նույն բարդակը շարունակվում ա: Հայաստանի Հանրապետությունում չկա գործող համակարգ, ձևական ա ամեն ինչ: Որ ռեալ ամեն ինչ գործի՝ իմ կարծիքով՝ չկա: Մինչև կռիվը ո՞նց էր, ասում էին՝ էս սաղ որ վատ ա, որովհետև բանակում ամեն ինչ ընտիր ա, հանուն դրա գնանք: Իրականում ի՞նչ. ոչ մի բան, նախ՝ ոչ մի բան չես արել, ոչ էլ ընդեղ լավ ա եղել: Միշտ էլ ընդեղ եղել ա էդ խառնաշփոթ խուժան վիճակը:*

***Պահեստազորային, տղամարդ, 23 տարեկան***

Համակարգի թուլության պատճառներից մեկն էլ շատերը համարում են կոռուպցիան և դրա հանդեպ մարդկանց անտարբերությունը: Բանակի անպատրաստվածության գլխավոր պատճառներից մեկը համարվում է այն, որ զորավարժությունների համար հատկացված գումարները տարիներ շարունակ յուրացվել են զինվորական վերնախավերի կողմից: Դրա ձևը շատ պարզ է եղել: Մարտական պատրաստվածության համար նախատեսված միջոցառումների մեծ մասը զինվորները չեն անցել, բայց դրա համար հատկացված նյութական ու ֆինանսական ծախսերը փաստաթղթերով դուրս են գրվել ու գրպանվել բանակի զինվորական վերնախավերի կողմից: Հենց նման երևույթները հանդուրժելու, դրա քայքայիչ հետևանքները չգիտակցելու, հանցավոր անտարբերությունն ու կոռուպցիայի հանդեպ հանդուրժողական վերաբերմունքը շատերն այժմ արդեն համարում են այն որդը, որը ներսից կրծել ու քայքայել է բանակը:

> *Էն որ՝ հա՜մ մենք ենք անտարբեր էղել, չենք ուզեցել գնանք, համ էլ ինչ-որ մեկը որ մեզի պտի տանի կրակելու, չի գնացել, էն որ թուղթը բերել են… «Էս ի՞նչ թուղթ ա». որ էսինչ վռոդի արել ենք… Կրակայինը արել ենք, պիտի ստորագրենք և այլ և այլ: Ֆսյո, արել ենք, լավ, գնա, մենք էլ գնանք մեր գործին: Տենց, ամեն ինչը այ տենց սկզբից գալիս ա: Բայց ես քեզ ասեմ. եթե ստիպեին, պարտադրեին, մենք էտ ամեն ինչը հաստատ կանեինք:*
>
> ***Պայմանագրային, տղամարդ, 25 տարեկան***

Բանակին վերաբերող նկարագրություններում կարելի է հանդիպել բանակի մասին այնպիսի դատողությունների, որ ոչ թե մեր բանակն էր թույլ, այլ՝ տեխնիկապես էր միայն զիջում ադրբեջանական բանակին, և եթե տեխնիկական առումով նույն զինվածությունն ունենայինք, ապա հայ զինվորները կգերազանցեին ադրբեջանցիներին, և հայկական բանակը հաղթանակով դուրս կգար պատերազմից:

> *Ես սենց ասեմ. մեր բանակին հաղթելը տենց հեշտ բան չի, իրանք որ հաղթել են, էտի իրանք չեն հաղթել, էտի իրանց անօդաչու թռչող սարքերն են հաղթե: Էտի չըլներ, մեր հակաօդային պաշտպանությունը լավ ըլներ, իրանք հաստատ չէին գա: Ու ես վստահ եմ, որ հանկարծ*

*մեր օդը փակած ըլներ, իրանց բեզպիլոտնիկները էդքան չաշխտեր, մերոնք հենց առաջ էթային, մինչև Բաքու էթալու էին: Դե, զինվորի մարտական ոգին ինչքան բարձր ըլնի, դուխով ըլնի, հո հակաօդային չի, որ օդից բեզպիլոտնիկ բռնի:*

***Ժամկետային զինծառայող, տղամարդ, 20 տարեկան***

Մեկ այլ մեկնաբանության համաձայն էլ՝ հայկական բանակը պարտվել է ոչ թե այն պատճառով, որ թույլ էր ադրբեջանականից, այլ որ՝ Ադրբեջանի կողմից մի քանի երկրի բանակներ էին կռվում: Հակառակ դեպքում, եթե հայկական բանակը միայնակ մնար ադրբեջանական բանակի հետ, ապա ադրբեջանցիներին պարտության կմատներ:

*Վոփշմ, չէինք պատկերացնի, որ իրանք էտքան շատ, միանգամից 4 պետություն մեր դեմ կիաննեն, չէինք պատկերացնի, որ էդքան վարձկաններ կբերեր, Թուրքիան իրանց կմիանար... Մեկը ես պատկերացնում էի՝ եթե Ադրբեջանն ա մենակ, մեզ խնդիր չունենք ըտեղ: էտ ավելի քան վստահ եմ, որ տա տենց էլ կիներ: Ու տա՝ հաշված օրերի ընթացքում: Մենք ավելի շատ, կարելի ա ասած, կռվել ենք կողքի պետությունների դեմ, քան Ադրբեջանի:*

***Կամավորական, միջին տարիքի տղամարդ, Սյունիք***

Այս բնույթի կարծիքներին համահունչ կարելի է համարել նաև մեկ այլ կարծիք, համաձայն որի՝ «*Մեր բանակը հին էր, բայց լավն էր: Մենք պարտվել ենք թուրքական ժամանակակից բանակին»:*
Հասարակական կյանքում իրողությունների նկարագրությունը և ինքնանկարագրությունը կարևոր խնդիր է համարվում, քանի որ դրա միջոցով կառուցվում է այն իրականությունը, որը պայմանավորում է այդ հասարակության ինքնակազմակերպման արդյունավետությունը և համարժեքությունը ներքին ու արտաքին աշխարհի մարտահրավերներին: Այս առումով կարևոր են նաև ինքնադիտարկման մեխանիզմներն ու գործիքները: Եթե ինքնադիտարկման մեխանիզմները ռացիոնալ-դատողական չեն, հենվում են ինչ-որ սրբազնացված պատկերացումների վրա, բավականաչափ քննադատական չեն և

չեն իրականացվում ինստիտուտուցիոնալ կառույցների միջոցով, ապա ինքնանկարագրությունը հակված է ավելի շատ լինելու տաֆտալոգիական, քան՝ պարադոքսալ տիպի[15]: Տաֆտալոգիական տիպի ինքնանկարագրության համաձայն՝ հասարակությունը նկարագրում է իրեն այնպես, ինչպես որ կա: Ասենք, օրինակ, մինչև պատերազմը Հայաստանում սկսեցին տարածվել «Երկիրը երկիր է» արտահայտությամբ գրություններ: Նույնիսկ որոշները դա պատկերում էին մեքենաների հետնապակուն: Նման ինքնանկարագրությունը բնորոշ է ավելի շատ պահպանողական հասարակություններին և չի մղում իրավիճակի փոփոխմանն ուղղված արմատական քայլերի: Ի տարբերություն տաֆտալոգիականի՝ պարադոքսալ ինքնանկարագրության դեպքում նկարագրության միջոցով ժխտվում է երևույթի՝ ինքն իրեն համապատասխանելու փաստը: Ասենք, օրինակ, բանակը բանակ չէ, երկիրը երկիր չէ, տունը տուն չէ և այլն: 1990-ականների առաջին կեսերին հասարակությունում բավական մեծ հնչողություն էր ստացել մի ծերունու՝ հեռուստատեսային եթերով հեռարձակված «էս երկիրը երկիր չի, քանդեք, նորը կառուցեք» արտահայտությունը, ինչը պարադոքսալ ինքնանկարագրման դասական նմուշ է: Պարադոքսալ ինքնանկարագրությունը, ի հակադրություն տաֆտալոգիականի, նպաստում է հասարակությունում նոր մոտեցումների ու գաղափարների առաջացմանը, քանի որ եթե ասենք, օրինակ, «Բանակը բանակ չէ», ապա պետք է գտնել բանակը բանակ սարքելու ուղիներ: Այս առումով, եթե փորձենք տիպաբանորեն ընդհանրացնել հայկական բանակի վերը ներկայացված ինքնանկարագրության օրինակները, ապա կարելի է առանձնացնել երկու հիմնական տիպ՝

- Մեր բանակը բանակ է (տավտոլոգիա).
- Մեր բանակը բանակ չէ (պարադոքս):

Այսինքն՝ երբ ինքնանկարագրություններում հանդիպում են այնպիսի մեկնաբանություններ, որ մեր բանակը լավ բանակ էր, և որ ադրբեջանցիների տեխնոլոգիական առավելություններն առանձնապես կարևոր չեն եղել, այլ խնդիրն հիմնականում այն է եղել, որ ադրբեջանցիների կողմից կռվել են թուրքերը, իսլամիստները,

[15] Луман Н. 1991. Тавталогия и парадокс в самоописаниях современного общества. Социо-логос: Социология, Антеропология, Метафизика. Т. 1. Москва: Прогресс. С. 198.

պակիստանցիները և նույնիսկ Իսրայելը, ապա, փաստացիորեն, այս նկարագրությունը նշանակում է, որ մեր բանակը բանակ է, և ընդամենը պետք է ավելի լավ զինվել ու մարզվել:
Ինքնանկարագրության այն տիպը, ըստ որի բերվում է «Հայկական բանակը հին էր, բայց լավն էր, մենք պարտվել ենք ժամանակակից թուրքական բանակին» նկարագրությունը, դա առաջին հայացքից միջանկյալ դիրք է գրավում տաֆտալոգիական ու պարադոքսալ տիպերի միջև: Այն նկարագրության առաջին մասով տաֆտալոգիական է, իսկ երրորդ մասով՝ պարադոքսալ: Նկարագրության «հայկական բանակը հին էր, բայց լավն էր» հատվածը տաֆտալոգիա է, քանի որ, վերջին հաշվով, հարում է «բանակը բանակ է» բանաձևին: Պատահական չէ, որ այս նկարագրությունը առաջ քաշողների առաջնային գործողությունները իրականության մեջ ուղղված են *«ավտոմատով կամ պեխոտի կռվին»* կամավորականների հետ մարտական պատրաստվածության բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացմանը:

Գլուխ 3

# Պատերազմի ապրումը և բարոյականությունը

Պատերազմը մարդկային մշակույթի մաս է: Ցանկանանք թե ոչ՝ դա փաստ է: Այն ժողովուրդների միջև փոխհարաբերություններ կառուցելու, հարցերը լուծելու, շահեր իրականացնելու և ինքնությունների վերաիմաստավորման միջոցներից է: Հայ-ադրբեջանական պատերազմը նույնպես այդպիսին էր: Շահերի տեսանկյունից այն սպասարկում էր ազգային տարբեր վերնախավերին: Հայկական կողմի ուննոր վերնախավերի մի մասը, հատկապես նրանք, ովքեր կորցրել էին իշխանությունը 2018 թվականի իշխանափոխության հետևանքով և հայտնվել տարիների ընթացքում կուտակած սեփականությունն ու կարգավիճակը կորցնելու վտանգի առջև, դրանում տեսնում էին իշխանությունը վերադարձնելու հնարավորություն: Պատերազմում պարտության համար գործող իշխանությունների մեղավորությունը, որպես իշխանությունը վերադարձնելու հնարավորություն, նրանց չհաջողվեց օգտագործել: Գործող իշխանությունները, կանխագուշակելով պատերազմում պարտությունը, հասկանում էին, որ ստիպված էին լինելու տարածքային զիջումների գնալ, սակայն ցանկանում էին պատասխանատվությունը իրենցից գցել բանակի ու նախկին էլիտաների վրա, և հենց զինադադարի գիշերը վարչապետի բերանով անմիջապես սկիզբ դրվեց այդ թեմայի շրջանառմանը: Կարելի է ասել, որ դա կարևոր դեր ունեցավ նրանում, որ «հեղափոխականների» թիմը կարողացավ պահել իշխանությունը և հաղթել արտահերթ խորհրդարանական ընտրություններում:

Պատերազմը մշակութային տեսանկյունից դիտարկելիս կարևոր նշանակություն է ստանում վերկառուցվածքային կամ իմաստաբանական երևույթների դիտարկումը: Սրանք կարևոր են, քանի որ որոշիչ դեր են ունենում հասարակության համար՝ լայն առումով, և բանակի համար՝ նեղ առումով՝ պատերազմը հանուն ինչ-որ մեծ գաղափարի իմաստավորելու համար: Այնպիսի գաղափարի, որը կարող է վեր համարվել նույնիսկ մարդկային կյանքից, և հանուն որի մարդը կարող է հաղթահարել պատերազմում զոհվելու վախը: Ընդհանրապես, վախի թեման այստեղ

առանցքային թեմաներից է: Պատերազմը բացառիկ երևույթ է այն առումով, որ արդարացնում է օտարի դեմ ուղղված կոլեկտիվ մարդասպանության գործողությունը: Այստեղ մահվան վտանգը կյանքի մնացած բոլոր մշակութայնացված իրավիճակների հանդեպ չափից դուրս իրական է: Մարդասպանության ծավալները, համամասնակցությունը, հաճախ դաժանության ու սարսափի դրսևորումները ներկայի ու ապագայի, կյանքի անձնական ու հավաքական իմաստները վերափոխող երևույթներ են: Այսինքն՝ չափազանց կարևոր է, թե ինչպես է մարդը ապրում մահվան մոտիկությունը, ինչպես է հաղթահարում դրա առաջացրած վախը, և ինչպես է այդ ամենը փոխում կյանքի ու մահվան հետ կապված իմաստները: Սրանք պատերազմի մարդաբանական ուսումնասիրության համար առանցքային կարևորություն ունեցող հարցադրումներ են:

## 3.1. Վախ. պատերազմի հիմնական ապրումը

*Վախից մարդ կարա հերոս դառնա, կարա մանթռաշի մեջ ընկնի:*

***Ժամկետային զինծառայող, 20 տարեկան***

Եթե հարց տրվի, թե ինչն է միավորում շատ տարբեր բնավորության, մոտեցումների, հայացքների տեր մարդկանց, որոնք պատմում են պատերազմի մասին, ապա կարելի է ասել, որ նրանց բոլորին միավորում է այն կարծիքը, համաձայն որի՝ պատերազմի հիմնական ապրումը եղել է վախը: Պատերազմում վախ առաջացնող իրավիճակները մի քանիսն են եղել: Զինվորներից շատերի պատմություններում խոսվում է ռազմական արդիական տեխնիկայի դեմ մարդու անզորության ու անօգնականության զգացողության մասին՝ կապված այն փաստի հետ, որ մարդը կորցնում է իրավիճակի վրա որևէ կերպ ազդեցություն ունենալու հնարավորությունը և հայտնվում անընդհատ հետապնդվող օբյեկտի դերում: Ստեղծված իրավիճակից դուրս գալու, ելքեր գտնելու հնարավորությունը հաճախ հավասարվում է զրոյի, և մարդուն մնում է միայն թաքնվել իրեն հետապնդող անօդաչու թռչող սարքերից կամ, եթե չունի թաքնվելու հնարավորություն, հույսը դնել ճակատագրի վրա: Հետևակի կամ այսպես կոչված «ավտոմատի կռվի» ժամանակ մարդը գիտի, որ հնարավորություն

ունի պաշտպանվելու, և իր կենդանի մնալը կախված է նաև իրենից: Այսինքն՝ ինքն ունի նույնքան հնարավորություն, որքան իր վրա հարձակվող հակառակորդ կողմի զինվորը: Իսկ տեխնիկայի դեպքում ինքը չգիտի՝ ում դեմ կռվի: Պատերազմն այս դեպքում անհասցե է, և շատ դեպքերում կյանքը կախված է ճակատագրից:

*Էն նախորդ պատերազմները ո՞նց էր. դու գիտես, որ խրամատի մեջ թաքնվես՝ քեզ բան չի լինի, գիտես, էլի, որ քեզնից ա կախված մի քիչ էլ քո ողջ մնալը: Բայց էս մեկը, դու գիտես, որ քեզնից ոչ մի բան կախված չի, բախտի հարց ա, ու էդ քեզ շատ ճնշում ա էդ ընթացքում, որ հասկանում ես: Ասում ես՝ ես ճիշտ եմ անում ամեն ինչ, հետո՞, ընգավ՝ ընգավ: Կամ էդ կամիկաձեները, սամալյոտները. զգում ես, որ դու չես, էլի, կառավարելու, քո ողջ մնալը թե մահանալը քեզնից չի կախված, ըտեղ խելքի հարց չկա, էլի:*

***Կամավորական, տղամարդ, 23 տարեկան***

Երբ մարդ լծակներ չունի իրավիճակը քիչ թե շատ վերահսկելի դարձնելու, երբ անորոշության աստիճանը չափազանց բարձր է, նաև չկա որևէ համակարգ, որը հույսեր կտա ինչ-որ կերպ ավելի պաշտպանված ու ինքնավստահ լինելու, մահվան հավանականությունը շատ մեծ է թվում, և կյանքի ու մահվան սահմանը այնքան է սեղմվում, որ փրկության հույսը դառնում է Աստված:

*Ես գիտեմ, որ ես գնում եմ, 99/1 ա իմ կյանքը: Տենց ժամանակ հույսս Աստվածն ա միշտ: Ուրիշ ոչ մի բան չեմ մտածում: Ես գիտեմ, որ ես գնալու եմ, ու մենակ էն հույսով, որ իմ հետ ամեն ինչ նորմալ ա ըլնելու, պետք ա մի քիչ խելացի լինել ու հույսը դնել Աստծո վրա. էդքանը: Ուրիշ ոչ մի բանի վրա հույս չեմ դրել, որ ինձ պետությունը կտրամադրի չգիտեմ ինչ, զորք, զենք կամ զինամթերք:*

***Պայմանագրային, տղամարդ, 24 տարեկան***

Այս պատերազմում խնդիրը միայն այն չի եղել, որ *«մարդ-մարդ»* առճակատման մոդելի փոխարեն կիրառվել է *«մարդ-տեխնիկա»* մոդելը:

Խնդիրը եղել է նաև տեխնիկայի այնպիսի քանակը, որը սեփական գործողությունների միջոցով իրադարձությունների ընթացքի վրա ազդեցություն ունենալու և կյանքը պաշտպանելու անիմաստության ու անզորության վիճակ է առաջացրել։ Իրավիճակը նույնը չէր լինի, եթե ադրբեջանցիների կողմից կիրառվող տեխնիկայի քանակը հարձակման դեպքում շատ մեծ չլիներ։ Տեխնիկայի մեծ քանակի դեպքում մարդիկ պարզապես անզոր են լինում խոցելու այդպիսի ինտենսիվությամբ գործադրվող տեխնիկայի միջոցները և, ի վերջո, իրենց զգում են մահվան դատապարտված։ Մարդ-տեխնիկա առճակատումը այս պատերազմում առանձնահատուկ էր, քանի որ մարդը բացարձակապես կարող էր կորցնել սեփական կարևորության ու հակառակորդի հետ առճակատման մեջ իրադարձությունների վրա ազդեցության հնարավորություն ունեցող սուբյեկտության զգացողությունը։

> *24 ժամ ա օրը, 16 ժամը քեզ անընդհատ ռմբակոծում են։ Ռումբը գալիս ա, ընգնում ա թմբի վրա, բախտդ բերում ա, չի ընգնում խրամատի մեջ։ Հզոր ալիք ա տալիս, որ քեզ կարա հետ շպրտի։ Ծուխ, էդ բարութի հոտը... Անընդհատ ականջներիդ մեջ ա, գալիս-ընկնում ա, խշշոց, ծուխը... Էդ ամեն ինչը ճնշող ա, էլի, որ դու կոնկրետ չգիտես՝ ինչ պիտի անես, ինչ չպիտի անես, լեյտենանտն էլ չգիտի, հրամանատարն էլ չգիտի, թե ինչ պետք ա անել, հրամանատար չկա, չգիտես՝ ով ա հրամանատարը։ Էդ ամեն ինչից պանիկա ա լինում։*
>
> ***Պահեստազորային, տղամարդ, 24 տարեկան***

Ուշագրավ է, որ մահվան դատապարտվածության այդ զգացողությունը պատերազմի ժամանակ երբեմն նույնականացվում է տեխնիկայի այդ միջոցների արձակած ձայների հետ։ Վախի ու սարսափի պատմություններում հաճախ են հանդիպում նկարագրություններ, որոնք կապված են *պատերազմի ձայների* հետ։ Պատերազմն իր ձայներն ունի, և դրանք լինում են մարդկային կամ անմարդկային, տանելի կամ անտանելի։ Ձայներից ամենասարսափելին այս պատերազմում եղել են ինտենսիվ հրետակոծության հետևանքով ռումբերի ու արկերի պայթյուններն ու անօդաչու թռչող սարքերի ձայները։ Դրանցից յուրաքանչյուրն ունեցել է իր առանձնահատուկ հնչողությունը, և դրա հետ կապված՝ վախի

զգացումը: Հաճախ են հանդիպում հատկապես «կամիկաձե» անվանումը ստացած անօդաչուների ձայնի հետ կապված վախի նկարագրությունները: Վախն այս դեպքում կապված է հիմնականում անորոշության հետ: Դա առաջին հերթին մահվան վախն է, իսկ անօդաչուի ձայնը՝ մահվան հավանականության ձայնը: Արկերի ձայնը այլ զգացողությունների հետ է կապվում: Ավելի շատ, դա պայթյունի ձայնի բարձրությունից առաջացող բնազդային վախն է:

> *Էտ ձայները նամանավանդ, երբ որ սկզբից ես լսում, ինքը շատ ուժեղ է ու ահավոր, ըսպես, մեջդ վախ ա գցում, որովհետև, դեեեե, ասենք՝ պատրոնի թռիչքը լրիվ ուրիշ... Գնդակի ձայնը լրիվ ուրիշ է, իսկ սնարյադը միանգամից պայթում է, նամանավանդ... տեղյակ չենք, էլի: Եթե գիտենանք, հա, էլի... ավտոմատի կռիվ է լինելու, էլի մոտավոր ձեներին տիրապետում ենք, զենքով կրակել ենք, ձայնի բարձրությունը, բան, բայց տենց միանգամից հրետանու կամ ավելի մեծ տրամաչափի պահով... ձայնը, հիմնականում, ձայնը:*
>
> ***Ժամկետային զինծառայող, 20 տարեկան***

Շատերի համար սարսափ առաջացնող երևույթներից են եղել մահվան կամ մարդու մարմնի ծանր վիրավորումների պատերազմական տեսարանները: Պատերազմը դաժան բան է հենց այն պատճառով, որ այնտեղ մահը ամենուր է և ունի շատ ահասարսուռ պատկերներ: Դրանցից ամենից սարսափելին արկերից ու բեկորներից մասնատված մարմիններն են, պոկված ոտքը, ձեռքը, մարմնի այրված ու այլանդակված հատվածները:

> *էլի գիշերով հասանք էդ գյուղ, ու ընդե մի հատ այլանդակ տեսարան. էրկու ոտերը կտրած ինչ-որ մեկին բերում էին, սկռռին բերում էր ըտե, մի հատ տղա կար, որ ոչ մի վնասվածք չուներ, ասեցին՝ ինչ-որ վակումնի սնարյադ, չգիտեմ ինչքան եմ իրավացի, բայց ոնց որ բան ըլներ... Կողոսկրերը, ես վերևից նայում եմ, զգում եմ՝ կողոսկրերը լխկված ա... Ում բերում են, չգիտեմ՝ ընդե, գլուխը կապած, թևը կտրված, մի հատ տղու թևը հետն էին բերե, ու էտ թևը դրել էին բռնիկի արանքը, էտ տիպը՝ որ չկորի, ինչ էին մտածել (ծիծաղում է)...*
>
> ***Կամավորական, տղամարդ, 25 տարեկան***

Հետաքրքիր է, որ զինվորներից շատերի պատմելով՝ վախ ունեցել են բոլորը: Եվ խնդիրն այն չի եղել, որ մարդիկ վախեցել են հակառակորդի զինվորներից, այլ՝ զենքերի ու զինատեսակների շատությունից ու դրանց դեմ պայքարելու անորոշությունից առաջացած դատապարտվածության զգացումից: Հատկապես այն հատվածներում է այդպես եղել, որտեղ հակառակորդը հարձակողական գործողությունների ժամանակ մեծ թվով ԱԹՍ-ներ ու հրետանի է գործադրել. զինվորների մեծ մասի նկարագրություններում կարելի է հանդիպել վախի նման ապրումի նկարագրության: Նկատենք, որ տեխնիկայից վախը բնորոշ է եղել ոչ միայն պատերազմին անմիջականորեն մասնակցած զինվորականներին, այլ նաև պատերազմի գոտում հայտնված քաղաքացիական բնակչությանը:

> *Վախենում էին... Հենց հոկտեմբերի 1-ն էր, որ տեսան՝ սա կարճ լարվածություն չէ, լուրջ պատերազմ է: Չէ, Հայաստանը չեն լքել: Ուղղակի Վարդենիսն են լքել: Երևան, Մարտունի, որը որ, ասենք, իրենց համար ավելի... Բայց ինձ համար դա մեծ, կարելի է ասել՝ դժբախտություն ես համարեցի: Գնում էին: Ընտանիքներով: Մեծ, փոքր... Դռները փակել, գնացել էին:*
>
> ***Վարդենիս, կին, 54 տարեկան***

Եթե փորձենք ընդհանրացնել պատերազմի ժամանակ վախի ապրումի տեսակները, ապա կարելի է առանձնացնել հետևյալ մի քանիսը՝

- վախ մահվանից.
- վախ գերի ընկնելուց.
- վախ ընտանիքը և հարազատներին այլևս չտեսնելու հեռանկարից.
- վախ՝ սպանվելուց հետո սեփական մարմինն անհայտ կորելու հեռանկարից:

***Վախ. փախուստ մահից կամ խուճապ զորքերում:*** Գրանցված պատմություններում վախի ապրումի նկարագրությունների համաձայն՝ մարդիկ այն ապրել ու հաղթահարել են պատերազմին առերեսվելու տարբեր իրավիճակներում: Առավել տարածված են հետևյալ երեք դեպքերը: Մի մասն այն ունեցել է մինչև պատերազմ մեկնելը, զորակոչվելու լուրն ստանալիս և կարողացել է հաղթահարել այդ

ապրումը բանակ մեկնելու որոշումը կայացնելու միջոցով կամ այդ որոշումն ընդունելուց հետո: Հաճախ հանդիպող երկրորդ դեպքն այն է, երբ վախը հաղթահարվել է պատերազմի դաշտում հայտնվելու առաջին պահերին կամ առաջին մի քանի օրվա ընթացքում: Այս դեպքում վախի հաղթահարման մի քանի հիմնական ճանապարհներ են նկարագրվում: Նախ, աստիճանաբար սովորում են առաջին հայացքից մահաբեր թվացող պայթյուններին, տարբեր տեսակի զինատեսակների ռումբերի ու արկերի ձայներին, փորձառությամբ յուրացնում դրանցից յուրաքանչյուրից սպասելի վտանգի աստիճանը: Այս դեպքում զինվորները փորձի միջոցով սովորում են, թե որ տեսակի ռմբակոծության ժամանակ ինչպիսի պաշտպանական գործողության պետք է դիմել, և պատերազմական իրողությունների ճանաչողության ընդլայնման կամ սպասվելիք վտանգից էմոցիոնալ ապրումը դատողականությամբ հավասարակշռելու միջոցով վախը վեր են ածում կառավարելի ապրումի՝ նվազեցնելով, իսկ որոշ դեպքերում հաղթահարելով այն: Վախը պատերազմի դաշտում հաղթահարելու այլ ձևերից են պատերազմին աստիճանաբար սովորելն ու դրան որպես առօրեականության վերաբերվելը: Այս դեպքում պայթյունների ձայները, տարբեր արկերի սուլոցները և պատերազմական առօրեականությանը բնորոշ շատ այլ երևույթներ դառնում են սովորական, քանի որ մի շարք իրավիճակների համար ժամանակի ընթացքում մշակվում են փորձառությունից բխող ստերեոտիպեր, որոնք որոշակի իրավիճակներին արձագանքելու մեխանիկական բնույթ են հաղորդում զինվորների վարքագծին՝ նվազագույնի հասցնելով այս կամ այն իրավիճակի և դրան արձագանքող ստերեոտիպացված գործողության հետ կապված վախի ապրումը: Եվ, վերջապես, վախի հաղթահարման երրորդ դեպքը, զինվորների պատմության համաձայն, մահի տեսարաններին սովորելն ու մահը որպես սովորական երևույթ ընկալելու իրավիճակն է:

*Էդ սկզբում շատ անդուր իրավիճակ էր, որ դու զգում ես՝ չես կարա դեմը առնես: Բայց հետո՝ կեսից, դրան էլ էիր սովորում. հա, դե, մեռանք՝ մեռանք: Վերջում մեծամասնության մոտ էդ վիճակն էր. մեռանք՝ մեռանք, չէ՝ չէ: Արդեն կրակում էին, վեջներս չէր. սենց, էլի, սովոր էինք:*

***Կամավորական, հրետանավոր, 23 տարեկան***

Համարյա բոլոր պատմություններում մարդիկ առանց կաշկանդվելու խոսում են իրենց վախերի մասին: Պատերազմում վախենալը նորմալ ու բնական երևույթ է համարվում: Ավելին՝ որոշ հարցազրույցներում վախ չունենալն է համարվում աննորմալ երևույթ: Եթե մարդը վախ չունի, ուրեմն ինչ-որ մի բան նրա դեպքում այն չէ, քանի որ բոլոր նորմալ մարդիկ բնականորեն պետք է վախենան մահից ու պատերազմից:

*Ես կյանքում մահից վախենալը վախ չեմ համարում, եթե մարդ մտածում ա՝ ինքը վախենում ա մահից, որովհետև իրա համար ավելի կարևոր բան կա, ուրեմն էտի ավելի կարևոր ա, թող ինքը գնա էտ անի, հավատա՝ էտ ավելի ճիշտ ա, ես էտի վախ չեմ համարում:*

***Պայմանագրային, տղամարդ, 24 տարեկան***

Վախի ապրումը և պատերազմում դրա մեխանիզմները ներկայումս առավել քննարկվող թեմաներից են[16]: Վախն ունի մարդուն կամազրկելու հատկանիշ[17], որը պատերազմական իրավիճակներում հաճախ հանդիպող երևույթներից է: Գրանցված դաշտային նյութերում նույնպես զինվորները բավականին անկաշկանդ նկարագրում են պատերազմի առաջին օրերին իրենց ընկերների վախի այդ ապրումը: Նկարագրությունների համաձայն՝ զինվորները որոշ դեպքերում դիմել են փախուստի հոգեբանական տարբեր մեխանիզմների, ընդհուպ մարտի դաշտից հեռանալու խնդրանքներ ներկայացնելը:

*Էս վերջի պրիզիվը, այսինքն՝ ամառվա գնացածները, մի քանի ամսվա ծառայած էին. նու, մեջները կային, երևի, մի 60-80 տոկոսը, որ շատ-շատ էին վախեցել ու չէին ուզում դուրս գային, դեմից, մի երկու օրը, ...որտև երկու ամիս են ծառայել... Օրինակ՝ հավաքվել էին, ասում են՝ բա, չենք կարա, մեզի մեր պոլկը տարեք: Բայց հետո անցավ*

16 Plamper, J. 2012. Soldiers and Emotion in Early Twentieth-Century Russian Military Psychology. Fear across the Disciplines. eds. Plamper J., and Lazier B. Pittsburgh: University of Pittsburgh Press. Pp. 78-99.

17 Boscoboinik A. 2014. Risks and Fears from an Anthropological Viewpoint. The Anthropology of Fear: Cultures beyond Emotions, ed. Boscoboinik A., and Horakova H. LIT Verlag. P. 16; McNelly R. 2012. Fear, Anxiety and Their Disorders. Fear across the Disciplines. eds. Plamper J., and Lazier B. Pittsburgh: University of Pittsburgh Press. Pp. 15-35.

*արդեն մի երկու օր, իրեք օր, սկսան արդեն հարմարվելը, սովորելը պատերազմին, արդեն բոլորն էլ կռվում էին:*

***Ժամկետային զինծառայող, հետախույզ, 20 տարեկան***

Որոշ պատմությունների համաձայն էլ՝ պատերազմի առաջին օրերին, երբ ձևավորվել է պատերազմը որպես մահվան սարսափ առաջացնող երևույթ ընկալելու զգացողությունը, զինվորներից շատերի դեպքում նկատվել են կամային հատկանիշների անկման և ստեղծված իրավիճակից փախուստի հոգեբանական տարբեր դրսևորումներ:

*Լարվում էին, ընկճվում էին, ձգվում էին, կծիկ էին դառնում ու չէին կարում շարժվեին, սկսում էին զառանցել, բացում էին հեռախոսը ու սկսում էին ընտանիքի նկարները նայել, ու ոնց որ իրանք էլ մարտի դաշտում չլինեին, տենց հոգեկանը խանգարվել, ու իրանք ըտեղ չլինեին:*

***Ժամկետային զինծառայող, շարքային, 20 տարեկան***

Այն, որ զինվորները գրեթե չեն ունեցել վախի հաղթահարման այնպիսի մեխանիզմներ, որոնք կապված են մարտական ոգու, արժեքային պատկերացումների, արիության և ռազմական հոգեբանության մեջ վախի հաղթահարման այլ հոգեբանական մեխանիզմների հետ, շատերն են նշում: Այս առումով բնութագրական է կամավորականներից մեկի նկարագրությունը.

*Այ, սահման կա, չէ՞, առաջին ռումբից հետո կորում ա: Այ, էն ոգեղենությունը, որ առաջին ռումբից հետո չի կորում, էդ ի՞նչ ոգեղենություն ա, ես չգիտեմ. ո՞նց նկարագրեմ դա, որտեղի՞ց ա գալիս, այ, դա շատ քիչ էր:*

***Կամավորական, տղամարդ, 27 տարեկան***

Պատերազմում մահվան վախի խնդրին նվիրված հետազոտությունների համաձայն՝ հատկապես այն պետությունները, որոնք հաճախ են ներգրավված լինում կոնֆլիկտային իրավիճակներում, այս խնդրին

ինստիտուցիոնալացված մոտեցում ունեն: Նրանց բանակներում կան համապատասխան հոգեբանական և գաղափարախոսական ինստիտուտներ, որոնք զինվորների ու սպաների հետ իրականացնում են ուսումնակրթական աշխատանքներ, որոնց շնորհիվ վախի կառավարումը դառնում է զինվորների ու սպաների պրոֆեսիոնալ ունակություններից ու մարտական պատրաստվածության բաղադրիչներից մեկը: Այս խնդիրը հատկապես լուրջ դիտարկումների է ենթարկվել ռազմական մարդաբանության ռուսական դպրոցի կողմից[18]: Չնայած հայկական բանակում չի գործում համապատասխան հոգեբանական ծառայությունների համար նախատեսված ինստիտուտ, սակայն այդ խնդրի լուծմանը որոշ առումով պետք է ծառայեին սպաների կողմից զինվորների շրջանում իրականացվող աշխատանքները: Ընդհանրապես, բանակում վախի հաղթահարման երկու հիմնական մեխանիզմներ են կիրառվում: Դրանցից առաջինը վախի էքզիստենցիալ մեխանիզմներն են, երբ զինվորների ու սպաների համար հոգեբանական աշխատանքի միջոցով ձևավորվում են այնպիսի իմաստներ ու մոտիվացիաներ, որոնք գաղափարական մակարդակում օգնում են մեղմել կամ նվազագույնի հասցնել վախի զգացողությունը[19]: *Էքզիստենցիալին* զուգահեռ կիրառվում են նաև *վախի հաղթահարման պրոֆեսիոնալ մեխանիզմներ*: Դրանցից է զինվորների ու սպաների մեջ մասնագիտական հմտությունների և ռազմի դաշտում սեփական անվտանգությունը մեծացնելու այնպիսի հմտությունների զարգացումը, որոնք ձևավորում են հակառակորդի նկատմամբ մարտական գերազանցության զգացում և ուժեղացնում վտանգներին ու տարբեր պատերազմական սպառնալիքներին սեփական ուժերով դիմակայելու կարողությունը[20]:

Հայկական բանակում նույնպես այն զինվորականները, որոնց մարտական ու բարոյահոգեբանական պատրաստվածության աստիճանը բարձր է եղել, հեշտությամբ հաղթահարել են վախի զգացումը:

---

18 Данильченко С., Кадыров Р., Кулешов В. 2007. Отношени к смерти и бессмертию на войне. Владивосток; Караяни А., Караяни Ю. 2015. Страх на войне: деструктивный фактор или психологический ресурс? Российский психологический журнал, 1: Сс. 10-113; Караяни А., Сыромятников И.. 2006. Прикладная военная психология. СПб.: Питер; Николаи Ф., Кобылин И. 2020. Указ. соч.

19 Николаи Ф., Кобылин И. Указ. соч., с. 3.

20 Данильченко С., Кадыров Р.,Кулешов В. Указ. соч., с. 32-46; Караяни А., Караяни Ю. Указ. соч., с. 103.

*Սենց ասեմ. իրանք փորձում էին վախի մթնոլորտ առաջացնեին՝ գոռալով: Էտ իրանց «ալլախ ակբարը» գոռալով առաջ էին գալիս, ու ըտեղ իրանք ստացան մեր պատասխանը (ծիծաղում է): Էտ պահին միակ բանը, ասենք, կոնկրետ ես ու իմ կողքը կանգնածներից շատերը մտածում էին՝ ոնց անեն, որ հնարավորինս շատերին խփեն: Նենց չի, որ չէիր հասկանում՝ ուր ես գնացել, ու ինչ կարող ա լիներ: Դե, երևի պատրաստված էինք, դրանից էր: Նենց չի, որ էրեխա էինք ու չէինք հասկանում, թե ցանկացած պահի, ասենք, կարա էտ ականը քո կանգնած տեղում ընկնի, կամ մի հատ գնդակ կարա շատ հանգիստ... բայց չգիտեմ, վախ՝ որպես էտպիսին, չէ, չի էղել:*

***Կամավորական, կին, 36 տարեկան***

Ինչպես ցույց են տալիս գրանցված դաշտային նյութերը, հայկական բանակում վախի հաղթահարումը համեմատաբար ավելի հեշտ է եղել ժամկետային զինծառայողների և չափազանց դժվար՝ պահեստազորայինների միջավայրում: Այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ ժամկետայինների մարտական պատրաստվածության աստիճանն ավելի բարձր է եղել, ինչը նրանց մեջ ձևավորել է վախի հաղթահարման պրոֆեսիոնալ մեխանիզմներ:
Պատերազմում վախի հաղթահարման կարևոր գործիքներ են եղել նաև մարտական առաջադրանքի հստակությունը, նպատակի առկայությունը, թիմային համագործակցությունը, մարտական ընկերների հանդեպ վստահությունը և առաջնորդական հատկանիշներով օժտված հրամանատարական կազմի առկայությունը: Այս տեսանկյունից եթե գնահատենք հայկական բանակը, ապա նշված հատկանիշները ամենից շատ բնորոշ են ժամկետային զինծառայողներից և կադրային սպաներից կազմված կանոնավոր բանակին և ամենից քիչ՝ պահեստազորայիններին: Վերջիններս նշված բոլոր հատկանիշների առումով շատ ցածր ցուցանիշներով են բնութագրվում: Շատ ցածր է եղել թիմային համագործակցության, փոխադարձ ճանաչողության ու վստահության աստիճանը, իսկ սպայական կազմը ոչ միշտ է ունեցել առաջնորդական հատկանիշներ:
Վախի հաղթահարման կարևոր միջոցներից է համարվում կոլեկտիվ պատկանելության զգացողությունը, կոլեկտիվին միավորող նպատակի

ու գաղափարի առկայությունը և այդ գաղափարը կրող խարիզմատիկ անհատի կամ անհատների առկայությունը: Պատերազմը կյանքի ու մահվան սահմանին գտնվող միջավայր է: Սակայն պատերազմը սովորական սահմանային վիճակ չէ: Այն ծայրահեղ սահմանային վիճակներից է, որում կարող է հայտնվել մարդը, քանի որ սահմանի այս կամ այն կողմում հայտնվելը մարդու համար մահվան կամ կենդանի մնալու խնդիր է: Այդ միջավայրում մարդու հայտնվելը՝ առանց ամուր խմբային կապերի ձևավորման, առանց փոխօգնության հույսի, վիրավորվելու դեպքում՝ զինակիցների օժանդակությունն ու աջակցությունը ստանալու ակնկալիքի, հոգեբանորեն մեծացնում է մահվան սպառնալիքը: Խմբային կապերի առկայությունը՝ հակառակը, օգնել է հաղթահարել կրիտիկական միջավայրում մենակության ապրումն ու պաշտպանվածության զգացումը:

*Ես որ չգիտեմ, ընդեղ ընկերական մի հատ քաղցր շրջապատ ստեղծվեց, որ երբ որ պահը գալիս էր, որ որոշեիր՝ չէ, դու անզոր ես էս զորքի դեմ, բայց դու, չգիտեմ, ուժեղ ես էս 10 հոգու կողքը, դու իրանց կողքին կա՛մ պետք ա ընկնես, կա՛մ իրանց հետ հասնես տուն, ու տենց էլ էղավ:*

***Պայմանագրային, տղամարդ, 24 տարեկան***

Զինվորների վախի հաջորդ ամենամեծ աղբյուրը եղել է ***գերի ընկնելու վախը***: Հետաքրքիր է, որ որոշ զինվորների մեջ գերի ընկնելու վախն ավելի մեծ է եղել, քան մահվան վախը: Գերի ընկնելու վախը գերազանցել է մահվան վախին մի քանի հիմնական դեպքերում: Որպես կանոն, դա առաջին հերթին եղել է այն մարդկանց մեջ, ում վրա շատ մեծ է հայրենասիրական նարատիվի ազդեցությունը: Այս դեպքում նկատելի է, որ տվյալ զինվորը հաղթահարել է կամ նվազագույնի է հասցրել էքզիստենցիալ վախը: Քիչ չեն այն նկարագրությունները, երբ զինվորները խոսում են գերի ընկնելու վտանգի դեպքում ինքնասպան լինելու պահեստային փամփուշտ կամ նռնակ պահելու մասին:

*Մեր Ա....ն գրանատը ձեռքը տրաքցրել ա իրան, որ արդեն մոտիկացել են իրան: Ուժե սմերչով, գրադով-բանով որ խփել են, արդեն ամեն*

*մեկը ցիրուցան ա լինում, էս մարդը վիրավորվել ա, իրա գրանատը քաշել ա, ասել ա՝չեք կարալու էլ ինձ տանեք, դուք փրկվեք, ու էդ մարդը իրան տրաքցրել ա: Հետո մենք իրա դիակը տեսել ենք: Պատերազմը պրծած ա հայտնաբերվել:*

***Կամավորական, տղամարդ, 46 տարեկան***

Առաջին հայացքից սա մահվան վախի հաղթահարման էքզիստենցիալ մեխանիզմի դրսևորում կարելի է համարել, որը որոշ զինվորների դեպքում հենց այդպես էլ եղել է: Երբեմն, սակայն, նկատելի է, որ գերի ընկնելու դեպքում ինքնասպանության պատրաստակամությունը ոչ այնքան մահվան վախի հաղթահարման հետ է կապված, որքան՝ տանջանքներով մահանալու վախի հեռանկարից խուսափելու հետ: Մեկ այլ պատճառ էլ կապված է սոցիալական միջավայրից ունեցած վախի այն տեսակի հետ, որի հետևանքով անհատը մտածում է պատվի կամ սոցիալական միջավայրում կարգավիճակը չկորցնելու մասին:
Կարևոր է նաև նկատել, որ գերի ընկնելու վախի հաղթահարման ամենածայրահեղ, բայց միևնույն ժամանակ ամենաազդեցիկ միջոցներից մեկը մահվան վախի հաղթահարումն է: Գրանցված պատմությունների համաձայն՝ այն զինվորները, որոնք մահը գերադասել են գերի ընկնելուց, ամենամարտունակ և խիզախ զինվորներն են եղել, բայց նրանց թվում շատ են եղել նաև ինքնազոհաբար զոհվածները:
Դատելով գրանցված պատմություններից՝ գերի ընկնելու վախի հաղթահարման գործում նույնպես կարևոր դեր են խաղում պրոֆեսիոնալ մեխանիզմները: Հմուտ, սեփական գործին տիրապետող զինվորականներն ավելի քիչ են վախենում գերի ընկնելուց: Այս առումով, զինվորականների կյանքը պահպանելու տեսանկյունից շատ ավելի գերադասելի է ոչ թե մահվան վախն ընդհանրապես անտեսելու աստիճան հաղթահարելու, այլ՝ պրոֆեսիոնալ մեխանիզմների կիրառումը:
Վախի հաղթահարման պրոֆեսիոնալ մեխանիզմների զարգացման առավել կայուն ճանապարհը զինվորականների միջավայրում ստեղծարար կարողությունների ու մոտեցման ձևավորումն է: Ընդհանրապես, ստեղծարար մոտեցման զարգացումը անհատի մեջ կամ սոցիալական այս կամ այն միջավայրում և ինստիտուտներում վախի մարդաբանական

ուսումնասիրությունների մեջ համարվում է առավել կայունն ու գործունը[21]: Ռազմական հոգեբանության մեջ վախի հաղթահարման պրոֆեսիոնալ մեխանիզմների զարգացումը կարևորների շարքում է, քանի որ համարվում է, որ այս դեպքում զինվորները պահպանում են իրենց մարտունակությունը, և վախը նրանց չի խանգարում մարտական առաջադրանքի իրականացմանը, այլ նույնիսկ՝ հակառակը: Պրոֆեսիոնալ հատկանիշների շնորհիվ գերի ընկնելու վախի հաղթահարումը նպաստում է զինվորների մարտական ոգու բարձրացմանն ու գործողությունների արդյունավետությանը:
Վախի հաղթահարման կարևոր գործիքներ են համարվում պատերազմի ժամանակ սեփական գործողության կարևորության գիտակցումը, դրանից ընկերների կյանքի ապահովության աստիճանի բարձրացման գիտակցումը, այսինքն՝ պատասխանատվության զգացումը մեկ ուրիշի կամ այլոց կյանքի համար: Ուշագրավ է, որ վախի հաղթահարման այս միջոցը հաճախ սահմանակցում է հերոսությանը:

## 3.2. Հերոսություն. մահվան վախի հաղթահարման ճանապարհը

Նկատելի է հատկանշական մի երևույթ. հերոսության ու հերոսի մասին պատկերացումները երբեմն էականորեն տարբերվում են պատերազմին մասնակցածների ու չմասնակցածների դեպքում: Պատերազմին չմասնակցածների մեջ շատ են այնպիսիները, որ պատերազմի բոլոր մասնակիցներին անխտիր անվանում են հերոս: Երբեմն նույնիսկ գերիներին են անվանում հերոս: Նման մոտեցում չի հանդիպում պատերազմին մասնակցածների միջավայրում: Նրանցից շատերի կարծիքով՝ պատերազմին մասնակցած ամեն մեկին չի կարելի հերոս համարել, այլ միայն նրանց, ովքեր, իրենց կարծիքով, առանձնահատուկ արարք են գործել պատերազմի ընթացքում:

[21] Humphrey, C. 2013. Fear as a Property and an Entitlement. Social Anthropology, 21: 3, p. 289.

*Սենց ասեմ, էլի. էն իսկական կռվողն էլ ա տյառնում հերոս, էն փախնողն էլ ա տյառնում հերոս: Տենց պյան չի ինի, տենց ա տյառնում:*

***Պայմանագրային զինծառայող, միջին տարիքի տղամարդ***

Հատկանշական է, որ պատերազմի մասնակիցներից շատերը, նույնիսկ նրանք, ովքեր իրենց արարքների համար պարգևատրվել են տարբեր մեդալներով, զրույցներում խուսափում են իրենց հերոս անվանել՝ նկատելով, որ պարզապես լավ կռվելը, հակառակորդի զինտեխնիկայի որոշակի քանակ խոցելը դեռ հերոսություն չէ, դա պարզապես լավ զինվորականի հատկանիշ է, որը լավ է տիրապետում իր մասնագիտությանը: Իհարկե, պետք է խրախուսել այդպիսիներին, կարելի է նաև մեդալներ տալ, բայց դա դեռ բավարար չէ մարդուն հերոս կոչելու համար:

Ամենից տարածված կարծիքի համաձայն՝ հերոսությունը ինքնազոհության կամ անձնազոհության բաղադրիչ ունի: Ըստ այդմ՝ հերոս կարելի է համարել այն մարդուն, որը՝

- սեփական կյանքը վտանգելով փրկում է ուրիշի կյանքը.
- սեփական կյանքը վտանգելով իրականացնում է մարտական սխրանք, երբ այդ սխրանքի շնորհիվ հաջողվում է իրականացնել մարտական առաջադրանքը.
- սեփական կյանքը վտանգում է հայրենիքի գաղափարի համար:

*Հերոսը էն մարդն ա, որ կռվել ա, իրոքից, որ ընգերոջ կյանքը փրկել՝ իրա կյանքի դիմաց: Հիմնական ես հերոսներին տենց եմ դնում հերոս: Բայց մարդիկ, եսիմ, հմի չես գիտի՝ ինչ ձև արտահայտվես, որ մարդիկ վատ չզգան: Խոսքի, նստած ենք 20 հոգով, անօդաչուն ընգել ա մեջները, տրաքել են, ասում են՝ հերոս: Էտրա հերոսը ես չեմ տենում, էլի: Հերոս են, որ մեռե՛լ են: Ճիշտ ա, մեր անմեղ զոհերն են, այ տենց կարելի ա ասել, բայց հերոս չեն, ուղղակի անմեղ զոհեր են, ասենք: Շատերը ճամփին են տրաքել, շատերը... Հերոս կըլնես, որ դիրք վերցես, գոնե, մի հող ազատագրես:*

***Կամավորական, տղամարդ, 28 տարեկան***

Զինվորների նկարագրություններում հերոսականության նկարագրության դեպքերը շատ են: Ըստ այդ պատմությունների՝ հերոսականության ամենից բնորոշ հատկանիշը ծայրահեղ իրավիճակում գործելու կարողությունն է: Փախչելն ու ընկրկելը նման նկարագրություններում գործողություն չեն համարվում:

*Հերոսը որն ա, որ ես, ասենք, իրան տեսել եմ իսկական հայի պատկերով: Ջահել էրեխեք, ինձանից էլ ջահել, մեր գյուղից, PK-ով մինչև վերջը վիրավորներին հանեց, գնաց ու հանեց, մենք որ ռիսկ չէինք անում, կարկուտի պես խփեն-խփեն-խփեն, մեկ էլ մեզնից մեկը ռիսկ անի էթա էդ շագին ու գնա բերի: Հերոսական քայլ:*

***Կամավորական, տղամարդ, 43 տարեկան***

Հերոսական արարք է համարվում ոչ միայն  հանուն մեկ ուրիշի իրեն վտանգելու պատրաստակամությունը կամ զինակցին անօգնական չթողնելը, այլև սեփական առաքելությունն իրականացնելու գործում պարտքի բարձր զգացումը: Երբ մարդն այնքան է նվիրված իր առաքելությանը, որ նույնիսկ ծայրահեղ իրավիճակները նրան չեն կանգնեցնում: Նման պատմություններ երբեմն հնարավոր է լսել քաջարի հրամանատարների կամ զինվորական բժիշկների մասին:

*Էս դոշս, որ արդեն ահագին ճղվել ա, սենց կաշին կախվել ա, չհաշված դեմքիս մնացած մասերը, ասի՝ Ջորո, հաստատ սրանք մոտիկ են հասե, ասի՝ ինձի թողեք ըստե, փախեք դուք, տենց մի կերպ… Չէ, ոչ մի բան չկա, էսկոմ-էնկոմ, կապ տվեցինք, լավ էր՝ Կարենը՝ մեր բուժկետի մեր աշխատողը, շուտ հասնում ա, մի կես ժամվա մեջ, էդ ժամանակ ամենաուժեղ տղեն իմ համար Կարենն էր, իրանից ուժեղ տղա ես հլը չեմ տեսե, որ ամեն մեկս վախենում ենք՝ էսինչը անենք՝ կարող ա մեռնենք, ինքը էտի չէր մտածում վաբշե:*

***Ժամկետային զինծառայող, 20 տարեկան***

Որոշ կարծիքների համաձայն էլ՝ հերոսության դրսևորում կարելի է համարել այն, երբ մարդ մահացու վիրավորված վիճակում թույլ չի

տալիս զինակիցներին, որ վտանգեն իրենց կյանքը հանուն իրեն ու նաև հասկանալով, որ կարող է գերի ընկնել, ինքնազոհության որոշում է կայացնում՝ հաղթահարելով մահվան վախը:
Ինչ վերաբերում է հանուն հայրենիքի կամ հանուն վերմարդկային համարվող այլ արժեքի կյանքը զոհաբերելու և հերոսանալու դեպքերին, ապա այս պատերազմում նման պատմություններ հաճախ չեն հանդիպում: Պատճառները մի քանիսն են: Նախ՝ պատերազմի ընթացքում ադրբեջանական բանակի ակնհայտ առավելությունը, հայկական բանակի տեխնիկական հետամնացությունը, քաղաքական ու ռազմական վերնախավերի միջև առաջացած պառակտվածությունը, պատերազմում անընդհատ նահանջն ու զորքերի մեջ խուճապային լայնածավալ տրամադրությունները, բանակում պատերազմի անիմաստության, դավաճանության մասին տարածվող քարոզչությունը բավականին թուլացրել էին գաղափարական ազդեցության հնարավորությունը բանակում: Երկրորդ՝ այս պատերազմում պարտությունը և հողերի կորուստը շատ նեղացրել են նման դիսկուրսի արժեքը հասարակության լայն շրջանակներում: Երրորդ՝ մեծ թվով մահերը և հողերի վերադարձի հետ կապված դիսկուրսն ու նոր պատերազմի վտանգը չի ողջունում հասարակությունը, քանի որ բավականին մեծ է նոր մահեր ունենալու կոլեկտիվ վախը:
Չնայած պատերազմի մասնակիցների միջավայրում համատարած հերոսականացմանը դեմ արտահայտված կարծիքների գերակշռությանը, գրանցված նյութերում հանդիպում են նաև այլ մոտեցումներ: Հազվադեպ հանդիպող նման կարծիքներից է այն, որ վախը հաղթահարելն ու մարտական գործողություններին մասնակցելը, աչքի առաջ ամեն պահ մահն ունենալը, ընկերների մահը տեսնելն ու պարզապես պատերազմի թոհուբոհի միջով անցնելն արդեն իսկ հերոսություն է:

*Իմ համար, ով մասնակցել ա, էդ ամեն ինչը տեսել ա իրա աչքերով ու դրանից հետո շարունակել ա մնալ, ինքն արդեն հերոս ա: Հա, ով մնացել ա ինքն արդեն հերոս ա, հիմա գիտակցված… չգիտակցված մահը մահ է, գիտակցված մահը անմահություն: Էն որ էտի մենք խոսում ենք, մենակ զուտ պատկերացնում ենք, չէ՞, բայց էտի տենալը մի այլ բան ա, պատկերացնելը՝ մի այլ: Որ գիտես՝ էթում ես մեռնես, հաստատ էն, որ էթում ես, դրանից տենց ավելի մեծ քայլ չկա էս կյանքում:*

***Ժամկետային զինծառայող, շարքային, 20 տարեկան***

Մեկ այլ մեկնաբանության համաձայն նույնպես՝ պատերազմին պարզապես մասնակցելը գնահատվում է հերոսություն: Այս բացատրության առանցքային հիմնավորումը ևս կապվում է մահվան վախը հաղթահարելու հետ: Այս դեպքում կարևոր է համարվում ոչ այնքան պատերազմի սարսափները հաղթահարելն ու դրա միջով անցած լինելը, որքան հենց պատերազմին մասնակցելու որոշում ընդունելու պահին վախը հաղթահարելն ու քայլ անելը:

*Հերոսություն էր: Հերոսությունը հենց էն ա, երբ որ քեզ զանգում են, ու դու արդեն որոշում ես կայացնում գնալու, կապ չունի՝ դու հետ կգաս, թե չէ: Իրան ասում են՝ կգնա՞ս, կռիվ ա, ասում ա՝ հա, ու գնում ա: Դու էտ պահին չգիտես՝ իրա հետ ինչ կըլնի, չէ՞, ինքը ո՞նց կվարվի ընդեղ, սխալ կանի՝ կմահանա՞, թե՞ ճիշտ կանի՝ կմահանա, բայց ինքը ըտեղ որոշում ա մեռնել ազգի համար, էտի արդեն հերոսություն չի՞: Ֆսյո, իմ համար հերոսությունը հենց էտ առաջին վայրկյանին որոշում կայացնելն ա, որ եթե ինձ կանչել են, ես պիտի գնամ, էտ ա, իսկ ընդեղ արդեն հերոսություններ կան, որ կարա անի լավ պատրաստված ռազվետչիկը, էտ կարա, չգիտեմ, գնա մենակով ինչ-որ մի հատ օպերացիա անի, ինչ-որ մի հատ ուժեղ բան, չզոհվի, հետ գա:*

***Պայմանագրային զինծառայող, 24 տարեկան, ուսանող***

Հերոսությունը պատերազմին մասնակցության հետ կապող մեկ այլ կարծիքի համաձայն էլ՝ այն պետք է վերաբերի միայն 18-20 տարեկան ժամկետային զինծառայողներին, որոնք, չունենալով կյանքի փորձ, դեռ իրական կյանք մտնելու նախաշեմին հայտնվել են նման փորձության մեջ ու կարողացել են հաղթահարել վախը, ուժ գտնել իրենց մեջ ու կռվել պատերազմի դաշտում:

*Իսկ հերոսական, էս պահի դրությունով էդ պատերազմի մասնակից բոլոր էրեխեքն էլ սաղ իմ համար հերոս են՝ կենդանի թե զոհված: Այսինքն՝ իրանք մեր համար զոհված չեն, իրանք միշտ էլ կան, մեր մոտ են, մեր կողքն են: Բոլոր էրեխեքը, սաղ էլ հերոս են, որովհետև շատ քիչ մարդ, որ էտ տարիքում... ասենք, յուրքոյ տարբեր ազգերից բերես էտ տարիքի էրեխա, մեկ էլ մեր հայ էրեխեքը՝ մեր գորիսեցին ա, մեր երևանցին ա, վոփշմ, տարբերություն չկա, հաստատ ոչ մեկ էտ ուղեղը, էտ համարձակությունը չի ունենա, ինչ որ ունեն մեր հայ էրեխեքը: Իրանց գլխավերևում սպա չլինելով՝ իրանք էտ կարգի գործողություն*

*են ծավալել, էտ կարգի պատերազմի մասնակից են էղել, ու շատ մարդ ողջ-առողջ էս պահին իրա զինընկերների հետ ա կամ իրա տունն ա, էտ արդեն հերոս ա:*

***Կամավորական, տղամարդ, 51 տարեկան***

Ի դեպ, այս կարծիքները բավականին մոտ են պատերազմին չմասնակցած՝ հանրային այն շրջանակների կարծիքներին, համաձայն որոնց՝ պատերազմի բոլոր մասնակիցներին պետք է հերոս համարել: Հատկանշական է, որ այս կարծիքի ձևավորման հիմնական պատճառը նույնպես մահվան վախի հաղթահարման ու հերոսության միջև կապի մասին պատկերացումն է: Ըստ այդմ՝ բոլոր զինվորները հերոս են, քանի որ, իրենց կարծիքով, ցուցաբերել են Հայաստանում ապրող մարդկանց կյանքը թշնամու հարձակումից պաշտպանելու համար իրենց կյանքը զոհաբերելու պատրաստակամություն:
Հատկանշական է, որ հերոսության մասին դիսկուրսը համատարած է եղել հիմնականում քաղաքացիական բնակչության միջավայրում: Զինվորներն իրենք հերոսականության դիսկուրսով չեն առաջնորդվել: Ուշագրավ է, որ այս պատերազմում հերոսականության դիսկուրսն ավելի թույլ է եղել, քան առաջին պատերազմում, որտեղ պատերազմի մասնակիցները հիմնականում եղել են հանուն հայրենիքի պաշտպանության զինվորագրված կամավորականներ: Այս պատերազմի մեջ շատերը հայտնվել են պարտականությունների բերումով և լուծել են հիմնականում մի հարց՝ հարձակվող թշնամուց պաշտպանվելն ու կենդանի մնալը: Պատերազմում մեծամասնություն չեն կազմել նրանք, ովքեր ռազմի դաշտ են մեկնել հանուն բարձր գաղափարի սեփական կյանքը զոհաբերելու պատրաստակամությամբ: Այդ պատճառով, այս պատերազմում հերոսականությունը եղել է ավելի քիչ գաղափարականացված, և հերոսական արարքների մեծ մասը կապված է այս կամ այն իրավիճակում ընկերների կյանքը փրկելու հետ: Այսինքն՝ այս պատերազմում հերոսականությունը հիմնականում կապվում է առավելապես մարդկային կյանքը արժևորելու դեպքերի հետ և ավելի քիչ՝ հանուն հողի կամ հայրենիքի փրկության գաղափարի: Հատկանշական է, որ գրանցված պատմություններում ամենամեծ կորուստը շատերը համարում են առաջին հերթին երիտասարդ տղաների կյանքերը, հետո նոր միայն՝ կորցված տարածքները:

Այս առումով շատ հետաքրքիր է, որ զինվորներից շատերը դեմ են արտահայտվում իրենց հերոսականացմանը: Նույնիսկ այնպիսի դեպքերում, երբ մարդը բավականին բարդ փորձություններ է հաղթահարել, ավելի շատ կարևորում է իր կենդանի մնալը, քան՝ հերոս կոչվելը: Հերոսականացվելու շուրջ պատերազմի որոշ շրջանակների միջավայրում առկա անհամաձայնությունը շատ հետաքրքիր է ձևակերպել մասնակիցներից մեկը.

> *Դա հերոսություն չի, դա նորմա ա: Այ, հենց էդ ա, էլի, որ նորմալ բաները մենք սկսել ենք հերոսացնել: Նայե՛ք, սենց ասեմ. լիքը մարդ կա, որ էս կյանքում ոչ մի արժեք չի ստեղծել ու էնտեղ էլ պատահական մահացել ա, ենթադրենք, ինքը հերո՞ս ա: ... Մեզ մարդիկ պետք չեն, որ կյանքը տան հայրենիքին ու հերոսներ անվանվեն, ես տենց եմ կարծում... Ես ու իմ ընկերները իրանցից մեկն ենք, ու էս իրավունքը ես ինձ կարող եմ վերապահեմ ու ասեմ, թե ինչի ա պետք, որ էս հերոսությանը վերջ տրվի: Նորմա ա, դու ծառայել ես, դու երկիր ես, դու զինվոր ես, դու գնում ես, կռվում ես, մահանում ես կամ հետ ես գալիս. նորմա ա սա: Ի՞նչ հերոսի մասին ա խոսքը, եթե դա նորմա ա: Մենք էնքան ենք արժեքներից թուլացել, որ հերոս ասելը մեր համար… Հա, սիրուն ա, հաճելի ա հնչում, ինձ էլ որ ասեն, ես լավ կզգամ: Բայց ես չեմ ընդունում դա: Այ, ինչու՞ հերոս չի գիտնականը: Հենց էդ ա էլի, մենք ժամանակին չենք հերոսացրել գիտնականին, որ էսօր մենք չհերոսացնեինք նորմայով իր ծառայությունն արած զինվորին… Չնայած՝ մի կողմից էլ որ նայում ես՝ հերոս են, էդքան անհերոս միջավայրից իրանք դուրս են գալիս ու անձնազոհությամբ են զբաղվում, էդ առումով հերոս են, բայց իրանք էդ հերոսությունից չեն խոսում, իրանք չեն էլ հասկանում, թե ինչ ա հերոսությունը կամ հերոս լինելը: Դա ծառայել ա, դա արժեքները հասկանալ ա: Իսկ հերոսը իրան կյանքում հերոս չի անվանի, դուք ի՞նչ իրավունք ունեք իրան հերոս անվանեք:*
>
> ***Կամավորական, տղամարդ, 26 տարեկան***

Հետաքրքիր է, որ այս պատերազմի որոշ մասնակիցներ էլ քննադատական վերաբերմունք ունեն զինվորներին հերոսականացնելու միտումի

հանդեպ: Այսպիսի վերաբերմունք ունեցողներից շատերի կարծիքով հերոսականացումը նման է ծուղակի, քանի որ դրա միջոցով քողարկվում են երևույթներ, որոնց ընկալումը թույլ կտար համարժեքորեն ախտորոշել շատ իրողություններ և վերաիմաստավորել մեր նպատակներն ու խնդիրները: Այսինքն՝ կարելի է ասել, որ հերոսականացմանն ուղղված մեջբերված քննադատական կարծիքի հիմնական միտքն այն է, որ *պետք է այնպես անել, որ պատերազմի դեպքում հնարավորինս քիչ անհրաժեշտություններ առաջանան հերոսանալու, քանի որ արդի ժամանակներում որոշիչը պետք է լինեն ոչ թե հերոսական անհատները, այլ՝ զարգացման բարձր ստանդարտները*:

Հերոսության վերաբերյալ պատերազմի մասնակիցների մոտեցման էական տարբերությունը չմասնակցածների կարծիքից կարող է նաև մարդաբանական բացատրություն ունենալ, եթե հաշվի առնենք, որ հերոսությունը մշակութային ծագում ունեցող երևույթ է: Ինչպես և շատ մշակույթներում, հայկականում նույնպես հերոսը մահվան սպառնալիքի դեմ տվյալ հասարակությունում առկա կոլեկտիվ վախի հաղթահարման՝ մշակութայնորեն ստեղծված ամենախորքային արխետիպային կերպարներից մեկն է: Հերոս փնտրելը կարելի է համարել նաև ծայրահեղ իրավիճակներից հոգեբանական փախուստի մեխանիզմներից մեկը: Հասարակությունը միշտ գտնում է հերոսներ, եթե նույնիսկ նրանք չկան, եթե նույնիսկ նրանք դրան դիմադրում են: Մարդիկ միշտ գտնում են հերոսներ՝ որպես ծայրահեղ իրավիճակներից սեփական փախուստի արդարացումներ: Ամեն մշակույթ ունի իր հերոսական պատմությունը: Դրանում նկարագրվում է առաջին հերոսական արարքը՝ կռիվը կամ պատերազմը, որը մարդաբանական տեսանկյունից դիմադրություն է փախուստին: Պատերազմը, կռիվը կամ պայքարը փախուստը կանխող արարքներ են կամ, ավելի ճիշտ, փախուստի վիճակից հանրույթին դուրս բերող, ազատագրող միջոցներ, որ իրականացվում են չարին հաղթելու առասպելաբանական գործողությամբ: Հայկական մշակույթում նույնպես պատերազմը մեկնաբանվում է որպես փախուստին ուղեկցող՝ այդ փախուստի վիճակից դուրս գալու և խաղաղություն հաստատելու միջոց: Մեր առաջին հերոսը՝ Հայկ Նահապետը, թշնամու ճնշմանն ընդդիմացած ու ազատագրման նպատակով փախուստի դիմած խմբի առաջնորդն է, որն ի վերջո որոշում է փախչելու փոխարեն պատերազմել: Այս տեսանկյունից պատերազմը նաև ազատագրման, այսինքն՝ ինքնության ձևավորման

ու պահպանման մշակութային միջոց է: Հերոսը նաև տվյալ հանրույթի միասնականության գաղափարի ու նրանց համախմբող իմաստները ստեղծողն է, հանուն որի հերոսի շուրջ համախմբված հանրույթը հաղթահարում է մահվան կոլեկտիվ վախն ու դուրս գալիս պատերազմի: Այսինքն՝ հետևում է իր հերոսին ու հերոսականությունը դարձնում նորմավորված վարքագիծ ամբողջ հասարակության համար, ինչի շնորհիվ ամբողջ հասարակությունն է իրականացնում հերոսական արարք: Տարածված թեմա է նաև այն, երբ հերոսը կամ հերոսները միայնակ են դուրս գալիս կռվի և ազատում հասարակությանը մահվան վտանգից ու դրա հանդեպ ունեցած կոլեկտիվ վախից: Հայկական մշակույթում դրա արխետիպային դրսևորումը կարելի է համարել էպոսի հերոսներին՝ Մեծ Մհերին և նրա որդուն՝ Դավթին: Ուշագրավ է, որ Փոքր Մհերին կարելի է համարել պատերազմը մերժելու ճանապարհով մահվան վախից ազատվելու գաղափարը մարմնավորող մշակութային հերոս: Այսինքն՝ կարելի է ասել, որ հայկական մշակույթում մահվան վախի հաղթահարման երեք հիմնական մոտեցում կա՝

- ամբողջ հասարակության կողմից հերոսական վարքագծի որդեգրումն ու ազատագրական պատերազմի դուրս գալը.
- հերոսի կամ հերոսների միջոցով այդ խնդրի լուծումը.
- պատերազմի գաղափարից ընդհանրապես հրաժարվելը:

Այս հետազոտության նպատակը չէ ցույց տալ, թե նշված արխետիպային մոտեցումներից որոնք են ազդեցիկ եղել այս պատերազմի ընթացքում: Դա առանձին հետազոտական խնդիր է: Սակայն կարող ենք ենթադրել, որ հերոսականության համատարած ընկալումը կապված էր պատերազմի ընթացքում հասարակության մեջ ձևավորված կոլեկտիվ վախի ու դրա հաղթահարման խնդրի հետ: Մասնագիտական գրականության մեջ կոլեկտիվ վախի հաղթահարման հետ է կապվում նաև հասարակության լայն շրջանակներում ծավալված՝ դավաճանների կամ քավության նոխազների փնտրտուքը[22]:

22 Boscoboinik A. 2014. Risks and Fears from an Anthropological Viewpoint. Pp. 16–17.

## 3.3. Դավաճանության պատումները պատերազմում և դրա գործիքավորման փորձերը պատերազմին հաջորդած շրջանում

Սոցիալ-մշակութային մարդաբանության խնդիրը չէ ցույց տալ՝ արդյոք եղել են դավաճանություններ պատերազմում, թե ոչ: Այսինքն՝ մարդաբանության տեսանկյունից կարևոր է ոչ թե դավաճանությունը որպես փաստ, այլ՝ թե ինչպես են այն պատմում ու ներկայացնում, ինչպես է այն տեղավորվում լայն առումով՝ պատերազմի մեկնաբանություններում և նեղ առումով՝ ինքնանկարագրության մեջ:

Պատերազմի վերաբերյալ գրանցված բանավոր պատմություններում հաճախ կարելի է հանդիպել դավաճանության թեմային: Կարելի է ասել նույնիսկ, որ այս պատերազմը նախորդից տարբերվում է նրանով, որ դավաճանության թեման պատերազմի նկարագրություններում առանցքայիններից է: Այն շատ տարբեր ձևերով է պատմվում: Երբեմն մարդիկ դրա մասին խոսում են անթաքույց ու բացեիբաց, երբեմն՝ զգուշավոր ակնարկներով, երբեմն՝ կասկածամտորեն, երբեմն՝ շատ անուղղակի, իսկ երբեմն էլ՝ ենթադրությունների ձևով: Բայց անկախ այն բանից, թե ինչպես են խոսում այդ մասին, թվում է, թե շատերն են մտածում, որ այս պատերազմում պարտության պատճառներից մեկը եղել է դավաճանությունը:

*Մեր բանակը չէր պարտվի, հիմնականը՝ տարան պարտության: Այ, տենց կարամ ասեմ, որովհետև մեր բանակը նենց չէր՝ ուժեղ չէր, շատ ուժեղ բանակ էր: Ուղղակի տարան պարտության էտ իրանց անկազմակերպ... Հիմնական՝ էտ նախանջները, որ տվել են, ասել են՝ զենք ենք կիրառում, ու էտ զենքերը չեն կիրառե: Շատը տենց ա էղե: Անկռիվ գրավել են շատ տեղեր: ... Տո, եսիմ, սարքած էր, ինձի կթվա, էսի: Էտ ձև պտի ըլներ: Ուղղակի շատ էղավ, էլի:*

***Կամավորական, տղամարդ, 46 տարեկան***

*Նենց տպավորություն ա, դաժը ոչ թե մենակ իմ, այլ մի եքա մարդու մոտ, որ էսի ցելով ինչ-որ մարդիկ տարել են էտի, որ հենց դեմից*

*շարքից հանեն, որ ինչ-որ գործողություններ կատարվի հակառակորդի սրտով: Թե չէ սա, ասենք, ուրիշ անվանում չես կարա տաս:*

***Պահեստազորային, տղամարդ, 28 տարեկան***

Դավաճանության տակ տարբեր մարդիկ տարբեր արարքներ են տեսնում, և ուշագրավ է, որ դրանում մեղադրվող կողմերն ու դերակատարներն էլ են տարբեր: Հաճախ նաև արմատականորեն տարբեր: Բանավոր պատմություններում հանդիպում են նկարագրություններ, երբ զինվորների մեջ տարածել են խոսակցություններ, թե տղաներն իզուր էլ կռվում են, քանի որ «ամեն ինչ արդեն ծախված է»:

*Հիմնականը, սաղ... հիմնականը՝ խաբալ են ժողովրդին, առաջինը ժողովրդին են խաբալ, երկրորդն էլ՝ էն վեր ասում ա՝ ծախված: Դե, պռոստը, հունց վեր մեջին խաբող մարդիկ են իլալ: Մեզ եկալ են ուրիշ պյան ներկայացրալ, եկալ ժողովրդին ուրիշ պյան ասալ, տենց, էլի, մեջներին պանիկա քիցալ, տրա հետի զորքին կեսը հետ ա նահանջալ, կեսը առաջ են քյացալ, զոհվալ, դե... հունց վեր շաղվալ են, էլի, ժողովուրդը, զորքը, դրա հետի էլի սենց կրվալ ենք:*

***Կամավորական, միջին տարիքի տղամարդ***

Նման խոսակցություններ տարածողների մեջ երբեմն նաև նշվում են ինչ-որ սպաներ, որոնք հայտնվել են ռազմաճակատի այս կամ այն հատվածում՝ իբրև թե ինչ-որ առաքելությամբ, և արագ անհետացել:

*Պատճառը էն ա էղել, որ էլի բարձրաստիճան սպաներ դիրքերով ֆռալուց տարածում էին էն նորությունը, ինչ որ իրանք ուզում էին, որ սաղ լսեին. էսի ծախած պատերազմ ա, մենք սաղս մահանալու ենք, ուղղակի անիմաստ ժամանակ ենք ձգում: Էտի էղել ա ամենաթեժ պահերին, որ իրանք փորձել են, որոշ չափով ստացվել ա իրանց մոտ:*

***Կամավորական, տղամարդ, 31 տարեկան***

Որպես դավաճանություն մեկնաբանվող մյուս վարքագիծը համարվում է խուճապ առաջացնող կամ սխալ գործողությունների մղող կեղծ լուրերի տարածումը: Ասենք, օրինակ, ինչ-որ եղանակներով տեղեկություն է տարածվել զորքի մեջ, թե, իբրև, ռազմաճակատի ինչ-որ հատվածում ադրբեջանցիների կողմից ճեղքում է իրականացվել, և որ նրանք անհամաչափ ուժերով շարժվում են այդ դիրքի ուղղությամբ, կամ որ՝ իմաստ չունի զորք ուղարկել ռազմաճակատի հատվածներից մեկը, քանի որ այն ադրբեջանցիներն արդեն գրավել են, ինչը, պարզվել է, սուտ է, և նմանատիպ այլ պատմություններ: Եղել են նաև դեպքեր, որ կեղծ կամ շեղող տեղեկատվության պատճառով զորքերը սխալ տեղաշարժեր են գործել և այլն:

> *Խուճապ կար. օրինակ՝ մեր մոտ տեղեկություն տարածվեց, թե ճեղքել են ինչ-որ երկու տեղից ու ընդամենը մի ժամից հետո կհասնեն էստեղ, ու ես ականատես եմ էղել, թե ինչպես է զորքը դիմում խուճապի. էտ տեսել եմ ես:*
>
> ***Պահեստազորային, տղամարդ, 29 տարեկան***

Նկատենք, որ դավադրության մեջ մեղադրվում են ինչպես իշխանությունները, այնպես էլ ընդդիմությունը: Երբեմն նույն դավաճանական արարքը ոմանք վերագրում կամ խոսքի տողատակում ակնարկում են ընդդիմությանը, երբեմն՝ ճիշտ հակառակը: Կան դեպքեր, երբ իշխանությանը ներկայացվող մեղադրանքը շատ ուղղակիորեն է արվում: Կան դեպքեր, երբ կարծիքը կասկածի ձևով է հայտնվում:

> *Էն կորուստները հաշվի առնելով, ինչ մենք տվել ենք, եթե ուրիշ իշխանություն լիներ, երևի թե ուրիշ կերպ կընթանար: Էս պատերազմը կամ շուտ կդադարեցվեր, էդքան զոհեր չէինք ունենա: Չեմ ուզում հավատալ, որ դավադրություն է եղել, ամեն դեպքում, բայց կան բաներ, որոնք դեպի էտ կողմ են տանում:*
>
> ***Պահեստազորային, միջին տարիքի տղամարդ***

Այս թեզի հիմնական բացատրությունն այն է, որ, իբրև, գործող իշխանությունները դավադրաբար տանուլ են տվել պատերազմը, որպեսզի հանձնեն առաջին պատերազմի ժամանակ Ադրբեջանից գրաված յոթ շրջանները և այդ միջոցով ազատվեն այդ բեռից: Իսկ պատերազմում պարտությունը նրանց անհրաժեշտ է եղել, որպեսզի հողերը հանձնելու պատասխանատվությունը ոչ թե իրենց վրա ընկնի, այլ՝ բանակի: Դավաճանության կասկածը երբեմն հասցեագրվում է ընդդիմադիր ուժերին:

*Հետո, խուճապային իրավիճակներ տարածողներ էլ լիքը կան: Քաղաքացիական շորերով եկած մարդիկ էին, էդ գյուղերից, էդ կողմերից էին էդ մարդիկ: Ծախած ա, բան... Սենց բաներ էին խոսում: Հարցնում էինք՝ խի՞ եք տենց ասում, ասում էին՝ բա չե՞ք տեսնում: Ասում էին՝ իրանք էդ եզրակացության են եկել՝ տեսնելով՝ ոնց ա գնում էդ կռիվը, ոչ թե նախապես իրանց ասված ա... Ես ենթադրում եմ, որ իրանք կոնկրետ հրահանգավորված են եղել: Թե ով ա եղել, խի ա արել՝ չգիտեմ: Չեմ կարծում՝ իշխանություններն էին անում: Բայց իրենք էլ էնքանով են մեղավոր, որ տենց դեպքեր կարային տեղի ունենային կռվի ժամանակ, զորքի մեջ. էդ նորմալ չի, էլի: Բայց հաստատ վստահ եմ՝ իշխանությունը չէր անում: Ավելի հակված եմ մտածեմ, որ՝ ընդդիմությունը: Բայց, իհարկե, իշխանություններն էլ նենց չի՝ իրանց լավ դրսևորեցին կռվի ժամանակ, բարդակի գագաթնակետն էր էս կռիվը:*

***Կամավորական, տղամարդ, 23 տարեկան***

Այս մեղադրանքում երկու հիմնական թեզ է առաջ քաշվում: Առաջինի համաձայն՝ նրանք դա արել են՝ մտնելով Ռուսաստանի հետ դավաճանական համաձայնության մեջ, քանի որ այս պատերազմում Ռուսաստանը, իր շահերից ելնելով, խոստացել էր Ալիևին՝ աջակցել նրան հաղթանակի հասնելու հարցում: Երկրորդ թեզն այն է, որ ընդդիմադիրները դա արել են, քանի որ ծրագրեր են ունեցել պատերազմում Հայաստանի պարտության հետևանքով վերադառնալու իշխանության և փրկելու իրենց հարստությունները, ինչը վտանգվել էր Նիկոլ Փաշինյանի վարչապետության օրոք: Այսինքն՝ ըստ այս թեզի՝ սա դիտվում է դավադրություն Նիկոլ Փաշինյանի դեմ, որն ինքնըստինքյան համարվում է նաև դավաճանություն Հայաստանի դեմ:

Այս պատմություններում իրողությունները երբեմն էլ կապվում են ոչ թե իշխանությունների կամ ընդդիմության հետ, այլ պարզապես բնութագրվում են իբրև պատերազմի դաշտից փախչողների կողմից իրենց փախուստը և վախկոտությունը արդարացնելու ձև:

*Էտ մարդիկ, ովքեր խուճապ էին տարածում, ինչի՞ էին տենց անում: Երևի թե իրանց փախուստը արդարացնելու: Ինձ թվում ա՝ տենց բան կա, չէ՞. դու եթե մենակ գնաս, քեզ կասեն՝ մենակ դու ես, բայց եթե քո հետ 10 հոգի գնա, արդեն ոնց որ քո ամոթը, էտ մեղքը բաժանվում ա 10 հոգում մեջ, չէ՞, էտ քո խայտառակությունը, որ դու փախար, երևի թե դրա համար: Էտի հոգեբանություն ա. հասարակ մարդը չի ուզում մենակ փախնի, ինքը մենակ դառնա դավաճան կամ խայտառակվի, երևի թե՝ որ ինչքան շատ մարդ տանի իրա հետ, էնքան ավելի լավ: Ոնց որ բաժանվում ա էտ ամեն ինչը մնացածի մեջ, երևի թե, տենց:*

***Պահեստազորի սպա, 43 տարեկան, տղամարդ***

*Մեր մոտ դաժը խոսակցություն գնաց՝ պատերազմը ծախված ա, էսի ուղղակի մեզի բերել են ըստեղ գլխաքանակ, սրա վերջը ոնց որ գծած ա՝ ոնց պետք ա լինի: Մարդիկ կային՝ հենց էտ սկզբունքով շարժվան, թողին գնացին: Կոնկրետ մարդկանց տեսակ կար, որ սպասում էին ինչ-որ խոսակցություն լինի, իրանք էտի հիմք համարեն, ու ֆսյո, թողեն, գնան տուն: Ըտեղից թողեն գնան ու ասեն՝ այ, սենց բանի համար եմ էկե, ոչ թե որ վախեցել եմ, փախել եմ, շատերը ըտենց հիմքով էին գալի, էտ հետո գալիս ես ըստե, նոր ես հասկանում, էլի՝ ինչի համար էին գալի մարդիկ: Նույն էտ մարդիկ, որ ասեցին՝ պատերազմը ծախված ա, թողին գնացին, ու տենց ինչքան մարդիկ են թողե-գնացե: Բայց էն, որ անկազմակերպ վիճակ էր, էտ ըտենց ա, ահավոր անկազմակերպ էր:*

***Պահեստազորային, տղամարդ, 28 տարեկան***

Եթե փորձենք ընդհանրացնել վերը շարադրվածը, ապա, ըստ գրանցված բանավոր պատմությունների, կարելի է առանձնացնել դավաճանության մասին արվող հետևյալ մեկնաբանությունները.

- ամեն ինչ նախօրոք պլանավորված է եղել այս իշխանությունների կողմից.
- ընդդիմադիրները ռուսների հետ պայմանավորված ամեն ինչ ծախել են, որ Նիկոլ Փաշինյանի վրա գցեն պարտության մեղքն ու նրան իշխանությունից հեռացնեն.
- պատերազմը ամեն մեկն իր կողմից «ծախել» է՝ թե՛ իշխանությունները և թե՛ ընդդիմությունը: Հիմա պարզապես մեկը մյուսին է դավաճան անվանում, որ մեղքն իրենից հեռացնի:

Դավաճանության թեման հայոց հայրենասիրական դիսկուրսում միշտ էլ եղել է առանցքային: Հնարավոր է, որ դա եղել է այն պատճառով, որ հայերը պարտություններ ու կորուստներ ավելի շատ են ունեցել, քան հաղթանակներ: Հնարավոր է, որ դավաճաններ գտնելու այդ մղումը եղել է պարտվողի բարդույթն ու մեղքի կոլեկտիվ զգացումը հաղթահարելու ձևերից մեկը: Սակայն ակնհայտ է նաև, որ դավաճանության միջոցով պարտությունը պատճառաբանելը շեղում է ուշադրությունը պարտության իրական պատճառները հասկանալուց: Հնարավոր է՝ դրանում եղել են և կան նույնիսկ շահագրգիռ կողմեր, որոնք զգուշանում են որպես պարտության մեղավորներ պիտակավորվելուց: Այս պատերազմում նույնպես, զինադադարի առաջին իսկ ժամերից, քաղաքական վերնախավերի մակարդակում սկսվեց պարտության մեղավորների և դավաճանների փնտրտուքը: Չի բացառվում նաև, որ պատերազմի մասնակիցների պատմություններում դավաճանության մասին կասկածներն առաջացել են վերնախավերի ձևավորված դիսկուրսի ազդեցության տակ, ավելի շատ որպես հետադարձ հայացք: Հակառակ դեպքում դժվար է նաև բացատրել, թե ինչու այդքան շատ դավաճանության հանդիպելով՝ այդ դավաճաններից ոչ մեկին տեղում որևէ մեկը չի որոշել պատժել, ոչ մեկը դավաճանության կասկածով որևէ մեկին չի բռնել տեղում, չի սաստել ու չի վտարել զորքից: Չէ՞ որ դավաճանները հայ ժողովրդի պատմության մեզ պատմվող պատումներում միշտ էլ պատժվել են շատ խիստ կերպով: Նրանց արարքը դիտվել է որպես վտանգ և ոտնձգություն՝ ուղղված կա՛մ տարածքային ամբողջականության, կա՛մ բարոյական կարգի (Moral order) խախտմանը, կա՛մ այդ երկուսին միաժամանակ, և արժանացել

շատ խիստ դատապարտման, ընդհուպ ֆիզիկական ոչնչացումն ու դարերով պախարակումը: Խնդիրն այն է, որ դավաճանության մասին պատմություններում որևէ մեկը չի բռնվել դավաճանական արարքի պահին, երբ փաստացի գործողություն է իրականացրել հօգուտ թշնամու: Դավաճանության մասին պատմությունները հիմնականում սկսեցին պատմվել անմիջապես պարտությանը հաջորդած ժամանակաշրջանում: Եվ այդ պատմությունները հնարավոր է՝ որոշ առումով ուղղված են պարտության զգացողությունը և մեղավորությունը ինչ-որ կերպ հաղթահարելուն: Սա կարող է դասվել պատերազմի մարդաբանության մեջ ուսումնասիրված սոցիալական վախի կամ պարտության մեղքի կոլեկտիվ զգացողության հաղթահարման այն մեխանիզմների շարքում, ըստ որի՝ մարդիկ իրենց բարդույթները հաղթահարելու համար քավության նոխազներ են փնտրում[23]:

Հետաքրքիր է, որ «քավության նոխազի» մեխանիզմը շատ ավելի ցցուն արտահայտվեց պատերազմին հաջորդած ներքաղաքական խմորումների դաշտում, երբ իրար դեմ պայքարող քաղաքական էլիտաներում երկուստեք նկատվեց հասարակությունում կուտակված կոլեկտիվ վախի շահագործման վարքագիծ: Կողմերից երկուսն էլ փորձեցին գործիքավորել հասարակությունում առկա կոլեկտիվ վախը՝ մեկը մյուսի դեմ խաղարկելով «քավության նոխազի» կամ «դավաճանի» գործիքակազմը: Սա վախի մարդաբանության մեջ բավականին լավ ուսումնասիրված երևույթ է: Համաձայն դրա՝ քաղաքական վերնախավերից նա կարող է ստանալ հակառակորդին հաղթելու լուրջ առավելություն, ում հաջողվում է գործիքավորել պատերազմից հետո ձևավորված կոլեկտիվ վախը: Պատերազմի ավարտից անմիջապես հետո ընդդիմադիր ուժերի կողմից փորձ արվեց գեներացնել դավաճանության դիսկուրսը պատերազմը տանուլ տված վարչապետի անձի շուրջ: Սակայն դա հաջողություն չունեցավ, քանի որ գործող վարչապետը ավելի հաջող կերպով կարողացավ օգտագործել նույն գործիքը՝ դավաճանության համար մեղադրելով իր հակառակորդներին և կապելով այդ դիսկուրսը «նախկինների վերադարձի» վախին: Պետք է ենթադրել, որ ընդդիմադիրների անհաջողության պատճառներից մեկն էլ այն էր, որ պատերազմի մասնակիցների միջավայրում դավաճանության դիսկուրսը

23 Boscoboinik A. 2014. Risks and Fears from an Anthropological Viewpoint. Pp. 16-17.

մի քանի ճյուղավորում ուներ, որոնց համաձայն՝ դավաճանության կողմ էին համարվում թե՛ գործող իշխանությունը, թե՛ գործող ընդդիմությունը: Ուշագրավ է, որ պատերազմի մասնակիցների խոսքում հաճախ կարելի է հանդիպել այնպիսի մեկնաբանությունների, որոնց համաձայն՝ պատերազմին մասնակցության իրենց որոշումը պայմանավորված է եղել միասնականության ու համախմբվածության ոգին պահպանելու գաղափարով: Սա շատ ուշագրավ է, քանի որ, իրոք, այս պատերազմի օրերին մարդկանց վարքագծում առաջին նկատելի հատկանիշը համախմբվածության բավականին բարձր աստիճանն էր, եթե չհաշվենք ընդդիմադիր ուժերի՝ հասարակական ընկալման տեսանկյունից անհասկանալի պահվածքը: Նկատենք նաև, որ պատերազմի ժամանակ հայկական բարոյական կարգը նույնպես հենվում է միասնականության ու համերաշխության գաղափարների վրա, և ամեն ինչ՝ այս կամ այն կերպ ուղղված այդ բարոյական կարգի խախտմանը, կարող է մեկնաբանվել իբրև դավաճանություն: Այսինքն՝ դավաճան համարվելու համար պարտադիր չէ, որ մարդ անցնի թշնամու ճամբար և ակնհայտորեն գործի նրա կողմից: Բավական է, որ նրա գործողություններում նկատելի լինեն համախմբվածության ու միասնականության դեմ ուղղված գործողություններ, որպեսզի դա համարվի դավաճանություն: Այս առումով, դեռևս պատերազմի ընթացքում ընդդիմության գործունեության շուրջ հասարակությունում ձևավորվում էր բացասական վերաբերմունք այն տեսանկյունից, որ դա ընկալվում էր որպես միասնականությունն ու համերաշխության մթնոլորտը խաթարող երևույթ: Հարկ է նկատել, որ այս երևույթը *դավաճանության մարդաբանության* ուսումնասիրություններում շատ հասարակություններին բնորոշ և համընդհանուր երևույթ է համարվում:

## 3.4. Պատերազմի ազդեցությունը հայրենասիրության ընկալումների վրա և արժեքների վերանայման խնդիրը

Ինչպես ցույց են տալիս գրանցված բանավոր պատմությունները, պատերազմի հետևանքով հետաքրքիր փոփոխությունների են ենթարկվել նաև հայրենասիրության մասին պատկերացումներն ու ընկալումները:

Ընդհանրապես, այս պատերազմը նախորդից տարբերվում է նաև նրանով, որ սերնդափոխության ընթացքում երիտասարդության մեջ ձևավորվել են բավականին տարբեր հայացքներ ունեցող խմբեր: Դրանց մի մասի մեջ տեղի են ունեցել ընկալումների և հայրենասիրական պատկերացումների մասին նկատելի փոփոխություններ: Եթե առաջին պատերազմում բանակը կազմված էր հիմնականում կամավորականներից, և նրանց բոլորին առաջնորդում էր Ղարաբաղյան շարժման ժամանակ արթնացած ազգային-ազատագրական պայքարի գաղափարն ու դրա հետ կապված հայրենասիրական ոգին, ապա այս պատերազմում իրավիճակն այլ էր: Նոր սերունդը, որն ինքը չէր մասնակցել առաջին պատերազմին և հողեր ազատագրողի կարգավիճակում չէր զգում իրեն, ինչ-որ առումով հեռացել էր այդ արժեհամակարգից:

*Մեր սերունդը մի քիչ ուրիշ սերունդ ա: Մեծամասնությունը մտածում ա՝ ինչ կռիվ, ինչ հողի մասին կռիվ, դարը փոխվել ա: Բայց էն մարդիկ... Իրանց սաղ կյանքը կառուցված ա եղել էդ գաղափարախոսության շուրջ: Ու իրանք ջանք են ներդրել, քանի տարի պատերազմի մեջ են եղել, էդքան զրկանքների մեջ են եղել և այլն: Վերջը հաղթել են էդ կռիվը, ու հիմա կորցնում են Ղարաբաղը: Այսինքն՝ իրանց գիտակից կյանքի ամենակարևոր գաղափարներից մեկը փլվում ա, բայց էդ գաղափարը իմ կյանքի ամենակարևոր գաղափարներից չի եղել: Մենք առաջին պատերազմի հաղթանակի կրողը չենք եղել, դրա համար էլ մեզ համար էս պարտությունը էդքան ծանր չի, ինչքան իրանց համար, ես իրանց լրիվ հասկանում եմ: Կորստի զգացում ինչքան էլ ունենաս, մեկ ա՝ անհամեմատելի ա: Մեր բանակն էլ, սաղ ազգն էլ, փորձեց, չէ՞, ամեն ինչ անի, որ հաղթի: Ես էլ գնացել, կռվել եմ, հիմա չի ստացվել, ասում ես՝ ինչ անեմ ես, ինձնից հասանելիքը արել եմ, վերջ: Իսկ էն մարդիկ էլ մտածում են՝ ինչ արեցիր որ, գլխավոր արժեքներից մեկը չկա, ինչի համար մենք կյանք ենք տվել, ջանք ենք դրել:*

***Կամավորական, տղամարդ, 24 տարեկան***

Անկախությունից ի վեր չնայած իշխող քաղաքական վերնախավերն իրականացնում էին որոշակի ազգայնական ու ռազմահայրենասիրական քարոզչություն, սակայն դա չափազանց վերացարկված է, կապված

առավելապես հողի ու ազգի, այլ ոչ՝ պետության ու դրանում ապրող մարդկանց հետ: Այսինքն՝ այդ հայրենասիրությունը չէր արտահայտվում հասարակության և պետության հանդեպ քաղաքական վերնախավերի հոգատար և սրտացավ վերաբերմունքով, չէր ստացել կոնկրետ, մարդկանց կյանքում նկատելի գործողությունների տեսք և մնացել էր «կենացային» հռետորաբանության շրջագծում: Ինչպես կարելի է եզրակացնել գրանցված նյութերից, երիտասարդության մեջ նույնպես հայրենասիրությունը կապվում էր ավելի շատ ազգային ինքնության համար խորհրդանշական դեր ունեցող վերացական գաղափարների և երևույթների հետ, քան՝ պետական իրողությունների: Մարդիկ չէին տեսնում, որ այդ հայրենասիրական քարոզի արդյունքը ուժեղ ու անվտանգ պետության, լավ զինված ու մարտունակ բանակի ձևավորմանն ուղղված քաղաքականություններն են: Պատերազմը ցնցեց հասարակությանը, երբ պատերազմական իրողությունները բացահայտեցին վերացական քարոզչության անպիտանությունը: Պատերազմը շատերի ընկալումներն ու մոտեցումներն է փոխել հայրենասիրության հանդեպ:

*Փոխվել ա նրանով, որ կան պռոստը խոսացողներ, որոնք ասում են՝ հայրենասեր են, իսկ կան մարդիկ, որոնք անում են. այ, դրանով ա փոխվել:Կարող ա՝ իրանք քիչ գիտեն, կարող ա՝ իրանք շատ բարակ մտածելակերպ ունեն, բայց իրանք անում են, իսկ ով որ սպասում ես իրանից ավելի բարձր բաներ, իրանք ոչ մի բան չեն անում, վախում են դաժը գնային ընտեղ:*

***Ժամկետային զինծառայող, 20 տարեկան***

Մասնակիցների դատողություններից ելնելով՝ կարելի է ասել, որ շատերի մեջ հայրենասիրության վերացարկված ու պաթետիկ պատկերացումները փոխարինվել են իրատեսական մոտեցումներով: Սխալ կլինի ասել, որ պատերազմը կոտրել է երիտասարդների հայրենասիրական ոգին: Խնդիրն այն է, որ մարդիկ հասկացել են, որ նման հայրենասիրական հռետորաբանությունը կապ չունի իրական հայրենասիրության հետ, ինչի տակ հասկացվում են իրատեսական գործողություններ, որոնք ուղղված կլինեն պետության ու հասարակության անվտանգությանը, կյանքի որակական փոփոխությանը:

Պատերազմը ոմանց մեջ առաջացրեց հիասթափություն և Հայաստանը լքելու ցանկություն: Բայց նրանցից շատերի մեջ, ովքեր մասնակցել են պատերազմին, ձևավորվեց հայրենասիրության նոր մոտեցում, համաձայն որի՝ հայրենասիրությունը պետք է արտացոլվի գործողությունների մեջ, այլ ոչ՝ խոսքերի:

*Հայրենասիրության մասին պատկերացումներս փոխվալ են էնքանավ, որ մարդկանց 90 տոկոսը... 90 չէ... մարդկանց մեծ մասը, ասենք, չի պատկերացրալ, թե տա հունց ա ինում՝ էդ հայրենասիրությունը, ու, ասենք, հենց պատերազմից են սկսալ հասկանալ՝ ո՞րն ա հայրենասիրությունը, իսկ ո՞րը չի հայրենասիրություն: Պատերազմից հետո հայրենասիրությունը արդեն խոսքերավ չէր, արդեն գործերավ էր, գործավ էտքանը ապացուցես, ոչ թե խոսքերավ: Մինչև էտ, որ կենացներ էինք ասում, բաժակաճառեր, չգիտեմ ինչեր, տա արդեն մենք մեր գործավ պիտի ապացուցենք, որ մենք հայրենասեր ենք թե՝ չէ:*

***Կամավորական, միջին տարիքի տղամարդ***

Հետաքրքիր է, որ պատերազմը մասնակիցների պատմություններում որոշակիացրել է նաև հայրենասեր կոչվելու կամ համարվելու սկզբունքը: Պատերազմ անցածներից ոմանք շատ ավելի իրատեսորեն են սկսել մեկնաբանել պատերազմին մարդու մասնակցության ու հայրենասիրության կապը: Պարտադիր չէ, որ մարդ պատերազմին մասնակցի վերացական հայրենասիրական մղումով:

*Հայրենասիրությունը ինձ թվում էր՝ երգեր լսելն ա. հա, լուրջ եմ ասում, բանաստեղծությունները անգիր սովորելն ա, գրքերը կարդալն ա, որ իմանաս, թե քո պատմության մեջ երբ ինչ ա էղել, ու մեկ էլ անընդհատ ասելն ա, որ դու միշտ պատրաստ ես: Հիմա իմ համար հայրենասիրությունը թեկուզ գետնին աղբ չգցելն ա: Իմ համար հիմա հայրենասիրությունը էն ա, որ Երևանում նստած՝ դու չխոսես, օրինակ, Սյունիքի մասին: Մի անգամ գնաս, էտ Սյունիքի արանքով անցնես, հետո նոր դրա մասին խոսես: Իմ համար շատ ժամանակ ոչ թե մեծ-մեծ խոսալն ա, այլ գործ անելն ա:*

***Կամավորական, աղջիկ, 22 տարեկան***

Պատերազմի մասնակցության որոշումը երբեմն պարզապես եղել է պահի, իսկ որոշների համար էլ՝ այն մտքի թելադրանքը, որ թիկունքում իր ընտանիքն է, ու ինքը իր հողի վրա ընտանիքի ապրելու ու կյանքի իրավունքն է պաշտպանում, այլ ոչ՝ լայն առումով հայրենիքի պաշտպանությանն ուղղված գործողություն:

*Եթե անկեղծ ասեմ, ես հայրենասեր չեմ, հայրենասերը Մոնթեն ա, չգիտեմ: Երբ որ պետությունը ընտանիքից առաջ ա ընկած: Իմ մոտ, ես նշեցի, առաջինը ես մտածում էի՝ ընտանիքս, որովհետև էս հողի վրա ա, հետո նոր էս հողը, որովհետև ընտանիքս էս հողի վրա ա: Բայց, իմ համար, հայրենասերը երևի մտածում ա՝ էս հողը պահեմ, որ հետո նոր ընտանիքս, այսինքն՝ ճիշտ ա, որ սենց մի քիչ հեռվից ես նայում, երկու դեպքում էլ էրկուսս էլ նույն ձև ենք մտածում, էրկուսս էլ հողն ենք պաշտպանում, բայց իմ համար ամենաառաջի բանը, որ ես մտածում եմ՝ ընտանիքիս բան չըլնի, ոչ թե հայրենիքիս բան չըլնի: Այ, հենց էտ ա հայրենասիրությունը, որ հայրենիքիս բան չընլի, ոչ թե իմ պես մտածում ա՝ ընտանիքիս:*

***Պայմանագրային, տղամարդ, 24 տարեկան***

Ուշագրավ են նաև հայրենասիրության դիսկուրսի շրջագծում արտահայտված այն մեկնաբանությունները, որոնցում առանձնացվում է ազգայնամոլությունը հայրենասիրության հետ չնույնականացնելու կարևորությունը: Այստեղ հիմնական միտքն այն է, որ հայրենասեր լինելու համար պարտադիր չէ թշնամուդ հանդեպ ատելություն քարոզելը, ինչպես դա անում են ադրբեջանցիները: Ավելի կարևոր է համարվում հայրենիքը սիրելն ու նրա զարգացմանը նվիրված գործունեություն ծավալելը:

*Օրինակ՝ տեսեք. Ադրբեջանի տեսանկյունից եթե նայենք, իրանք հայատյացություն են հա քարոզում երեխաների մեջ, իրենց սերունդների մեջ, այսինքն՝ շատ արտահայտված ա, շատ վառ է արտահայտված: Մենք դրա փոխարեն ոչ թե թուրքատյացություն պետք է քարոզենք, այլ ավելի շատ էնպես անենք, որ մեր երիտասարդները սկսեն գնահատել հայրենիքը ու սիրեն հայրենիքը: Եթե դու հասկացար քո հայրենիքի արժեքը, դու*

*սիրեցիր, գնահատեցիր, այ, դրանից արդեն էն մնացածը՝ թուրքից պաշտպանելը, սրանից, նրանից... Ոչ թե կոնկրետ ինչ-որ ազգային ուղղությամբ տանենք, հա, ազգային ատելության, այլ, առհասարակ, սկսենք, ենթադրենք, բնությունը չաղտոտելուց, հա, աղբ չգցելուց, երկիրը խնամելուց, տնտեսությունը զարգացնելուց, բանակից չգողանալուց մինչև, ասենք, մեր ազգային արժեքներին ծանոթանալը:*

***Ժամկետային զինծառայող, տղամարդ, 20 տարեկան***

Հետաքրքիր է, որ հաճախ են հանդիպում կարծիքներ, համաձայն որոնց՝ պատերազմին մասնակցությունից հետո իրենց վերաբերմունքը Հայաստանի հանդեպ փոխվել է, և խորացել է Հայաստանը չլքելու մասին որոշումը: Որոշները նույնիսկ նշում են, որ եթե նախկինում ունեցել են Հայաստանից ուրիշ երկիր գնալու մտքեր, ապա պատերազմից հետո միանշանակ որոշել են չհեռանալ Հայաստանից:

*Միանշանակ փոխվել են, ավելի խորացել են ու ավելի ամրապնդվել, նրանով, որ հայրենիքը դրսից չեն սիրում, հայրենիքը դրսից չեն պահում, հայրենիքը պահում են ներսից... Դրսի հրավերներ, դրսի գումար, լավ աշխարհ... չի ձգում ինձ: Եթե դա էր իմ նպատակը, ուրեմն ես պտի էսքան չանեի, եթե արել եմ էսքան իմ հայրենիքի համար, կռվել եմ, մնացել եմ, չգիտեմ, մի լումա ունեցել եմ իմ հայրենիքի համար, ուրեմն պտի մնամ մինչև վերջ, պտի պահեմ իմ հայրենիքը, որ ես հետագայում կարանամ իմ սերունդին, իմ երեխային, չգիտեմ, իմ հաջորդին թողեմ ինչ-որ մի բան:*

***Կամավորական, միջին տարիքի տղամարդ***

Ուշագրավ է, որ Հայաստանը չլքելու մասին որոշման մեկնաբանություններում կարևորվում է այն, որ պատերազմում իրենց կյանքը վտանգելով, կյանքի ու մահվան սահմանագծին ունեցած ապրումներից հետո, իրենց մոտ խորացել է կյանքի շարունակականության ձգտումը և պատասխանատվության զգացումը: Շատերի համար Հայաստանում մնալն ու ապրելը ենթադրում են նաև մասնակցել Հայաստանի կյանքի փոփոխություններին:

*Ես էկել եմ, մի ամիս հետո ամուսնացել եմ: Հետո ընկերս ամուսնացավ, ու մեր ամուսնությունը նենց չէր, որ մեծ հարսանիք անեինք, չգիտեմ եսիմ ինչեր: Մենք պետք ա մնանք ստեղ ու գրավիչ սարքենք, մեր պես մարդիկ պետք ա գրավիչ սարքեն: Լավ, մի քիչ էդ մասով չխորանամ, բայց՝ մնալ:*

***Կամավորական, տղամարդ, 26 տարեկան***

Այսինքն՝ կարելի է ասել, որ պատերազմի մասնակիցների միջավայրում նկատելի են հայրենասիրական դիսկուրսի մեկնաբանությունների որոշակի փոփոխություններ: Դրանցում նկատելի են հայրենասիրության նոր ձևի՝ քաղաքացիական հայրենասիրության սաղմեր[24], որոնք կարծեք թե միտված են խախտելու նախկինում տարածված՝ բացառապես էթնիկական հայրենասիրական դիսկուրսի միապաղաղությունը: Այսինքն՝ պատերազմի մասնակիցներից շատերի մեջ, որոնք հատկապես որոշել են մնալ ու ապրել Հայաստանում, ձևավորվել է մի մտայնություն, որ եթե իրենք իրենց կյանքն են վտանգել, ապա իրենք պետք է պաշտպանեն նաև երկրի ապագայի մասին որոշումներ կայացնելուն մասնակցության իրենց իրավունքը: Այն պարզ պատճառով, որ, պատկերավոր ասած, «զոհասեղանին» առաջին հերթին նորից իրենց՝ երիտասարդության կյանքն է դրվելու, ու ոչ ոք իրավունք չունի որոշելու իրենց փոխարեն, թե արդյոք ինքն իր կյանքը պետք է ապրի՞, թե՞ զոհի հանուն հայրենիքի մասին ինչ-որ մեկի վերամբարձ պատկերացումներին:

*Բայց մենք տեսանք ճգնաժամը, երբ որ պատերազմը նոր ավարտված՝ քաղաքական ուժերը սկսեցին բզկտել միմյանց, ու շատ, շատ տգեղ էր նայվում բանակից: Էտի շատ է զայրացնում, էլի, որ դու զինվոր ես, տեսել ես, պայքարում ես, իսկ էդտեղ կան 30-35 տարեկան իբր թե հայրենասեր տղաներ: Գնա զինկոմի դուռը ջարդի, ասա՝ ինձ տարեք, որ իմ հայրենիքի վրա են հարձակվել, էկել, ձևական՝ Ազգային ժողովի շենքի դուռ է ջարդում. ինչի՞ համար… Էսօր շատ մարդիկ, երևի թե, առաջին հնարավորության դեպքում կլքեն երկիրը: Էտ էլ փոխվեց իմ մոտ, էտ էլ ինչ-որ մտքեր կային դուրս գալու, բայց արդեն չեմ ուզում:*

24 Calhoun, J. Craig. 1997. Nationalism. University of Minnesota Press. Pp. 23–29.

*Հիմա զգում եմ, որ ես պիտի փոխեմ իմ երկիրը, ես պիտի լավացնեմ: Եթե ուզեցար, անհնարին ոչինչ չի լինում, թեկուզ երկիրը զարգացնելը: Ուղղակի պետք է հասկանանք, թե ինչ ենք ուզում, երիտասարդությանը կամ, ասենք, հասարակության այլ շերտերը միավորենք կոնկրետ նպատակներին հասնելու համար:*

***Ժամկետային զինծառայող, 20 տարեկան, Շիրակի մարզ***

## 3.5. Արժեքների վերանայման խնդիրը

Պատերազմի մասնակիցների հետ հարցազրույցների նյութերը թույլ են տալիս ասել, որ բանակը պատերազմի ժամանակ ունեցել է արժեքների անբավարարություն, ինչը զինվորներին հնարավորություն չի տվել հաղթահարել մահվան և այլ տիպի վախերը, միավորվել մեծ կամ բարձր գաղափարների շուրջ:

*Մենք էսօր օր օրի կորցնում ենք մեր հայրենիքը: Հարցը նրանում ա, չգիտեմ, միախմբված չենք, համախմբված չենք, ինչ-որ կապող բան, արժեհամակարգային, էսօր չունենք: Եթե էսօր դուք կանգնեք ու, ասենք, 10 երիտասարդի հարցնեք՝ ինչի՞ համար ա հայ ազգը ապրում, ինչի՞ համար ես դու ապրում, հաստատ պատասխանները տարբեր կլինեն: Այսինքն՝ մենք չունենք համախմբող նպատակներ: Գոնե պետք ա մտածել՝ պահել մեր փոքրիկ երկիրը արդեն Ղարաբաղյան 44-օրյա պատերազմից հետո, արդեն դա էլ է հարցականի տակ:*

***Ժամկետային զինծառայող, տղամարդ, 20 տարեկան***

Պատերազմի ընթացքում տարբեր տեսակի մարդկանց կողմից բանակի բարոյահոգեբանական ոգին ու մարտունակությունը գցելու նպատակով քարոզչություն իրականացնելը, ռազմական ու քաղաքական վերնախավերի միջև շահերի բախումները հանգեցրել էին նրան, որ ***հայկական կողմի համար պատերազմը հստակ ձևակերպված նպատակ չուներ***: Նույնիսկ Շուշիի նման խորհրդանշական կարևորության քաղաքի գրավման հետ

կապված պատմություններում կան բազմաթիվ կասկածներ այն մասին, որ Շուշին հանձնվել է դավաճանության հետևանքով։ Թե ովքեր են կոնկրետ այդ դավաճանները՝ մարդիկ չեն խոսում հստակ։ Բայց ակնարկներ կան և՛ գործող իշխանությունների, և՛ ընդդիմադիր կուսակցությունների, և՛ այսպես կոչված «ղարաբաղյան գեներալների» մասին։ Այսինքն՝ սա ցույց է տալիս, որ ռազմաճակատում գտնվողները բախվել են հայաստանյան ու ղարաբաղյան քաղաքական ու ռազմական վերնախավերի շահերի բախման հետ կապված ասեկոսեների ու չեն ունեցել այնպիսի արժեքներ, որոնք կչեզոքացնեին այդ խոսակցությունների հնարավոր ազդեցությունը և կհամախմբեին մարդկանց պատերազմի դաշտում։

Կարելի է եզրակացնել, որ մի կողմից՝ պատերազմի մասնակիցների միջավայրում նման ասեկոսեները, մյուս կողմից՝ «կենացային հայրենասիրության» դիմազրկումը և, վերջապես, պատերազմի դաժան իրողություններին առնչվելը շատերին հանգեցրել են գործող վերնախավերի և նրանց խոսքի ու հանրահռչակած գաղափարների հանդեպ վստահության անկման ու խորքային արժեզրկման։

Պատերազմը մարդկանց կանգնեցրեց նաև մեկ այլ խորքային տրավմատիկ իրավիճակի առջև։ Խոսքը երիտասարդ կյանքերի կորստի տրավման է, որը թե՛ զինվորները և թե՛ նրանց ծնողները շատ ավելի մեծ ու ծանր կորուստ են համարում, քան հողի կորուստը։

Այս պատերազմը մասնակիցներից շատերի մեջ ձևավորել է նաև կարծիք, որ քաղաքական վերնախավերը՝ թե՛ նախկին և թե՛ ներկա իշխանությունների տեսքով, պատրաստ են զոհաբերելու երիտասարդ տղաների կյանքերը հանուն իրենց քաղաքական շահերի իրականացման։ Նրանցից շատերը մտածում են, որ իշխանության համար պայքարում այս մարդիկ պատրաստ են եղել զոհաբերել հողերը և իրենց՝ զինվորների կյանքերը։ Սա իրականության շուրջ դառը մտորումների հետևանքով առաջացած շատ լուրջ ցնցում է։

Շատերի մեջ խնդիր է առաջացել քննադատորեն մոտենալու, վերագնահատելու առկա ապրելակերպը, դրանք պայմանավորող արժեքները և ապագան փոխելու նպատակով վերաիմաստավորելու ներկան ու անցյալը։

> *Եթե ընդհանուր, տնտեսագիտորեն նայում ես, մենք ծախսում ենք ավելի շատ սպառողական բաների՝ լյուքս մեքենաների, տների կամ չգիտեմ*

*ինչի վրա: Եթե էդ վերլուծությունը կատարվի, օրինակ, կտեսնենք, որ մեր ազգն ավելի շատ քյաբաբ ա կերել, խորոված ու տներ ա ուզեցել սարքի, պարտքի տակ ա մնացել, քան ուզեցել ա ներդրում անի կրթության մեջ, մեծ բաներ մտածի ու, չգիտեմ, ֆինանսը ծախսի իրա անվտանգության վրա: Այ, հենց էդ էլ ա արժեքներից գալիս:*

***Կամավորական, հետևակային, տղամարդ, 27 տարեկան***

Գրանցված պատմությունների համաձայն՝ զինվորներից շատերը պատերազմի ընթացքում ունեցել են շատ խորքային մեկ այլ ցնցում: Խոսքը վերաբերում է գոյաբանական այն ծայրահեղ իրավիճակներին, որոնցում նրանք հայտնվել են: Շատերի պատմությամբ՝ ***իրենք պատերազմի ժամանակ կյանքի ու մահվան եզրագծին են հայտնվել, և դա կյանքի ու մահվան միջակայքի զգալիորեն կրճատվելու զգացողություն է առաջացրել***: Ովքեր պատերազմի ժամանակ մահ են տեսել կամ զգացել են մահը մոտիկից, նշում են, որ պատերազմի հետևանքով իրենց մեջ առաջացած հիմնական փոփոխություններից մեկը մահվան իրական լինելու մասին մտքի առաջանալն է: Նախկինում՝ մինչև պատերազմը, մահը այդ տարիքի համար շատ ավելի վերացական, իրենցից հեռու մի բան է թվացել: Պատերազմը մահվան զգացողությունը մոտեցրել է իրենց: Մահը դարձել է շատ իրական մի բան, որը կարող է գալ մի ակնթարթում:

*Կյանքի ու մահվան մասին պատկերացումները միանշանակ փոխվում են: Երբ որ դու ապրում ես մի շրջան, երբ որ կյանքը ու մահը իրար կողք կողքի քայլում են քո մոտ, դու ակամայից հետ ես վերադառնում քո ապրած կյանք, տեսնում ես էն բացերը: Էն, ինչ պտի չանեիր կամ պտի անեիր, կամ էն, ինչ կուզենայիր կրկնվեր: Այ, կյանքի քաղցրությունը դու ըտե ես հասկանում, դու սկսում ես հասկանալ էն ամեն մի վայրկյանի առավելությունը, որ դու ապրել ես: Իսկ մահվան զգացումը դու զգում ես էն ժամանակ, երբ որ դու գիտակցում ես, որ հաջորդ վայրկյանին կարաս չլնես, կարող ա չլնես, ու էտ անորոշությունը քեզ տանջում ա, որովհետև չլնես ու իմանաս՝ քո հետոն ինչ ա լինելու, այսինքն՝ քեզ կգտնեն, կհանձնեն հողին թե չէ, չլնել ու չիմանալ, թե ինչ ա լինելու, էտ ուրիշ հարց ա:*

***Կամավորական, տղամարդ, 26 տարեկան***

Մահվան մոտիկության նման ծայրահեղ ծանր ապրումների նկարագրություններ կարելի է հանդիպել շատ պատմություններում: Սակայն կարևոր է նկատել, որ այդ ծանր ապրումի արդյունքը եղել է կյանքի իմաստի վերագնահատումը և դրա արժևորման խորքային փոփոխությունը:

> *Չգիտեմ, էն, որ ամեն պահը մի հատ կյանք ա հիմի: Իմ կյանքը լրիվ փոխվել ա, ոնց որ ամեն վայրկյանը՝ թե՛ լավ, թե՛ վատ, մեկ ա, լավ աչքով ես նայում, որտև ըստեղի ամենավատ օրը, համեմատած պատերազմական իրավիճակի հետ, ամենալավ օրն ա: Ու ըտե, որ վիրավորվել եմ, եկել եմ հոսպիտալ, իմ կյանքը լրիվ փոխվել ա, էլի, ամեն ինչին ուրիշ աչքով ես սկսում նայել, էն՝ որ կաս, բայց կապ չունի ինչ կարգավիճակում, կարևորը՝ կաս: Նու, կարելի ա ասել՝ չեմ պատկերացրել, էլի, մեռնելը տենց, թե պատկերացրել եմ՝ տենց շատ քիչ ու հանգիստ, բայց որ գալի հասնում ա էդ պահը… Հա, բայց որ արդեն հասնում ա էդ պահը, արդեն հասկանում ես՝ ինչ բան ա ապրելը, ապրելը ինչ թանկ բան ա:*
>
> ***Ժամկետային զինծառայող, տղամարդ, 20 տարեկան, Էջմիածին***

> *Դե, սկսեցի, սկսեցի ավելի գնահատել կյանքը, տենց՝ ամեն մի վայրկյանը: Տենց փորձում եմ ճիշտ ապրել, սխալներ թույլ չտալ, չկրկնել իմ անցած սխալները, տենց, կատարելագործվեմ:*
>
> ***Ժամկետային զինծառայող, տղամարդ, 20 տարեկան, Երևան***

Կյանքի իմաստի վերարժևորումը շատերի դեպքում ազդել է ապագայի մասին պատկերացումների վրա: Առաջնային արժեքի նշանակություն է ստացել այն ամենը, ինչ կարող է երաշխավորել կյանքը, և այն ամենը, ինչ կարող է վտանգ լինել իրենց կյանքին, մերժելի է: Այս տեսանկյունից՝ ***շատերի մեջ առաջացել է պատերազմի հանդեպ մերժողական և խաղաղության կարևորման արժեքային հստակ կողմնորոշում***: Հատկանշական է, որ եթե նախկինում պատերազմի մասին խոսելը համարվում էր հայրենասիրության ու խիզախության նշան, իսկ խաղաղության մասին խոսելը համարյա թե հավասարվում

էր դավաճանության, ապա պատերազմի հետևանքով ստացվել է այնպես, որ խաղաղության դիսկուրսի կրողներ են դարձել պատերազմի մասնակիցներից շատերը: Խնդիրն այստեղ պարզապես այն է, որ նրանց ձայնը լսելի չէ, սակայն խիստ ազդեցիկ դեր ունի հասարակական կողմնորոշումների ներկայիս գործընթացների ու միտումների վրա:

*Ապագան, իմ մտածելով, չգիտեմ, չեմ կարա ասեմ ոնց կլինի, բայց ես ցանկանում էի, որ ապագայի հետ կապված պատերազմ էլ չլինի, հիմնականում լինի խաղաղություն: Ու էտի գա մեր արդեն պետությունից, որ պետությունը կարա էտ քայլերը գործարկի, ձեռնարկի, ոչ մի տիպի կռիվ չլինի, խաղաղություն լինի մեր երկրում:*

***Ժամկետային զինծառայող, հրետանավոր, տղամարդ, 20 տարեկան***

# Եզրակացություններ

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ այս հետազոտության ընթացքում գրանցված պատմություններում առանձնանում են մի քանի խումբ թեմաներ: Դրանք վերաբերում են.

- պատերազմի նկարագրությանը.
- զորքի ինքնանկարագրությանը.
- պատերազմի ընթացքում ունեցած ապրումներին ու դրանց բարոյահոգեբանական առումներին:

***Պատերազմի նկարագրությանը*** նվիրված պատմություններում մասնակիցները առանձնացնում են պատերազմը բնութագրող հետևյալ հատկանիշները.

- *Պատերազմի անսպասելիությունը*: Բանակում զինվորները չնայած ընդհանուր առմամբ հասկանում էին, որ իրավիճակը լարված է, և կարող են լինել բախումներ, սակայն պատերազմի կանխատեսման և հարձակման դեպքում դիմակայման սցենարների մշակման, դրանցից բխող համապատասխան մարտական պատրաստվածության վիճակի նախապատրաստմանն ուղղված գործողություններ զորքում չեն եղել: Ադրբեջանի հարձակումը բոլորը նկարագրում են որպես խիստ անսպասելի, որին առաջին արձագանքը եղել է խուճապահար, քաոտիկ:
- *Պատերազմի անկազմակերպվածությունը*: Խոսքը ոչ միայն զորքի անկազմակերպվածության մասին է, այլ նաև՝ հենց պատերազմի: Հայկական կողմի հրամանատարությունը չի կարողացել կազմակերպված, ծրագրված պատերազմ վարել: Զինվորներից շատերը նշում են, որ ռազմաճակատի իրենց հատվածներում չեն ունեցել պաշտպանական կամ հարձակողական գործողությունների մշակված ծրագրեր, և մասնակիցները պատերազմը նկարագրում են որպես խիստ անկազմակերպ, որտեղ շատերը չեն իմացել, թե ինչ խնդիր է դրված զորքի առջև, բացի, իհարկե, հակառակորդի հարձակողական գործողություններին հախուռն արձագանքից և ինքնապաշտպանական մարտերից:

- *Պատերազմի գոյապահպանական բնույթը՝ թե՛ անձնական և թե՛ խմբային տեսանկյուններից:* Պատերազմի դաշտում զինվորներից շատերի հիմնական նպատակը եղել է ոչ այնքան ինչ-որ մարտական խնդրի լուծումը, որքան՝ պարզապես կենդանի մնալը: Շատ նկարագրություններում պատերազմը մեկնաբանվում է որպես մի իրավիճակ, երբ ադրբեջանական կողմը անընդհատ հարձակվում է ու հարվածների տակ պահում հայկական զորքին, իսկ հայ զինվորները մի կերպ պաշտպանվելով՝ պարզապես փորձում են կենդանի մնալ:
- *Պատերազմում մարդ-տեխնոլոգիաներ առճակատումն ու դրա անհամաչափությունը՝ որպես ամենաբնութագրական հատկանիշ:* Այդ անհամաչափությունն առաջացրել է գոյաբանական ճգնաժամի զգացողություն, որը երբեմն արտահայտվել է մարդկային գործոնի զրոյացման, անիմաստության ու ծայրահեղ անզորության զգացումներով: Այս անհամաչափությունը երբեմն առաջացրել է նաև մահվան դատապարտվածության վախ ու խուճապ, որը դրսևորվել է պատերազմի դաշտից զինվորների փախուստի դրսևորումներով:
- *Պատերազմի խիստ ինտենսիվ կամ «խիտ» բնույթը*: Ադրբեջանական կողմը պահպանել է ռմբակոծությունների և հարձակողական գործողությունների բավականին մեծ ինտենսիվությունը: Ինտենսիվ են եղել նաև հրետակոծությունների քանակն ու անօդաչուների միջոցով իրականացվող հարձակողական գործողությունները: Այս ինտենսիվությունը կրկնապատկել է զինվորների՝ վերը նկարագրված խնդիրները՝ անզորություն, սեփական ուժերի նկատմամբ վստահության կորուստ, դատապարտվածության զգացում:
- *Պատերազմի անմարդկային բնույթը*: Այս ձևակերպումն ուշագրավ է նրանով, որ չնայած պատերազմը կոլեկտիվ սպանությանն ուղղված խմբային և ինքնին հակահումանիստական գործողություն է, բայց այն նույնպես ունի դաժանության ինչ-որ ընկալելի սահմաններ, որոնք այս պատերազմի ժամանակ ծայրահեղորեն խախտվել են:



Դիագրամ 1. Պատերազմի նկարագրություն. քարտեզագրում

## Զորքի ինքնանկարագրության առանձնահատկությունները

- Համարյա բոլոր մասնակիցների պատմություններում զորքի ինքնանկարագրության մեջ ժամկետային զինծառայողները տարբերակվում են պայմանագրայիններից, կամավորականներից և պահեստազորայիններից:
- Բոլոր նկարագրություններում ժամկետային զինծառայողները նկարագրվում են որպես ամենից պատրաստված և կազմակերպված մարտիկներ, որոնք առավել հաջողությամբ են կարողացել հաղթահարել պատերազմի ժամանակ առաջացող վախերը, եղել են խիզախ, գիտակից և իրենց վրա են վերցրել հակառակորդին դիմակայելու և մարտնչելու հիմնական ծանրությունը:
- Կարելի է ասել, որ պատերազմի հիմնական ծանրությունը հայկական

կողմից ընկել է ժամկետային զինծառայողների վրա, իսկ մնացած զորքերն օժանդակ դերակատարում են ունեցել:

- Պայմանագրային զինծառայողների թվում առանձնացվում է երկու խումբ: Առաջինում նկարագրվում են նրանք, ովքեր ապրելով բանակային այս կամ այն զորամասի մերձակա բնակավայրում՝ անցել են այնտեղ աշխատանքի պարզապես գումար վաստակելու նպատակով և չունեն առանձնակի պրոֆեսիոնալ ու մարտական պատրաստվածություն: Պայմանագրայինների երկրորդ խմբի մեջ առանձնացվում են հատուկ զինվորական պատրաստվածություն ունեցող, զինվորական գործում մասնագիտական հմտությունների տիրապետող զինվորականները, որոնք պատերազմի ժամանակ կարևոր դերակատարում են ունեցել և լրջորեն նպաստել են ժամկետային զինծառայողների և, ընդհանուր առմամբ, հայկական բանակի մարտունակությանն ու պաշտպանունակությանը:
- Կամավորականներն ու պահեստազորայինները նկարագրվում են որպես զորքի առավել խոցելի հատվածներ: Դրական են գնահատվում այն կամավորականները, որոնք քիչ թե շատ տիրապետել են զենքի տարբեր տեսակների գործադրմանը, ունեցել են բարոյահոգեբանական որոշակի պատրաստվածություն և պատերազմի դաշտում կարողացել են պատշաճ կերպով մասնակցել մարտական գործողությունների իրականացմանը: Կամավորականների մի զգալի հատված էլ նկարագրվում է բացասական կողմերով: Դրանք հիմնականում նրանք են, ովքեր կամավորագրվել են՝ առանց համարժեք պատկերացում ունենալու պատերազմի մասին և, հայտնվելով մարտական գործողությունների կիզակետում, խուճապի են մատնվել ու դիմել փախուստի: Կամավորականների այս նկարագիրը կարելի է տարածել նաև պահեստազորայինների նկարագրի վրա: Հիմնական տարբերությունն այն է, որ խուճապի մատնվողներն ու փախուստի դիմողներն այս խմբից ավելի շատ են եղել, քան կամավորականների խմբերից:
- Հայկական բանակի նկարագրության մեջ հատկապես բացասական կողմերից է համարվում *համակարգի* բացակայությունը: Բացի պատերազմի անկազմակերպվածությունից՝ խիստ անկազմակերպ է նկարագրվում նաև զորքի վիճակը: Այդ պատճառով զորքի տարբեր

տեսակների ինտեգրումը միմյանց չի իրականացվել բավականաչափ արդյունավետ ու կազմակերպված եղանակով, ինչի հետևանքով պահեստազորայիններն ու կամավորականները հաճախ հայտնվել են «զորքից դուրս վիճակում»:

- Ժամկետային զինծառայողների վարքագծային տարբերությունը զորքի մնացած հատվածներից բացատրվում է հիմնականում այն հանգամանքով, որ *նրանք գործել են որպես **համակարգ***, որտեղ զինվորներն իմացել են իրենց տեղն ու գործառույթը, իսկ սպաներն իրականացրել են իրենց դերակատարումը:
- Պահեստազորայինների գլխավոր թերություններից մեկը եղել է պրոֆեսիոնալ սպայակազմի քանակական ու որակական մակարդակի անբավարարությունը: Պահեստազորային սպաներից շատերը, որոնք կցվել են պահեստազորայինների ջոկատներին, շատ դեպքերում չեն ունեցել մարտական պատրաստվածության և մասնագիտական հմտությունների անհրաժեշտ մակարդակ:
- Ընդհանրապես, զորքն ունեցել է պրոֆեսիոնալ բարձր պատրաստվածության սպայակազմի անբավարարություն:
- Պահեստազորայինների մարտական պատրաստվածության ցածր որակների պատճառը համարվում է պատերազմից առաջ նախապատրաստական հավաքների իրականացման ոչ պատշաճ մակարդակը, ինչի հետևանքով պահեստազորայինները ռազմաճակատ մեկնելուց առաջ բավարար մարտական ու բարոյահոգեբանական պատրաստվածություն չեն ստացել:
- Հայկական բանակի նկարագրության մեջ բավական մեծ տեղ է տրվում ադրբեջանականի հետ համեմատություններին: Ըստ այդպիսի համեմատական բնութագրերի՝ հայկական բանակը նկարագրվում է հետամնաց, վատ կազմակերպված, վատ զինված, տեխնոլոգիապես հին ու բարոյահոգեբանական տեսանկյունից թույլ մոտիվացված:
- Գրանցված պատմություններում ինքնանկարագրության մեջ հիմնական ընդհանրական բնութագիրը, չնայած նախորդ կետում բերված նկարագրությանը, այն է, որ թեև հայկական բանակը վատ էր զինված, անկազմակերպ էր և զինտեխնիկայի ու կառավարման տեխնոլոգիաների տեսանկյունից հետամնաց, սակայն զինվորները, հատկապես՝ ժամկետայինները, լավն էին, մարտական բարձր

ոգով, խելացի, իրավիճակներում արագ կողմնորոշվող, քաջ ու լավ կռվողներ: Այսինքն՝ որպես անհատներ՝ զինվորները գերազանցում էին ադրբեջանցիներին, սակայն որպես բանակ՝ հայկական բանակը զիջում էր: Այդ պատճառով բնութագրական բանաձևումներից մեկն այն է, որ «պատերազմում հայ զինվորները չեն պարտվել, բանակն է պարտվել» կամ «չնայած հայկական բանակը պարտվել է, բայց հայ զինվորը հաղթել է»:

- Կան նաև մեկնաբանություններ, որոնց համաձայն էլ՝ ոչ թե բանակն է պարտվել պատերազմը, այլ՝ քաղաքական վերնախավերը: Այս մեկնաբանության մեջ նկատի ունեն այն, որ բանակը կռվել է ոչ միայն իր ուժերի առավելագույն ներդրումով, այլև նույնիսկ ուժերից ավելի բարձր, քան կարելի էր: Սակայն թե՛ նախկին և թե՛ ներկա իշխանությունների ապաշնորհության հետևանքով բանակը չի ունեցել կառավարման անհրաժեշտ մակարդակ, բարձրագույն հրամանատարական որակյալ անձնակազմ, ժամանակակից զենք ու զինամթերք և դիվանագիտական աջակցություն: Բանակի մարտունակության ու պատերազմում պարտության գլխավոր պատճառներից են համարվում նաև քաղաքական վերնախավերի երկպառակությունները, պետական ու ազգային շահերի ստորադասումը խմբային ու կուսակցական շահերին, այսպես կոչված «գեներալիտետի» միջավայրում պառակտվածությունը, նույնիսկ պատերազմի պայմաններում պառակտվածության խորացումը, բանակի ներսում կազմալուծման տանող քարոզչության տարածվածությունը և այլն:




Դիագրամ 2. Զորքի ինքնանկարագրություն՝ քարտեզագրում

## Պատերազմի հետ կապված հիմնական ապրումներն ու բարոյահոգեբանական խնդիրները

- Պատերազմի հիմնական ապրումը, ըստ մասնակիցների պատմությունների, եղել է մահվան վախը: Վախը պատերազմներին բնորոշ երևույթ է, սակայն պատերազմի մարդաբանության և ռազմական հոգեբանության մեջ առանձնացվում են դրա հաղթահարման մի շարք մեխանիզմներ: Առավել գործուն են համարվում մահվան վախի հաղթահարման *գոյաբանական* և *պրոֆեսիոնալ* մեխանիզմները:

Հետազոտությունը հիմք է տալիս ասելու, որ վախի գործոնը հատկապես մեծ է եղել այն դեպքերում, երբ թույլ են գործել զինվորականների այդ մեխանիզմները:

- Մահվան զգացողության անմիջականությունը և սրությունը շատ զինվորների մեջ առաջացրել է կյանքի ու մահվան միջակայքի չափից դուրս կրճատման զգացողության, ինչն անբնական է երիտասարդ տարիքի համար, երբ մահը շատ հեռու է թվում մարդուց: Այս գոյաբանական ճգնաժամային ապրումը շատերի դեպքում ազդել է կյանքի հանդեպ վերաբերմունքի փոփոխության վրա: Շատերը նշում են, որ իրենք ավելի շատ են սկսել սիրել կյանքը և գնահատել կյանքի ամեն մի րոպեն: Կյանքի կարևորումը ազդել է երիտասարդների արժեքային ընկալումների վրա, մասնավորապես, շատերի մեջ նկատելի է մարդուն որպես արժեք առաջնայնորեն կարևորելու գիտակցության ձևավորումը:
- Արժեքաբանական այս փոփոխությունը ազդել է նաև պատերազմի և խաղաղության մասին ընկալումների վրա: Շատերն իրենց պատմություններում խոսում են, որ անձամբ իրենք ծայրաստիճան կարևորում են խաղաղությունը: Պատերազմի հավանականությունը դիտվում է որպես մահվան նոր սպառնալիք՝ ուղղված հենց իրենց կյանքին:
- Մասնակիցներից շատերի պատմություններում կան նաև հերոսականության խնդրի վերաբերյալ մեկնաբանություններ: Շատերի կարծիքով՝ հասարակությունում պատերազմի բոլոր մասնակիցների համատարած հերոսականացումը անընդունելի է: Հերոսականացման արժանի գործողությունները հիմնականում կապվում են մահվան վախի հաղթահարման և հանուն զինակիցների կամ հայրենիքի գաղափարի ինքնազոհության պատրաստակամության հետ:
- Պատերազմը ազդել է նաև հայրենասիրության մասին պատկերացումների վրա: Գրանցված պատմություններում հաճախ են հանդիպում խոսքով ու գործով հայրենասիրության դրսևորումների հակադրման դեպքեր: Առաջնային կարևորություն է տրվում հայրենիքը ոչ թե խոսքով, այլ գործնականորեն սիրելուն:
- Հետաքրքիր է նաև այն, որ հայրենասիրությունը կապվում է ոչ թե վերացական գաղափարների, այլ պետության հետ,

մասնավորապես, պետության ամրապնդման, զարգացման ու կյանքի պայմանների բարելավման հետ:

- Պատերազմում մահվան վտանգը սեփական մարմնի վրա զգալը և ամբողջ պատասխանատվությունը իրենց սերնդի վրա թողնելը շատ երիտասարդների մեջ առաջացրել է *պետության ապագայի հանդեպ պատասխանատվությունը ստանձնելու իրավունքի գիտակցություն*: Հատկանշական է, որ պատասխանատվության այս գիտակցումը շատերի դեպքում կապվում է «կենացային հայրենասիրության» փոխարեն պետության հանդեպ խնամքով ու հոգատարությամբ վերաբերվելու գործնական հայրենասիրության հետ: Այսինքն՝ կարելի է ենթադրել, որ գործ ունենք պատերազմի մասնակից երիտասարդ սերնդի միջավայրում հայրենասիրության վերացական ձևից *քաղաքացիական հայրենասիրության* անցման հետ:




Դիագրամ 3. Պատերազմի հետ կապված հիմնական ապրումներն ու բարոյահոգեբանական խնդիրները. քարտեզագրում

